

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վիայ գրական Մինոք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ
Տապե

8 (47, 922)

4-29

ՏՐԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Արագ գրական Մինոք
Խայտառութիւն և Խայլութիւն
Տասնիւն

ମେଲି

۱۱۶۲



ՀԱՅՈՒՏՏԻՐԱԾ
ԵՐԵՎԱՆ
1962

Հայաստանը, հայ ժողովուրդը և վրաց ու հայ ազգերի բարեկամական փոխարարերությունները մշտապես գտնվել են վրաց գրական մտքի կենտրոնում։ Սույն գրքում հեղինակը, ուսումնասիրելով ինչպես հրատարակված, այնպես էլ վրաց արխիվային ազրյուրների մի զգակի մասը, ցույց է տալիս, թե վրաց գրական միտքը որքան բարձր է գնահատել հայ ժողովրդին, ինչպիսի մեծ նշանակություն է տվել հայ և վրաց ազգերի դարավոր բարեկամության ամրապնդմանը, և որքան սիրով են գրողները գովերդի Հայաստանը և նրա լքնաղ բնությունը։

16809

ТИГРАН АРШАМОВИЧ КАРАПЕТЯН
ГРУЗИНСКАЯ ЛИТЕРАТУРНАЯ МЫСЛЬ
ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ
(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1962

Մի մեծ բան կա՝ էդ ազգերի լավ հարաբերությունն է, որ հիմնված է դարերի պատմության վրա։

Հովհ. Թումանյան

Բացի քաղաքական ու տնտեսական գործոններից, որոնք միացնում են ժողովուրդներին, գոյություն ունի նաև մի անխուսափելի գործոն—արվեստն է ընդհանուրապես և գրականությունը մասնավորապես։

Ավ. Խսանակյան

Լայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը բազմադարյան պատմություն ունի։ Այդ հարեվան և հոգեհարազատ ժողովուրդների պատմական միենույն ճակատագիրը, մոտիկ հարևանությունը և ապրելակերպի նմանությունները նրանց մեջ պատվաստել են միմյանց նկատմամբ սիրո և հարգանքի ամենաազնիվ զգացմունքներ։ Դարեր շարունակ երկու դրկից ժողովուրդներն իրենց պետական անկախությունը պաշտպանելու համար հարկադրված են եղել հարատկ ու համառ պայքար մղել հաճախակի իրենց երկրները ներխուժող ու

տարերկրյա գավթիչների դեմ Ազատագրական այդ պայքարի ընթացքում, Հոկտեմբերյան ռուսացիայի բոցերում էլ թրծվել ու կոփվել է հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը, ու որքան հին են նրանց եղբայրական փոխհարաբերությունները, նույնքան հին է և դրականության մեջ նրա գոտած արտացոլման պատմությունը: Մասնավորապես, վրաց դրականության փալլուն հատկանիշներից մեկը եղել է նաև հայ և վրաց ժողովուրդների բարեկամության գաղափարի պոհտական մարմնավորումը: Վրաց պատմիչներից ե գրողներից շատերն են իրենց ստեղծագործություններում ոչեշունչ գովերգել հայ և վրաց ժողովուրդների դարավոր անշահախնդիր բարեկամությունը, հայ ժողովրդին, հիանալի տողեր են նվիրել Հայաստանին ու նրա բնությանը:

1

Երկու դրկից ժողովուրդների բարեկամական փոխհարաբերությունների մասին բազմաթիվ փաստեր է արձանագրել պատմագրությունը: Հայ և վրաց պատմիչները փոխադարձաբար հարուստ տեղեկություններ են հայտնել հարեւան երկրում տեղի ունեցող պատմական անցքերի մասին: Մասնավորապես, վրաց պատմիչների երկասիրություն-

ներում հաճախ ենք հանդիպում նկարագրությունների՝ նվիրված Հայաստանին և հայությանը, հայ և վրաց ժողովուրդների բարեկամական փոխհարաբերություններին:

Վրաստանի և վրաց ժողովրդի մասին հայ պատմական և գեղարվեստական գրականության մեջ տեղ գտած տեղեկություններին ծանոթ ընթերցողին անպայման հետաքրքրական կլինի մի հարց, թի արդյոք ի՞նչ են ասել, գոել վրացիները Հայաստանի և նրա ժողովրդի մասին: Այս առումով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում վրաց տարեգրությունը՝ «Քարթլիս ցխովրերա» («Պատմություն վրաց») մատյանը, որ բաղկացած է վրաց պատմիչների գործերից: «Քարթլիս ցխովրերայում» զետեղված նյութը բազմակողմանի է: Վրաց հեղինակները ուշադրության արժանի պատմական, աշխարհագրական, բանաօիրական, հնագիտական-արվեստագիտական, ազգագրական, լեզվագիտական և այլ բնույթի տեղեկություններ են հայտնում Հայաստանի և հայերի մասին: Կինոժապավենի նման իրար հաջորդող իրադարձությունները, որոնց հաղորդակից է անում մեզ «Քարթլիս ցխովրերան», մի անգամ ևս ընդգծում են հայ և վրաց ժողովուրդների բախտակից լինելու փաստը: Բազմաթիվ պատմական դեագրանցույց են տալիս երկու հարեւան ժողովուրդների հոգեհա-

բազատությունը, դժվարին օրերին մեկը մյուսին
օգնության հասնելը և այլն:

Վրաց պատմիչների հաղորդած տեղեկությունները սկսվում են անհիշելի ժամանակներից՝ հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը սիմվոլացնող Հառուի և Քարթլուի եղբայրներ լինելու լեզենդից, որ գալիս է XI դարի վրաց պատմիչ Լեռնատի Մրովելուց և հասնում մինչև անցյալ դարի 20-ական թվականները:

Ուշագրավ է «Քարթլիս ցխովրեայի» Մարիամ թագուհու վարիանտում տեղ դատած թորգոմյանների տոհմին վերաբերող լեզենդը, որ սերունդներին է հասել Լեռնատի Մրովելու միջոցով։ Դիտության մեջ բազմազան կարծիքներ են հայտնվել թորգոմյաններ կամ, ինչպես տարածված է՝ Հառու և Քարթլու լեզենդի աղբյուրների մասին։ Սակայն և ոչ ոք ուշագրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ վերոհիշյալ լեզենդի սկզբնաղբյուրը կարող է լինել և ժողովուրդը։ Անդրկովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայ և վրաց ժողովուրդների դարեր տեսող սերտ գոյակցությունը, պատմական միևնույն ճակատագիրը հնարավոր է, որ հիմք էն դարձել թորգոմյանների լեզենդի ստեղծմանը։ Նէ այնպես, ինչպես, ասենք, Մովսես Խորենացու միջոցով մնալ են հասել ժողովրդական բանահյուսության մի շարք հուշարձաններ, այդպես էլ հե-

տագա սերունդներին է հասել Հառուի և Քարթլուսի մասին ժողովրդի կողմից հորինված լեզենդը։

Ըստ այդ լեզենդի՝ կովկասյան ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ու վրացիների նախահայրերը՝ Հառուն և Քարթլուը եղբայրներ են եղել։ Նախ և առաջ հիշատակենք այսպիս, — զրել է Մրովելին, — որ հայոց (սոմեխների) և վրաց (քարթլիների), ունաց և մովականաց, հերաց և լեզեների (լեկաց), եղերաց (մեգրելների) և կովկասյաց՝ սոցա բոլորի հայրը մի էր՝ Թորգոմ (Թորգոմու) կուշցյալը¹։ Այնուհետև մի շարք տեղեկություններ հայտնելուց հետո վրաց պատմիչը շարունակում է. «Բայց Թորգոմի որդվոց մեջ ութը հայտնի դարձան իրեն քաջարի ու անվանի հսկաներ, որոնց անուններն են. առաջինը կոչվում էր Հայկ (Հառու), երկրորդը՝ Քարթլու...» և այլն։

Այստեղ ուշագրավ է Լեռնատի Մրովելու առանձնահատուկ վերաբերմունքը դեպի Հառուը։ Վրաց պատմիչը Թորգոմի որդիներից հատկապես առանձնացնում է հայ ժողովորդին մարմնավորող Հառուն։ Ծննթերցողը Մրովելու տողերի մեջ տեսնում է առանձնակի սեր ու զերմություն, մի բան, որ հեղինակը չի ցուցաբերում Հառուի մյուս եղբայրների նկատմամբ։ «Բայց Հայկը (Հառու) ամենից հսկան էր, որովհետև նրա նման ոչ ոք չի եղել երբեք

1 Ա. Մելիքսեբ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Հ. Ա., Երևան, 1934, էջ 143։

ոչ լո՞նեղեղից առաջ և ոչ էլ հետո՝ հասակով (բայով), ուժով և արդիոթյամբ»^{1:}

Հեռնտի Մրովելու երկասիրության մեջ իր արտացոլումն է գտել կովկասյան ժողովուրդների բախտակից լինելու, նրանց կողմից օտարի լուծը միաժամանակ ու միատեղ կրելու փաստը. «Իսկ ութներյան (Թորգոմի ութ որդիները—Տ. Կ.) միասին էին ի ծառայության ներքոթ հսկայի, որն առաջին արքան էր ամբողջ աշխարհում»^{2:}

Հետաքրքրական է այն հանդամանքը, որ վրաց պատմիչը օտարի տիրապետությունից ազատագրվելու, այդ տիրապետության դեմ պայքարելու մտահղացումը վերադրում է Հառուին. Ըստ լեգենդի՝ Հառուն է խորհուրդ տալիս իր եղրայրներին՝ հրաժարվել ներքոթին հարկատու լինելու պարտականությունից և թոթափել ստրկության լուծը. «...մի քանի տարի անց Հայկը (Հառու) նույն յոթ հսկաներին, ժողովից նրանց և ասաց. «Թարձրյալ աստվածը տվեց մեզ ուժ և բազմություն մեր ժողովը դրդի. այժմ օգնականությամբ արարիշ աստուծուինենք այլևս ոչ ոքի ստրուկ և ոչ ոքի շծառայենք: Բացի արարիշ աստծուց»: Յոթն հսկաները՝ հավատալու սալով սրան՝ հաստատեցին նրա (Հայկի) մտա-

1 Լ. Մելիքսեբ-Մելիկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Քայերի մասին, Հ. Ա., Երևան, 1934, էջ 143:

2 Նույն տեղում, էջ 145:

դրությունը, և ուրացան ներրոթին՝ հարկ շտալ և նրան այլևս»^{1:}

Ներրոթը շաշտվելով իրեն հպատակ ժողովուրդների ընդվզման հետ, զորք է հավաքում և արշավում Թորգոմյանների վրա: Ներրոթին դիմադրելու համար Հառուը դիմում է իր եղրայրներին՝ միահամուռ ուժերով դեմ ենել ընդդեմ օտարազդի բռնագրավիշների. «Մրանց բոլորին ժողովնեց Հայկը (Հառուը) և կանգնեց Մասիսի ստորոտում: Եվ իրը մոտեցավ ներքոթը Ատրպատական աշխարհին և կանգնեց այստեղ, վաթսուն հսկա և՝ նրանց հետ՝ հզոր զորավարներ ուղարկեց Թորգոմյաններին կարդի կանչելու համար: Հենց որ ներքոթի զորավարները մոտեցան, Հայկի (Հառուի) յոթ հսկաները մեծ զորքով դիմավորեցին նրանց, իսկ Հայկը (Հառուը) հզորագույն զորքով կանգնեց ետեից՝ թիկունքում»^{2:} Եվ ահա, տեղի է ունենում դեմ դիմաց կանգնած զորքերի ընդհարումը: Լեռնաի Մրովելին էպիկական շնչով է նկարագրում այդ կոխվը, որը սիմվոլացնում է կովկասյան ժողովուրդների, այդ թվում հայ և վրաց ժողովուրդների դարերի ընթացքում տեղող անձնուրաց պայքարն ընդդեմ օտարերկրյա զավթիշների. «Նրանց միջն տեղի ունեցավ սաստիկ պայքար, որ նմանվում էր օդի սաստիկու-

1 Լ. Մելիքսեբ-Մելիկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Քայերի մասին, Հ. Ա., 1934, էջ 145:

2 Նույն տեղում, էջ 146:

թյանը, քանի որ նրանց ոտների փոշին նման էր կուտակված ամպերին, նրանց զրահի փայլատակումը՝ երկների կայծակին, նրանց բերանի ձայնը՝ որոտման ձայնին, նրանց նետերի բազմությունն ու քարերի ձգումը՝ խիս կարկուտին, և նրանց արյունահոսությունը՝ կարկուտի առուին:

Իսկ Հայկը (Հառուր) նույն հսկաների ետևիցն էր կանգնած, քաջաներում էր նրանց և մխիթարում ահարկու ձայնով, որ կայծակի ճայթյունին էր նման»¹:

Հառուի գլխավորությամբ վարած մարտը պատկվում է հաղթանակով: Սակայն ներրոթը մեծ զորքով նոր արշավանք է կազմակերպում Հառուի և նրա եղրայրների վրա: Հառուի զորքը թշնամու համեմատությամբ քիչ է լինում: Այդ իսկ պատճեռով «նա (Հառուր) ամրացավ Մասիսի դերրուկներում: Ներրոթը ցածից մոտեցավ, և էր նա ոտից մինչև գլուխ դինված երկաթով և պղնձով: Նա ելալ մի սարի վրա խոսելու Հայկի (Հառուի) հետ և պահանջեց նրանից հնադանդություն, որպեսզի իր կամքով զա նրա մոտ: Իսկ Հայկը (Հառուր) դիմեց իր եղբայրներին, «Ամրացրեք թիկունքս, որ ես զնամ ընդդեմ ներրոթիս: Եվ նա դնաց և գեմ առ գեմ մոտեցավ ներրոթին, ձղեց նետը, որն անցնելով պղնձե տախտակով՝ խոցեց կուրծքը և դուրս եկավ

1 Ա. Մելիքսեր-Թելի, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի ժաման, Հ. Ա., 1934, էջ 146:

քամակից: Ապա Ներրոթն ընկավ, և նրա բանակը փախուստի դիմեց»²:

Այստեղ, տվյալ դեպքում, ուշագրավ է ոչ թե նկարադրվող իրադարձությունների իրական կամ ոչ իրական լինելը, այլ վրաց պատմիչի մոտեցումը հայ ժողովրդին մարմնավորող Հառուին: Լիոնտի Մրովելին, ինչպես տեսնում ենք, բոլոր զիաքերում առաջնությունը տալիս է Հառուին: Դա պատահական չէ, այլ հայ ժողովրդի նկատմամբ վրաց ժողովրդի և նրա պատմիչի տածած սիրո յուրահատուկ արտացոլումն է վրաց հին զրականության մեջ: Իսկ թե որքան իրական փաստեր են հաղորդում վրաց պատմիչները Հայաստանի: և նրա ժողովրդի մասին, անհնարին է բոլորը հիշատակել, դա մեղ շատ հեռուն կտաներ: «Քարթլիս ցիտովիրա» մատյանը բազմաթիվ, մեկը մյուսին հաջորդող պատմական տեղեկություններ է հայտնում հայ և վրաց ժողովուրդների բարեկամության, նըրանց խաղաղ գոյակցության, տանեսական և կուլտուրական համագործակցության, Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Կանգ առնենք այդ տեղեկություններից մեկ-երկու առավել բնորոշների վրա:

Հայտնի է, որ բացի վերոհիշյալ փոխհարաբերություններից հայերի և վրացիների մեջ գոյու-

1 Ա. Մելիքսեր-Թելի, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի ժաման, Հ. Ա., էջ 146:

թյուն է՝ ունեցել նաև գիտական համագործակցություն։ Այսպիս, օրինակ՝ ըստ Անտոն Ի կաթողիկոսի հայտնած տեղեկության, պարզվում է, որ սկսած Վախթանգ V թագավորից Վրաստանում առաջնահերթ խնդիր է եղել վրաց լեզվի քերականության ստեղծման հարցը, որով զրադշել են շատերը, բայց հաջողություն չեն գտել։ Այս գործում ցանկացել է իր ուժերը փորձել նաև Անտոն Ի կաթողիկոսը, բայց չի համարձակվել։ Այդ մտորումներով է տարված եղել կաթողիկոսը, երբ «...միքանի տարուց հետո,— գրում է նա, — ես հանդիպեցի մի քահանայի, որ աղջով էրմանյան, այսինքըն՝ հառայան էր (Հայ—Տ. Կ.), աղջանունով Ղայթագաշվիլի Փիլիպպի»¹։ Եվ ահա նրանք իրարհետ խորհրդակցելով մտադրվում են սկսել քերականության ստեղծման գործը, սակայն «ինձ զըսպում էր այն, — շարունակում է կաթողիկոսը, — որ իմ միտքը քերականագիտական կրթություն չէր ստացել, իսկ այն Փիլիպպի քահանան խիստ հմուտ էր քերականական արվեստին, և ապավինելով աստվածային իմաստությանը, թեյմուրազ թագավորի և նրա որդու հրամանով ձեռնարկեցինք այս գործը»։

Նախ Փիլիպպին ծանոթացրեց ինձ, թե ի՞նչ է մասունք բանին և ապա քերականության սահման-

ների, տառերի, վանկերի, բառերի էության հետ, հետագայում մասունք բանիի ու նրանց հատկությունների, այսինքն՝ պարագաների հետ, և ասոր ճանարար մտցրեց ինձ իմաստության դուռն...

Սակայն ես և այն Փիլիպպին միայն հայերեն քերականությամբ չէինք բավականանում, այլ կարդում էինք և լատիներեն քերականություններ ևս... և, հայերենի հետ համեմատելով, նմանապիս թարգմանում էինք, իսկ համաձայնությունը (սինտաքսիս), որ է շարահյուսություն... նույնպես բացատրեց մեզ այն գովելի անձնավորությունը, մեզ կարեկից բարեկամ Փիլիպպին...»¹:

Այս հատվածը, որ մենք մեջ քերեցինք համարյաթե ամբողջությամբ, ցույց է տալիս նախ, որ Անտոն Ի կաթողիկոսը իր «Քերականություն» աշխատասիրությունը զրել է հայ քահանա Փիլիպպի Ղայթագաշվիլու օգնությամբ և երկրորդ, որ «Քերականության» հեղինակին լատիներեն լեզվի հետ միասին ավելի քան հիմք է ծառայել նաև հայոց լեզվի քերականությունը։ Այս բավականաշատի հետաքրքիր փաստը, բացի այլևայլ հանդամանքներից, ցույց է տալիս նաև, որ հայ և վրաց պատմիշները, գրողները, գիտնականները ու միայն օգտվել են մեկը մյուսից, այլև երբեմն գործեական, անձնական օգնություն են ցույց տվել միմյանց՝ պատ-

¹ Լ. Մելիքօսք-Թեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. Գ., Երևան, 1955, էջ 100։

մական այս կամ այն հուշարձանի ստեղծման գործում:

Վրաց պատմիչների հաղորդած տեղեկությունները մի անգամ ևս ընդգծում են հայ և վրաց ժողովուրդների բախտակից լինելու ճշմարտությունը: Բազմաթիվ փաստեր ցույց են տալիս երկու հարեան ժողովուրդների դժվարին օրերին մեկը մյուսին օգնության գալը: Քիչ շեն եղել դեպքեր, երբ վրաստանը ապաստան է հանդիսացել թշնամուց հալածված հայության համար: Օրինակ, Պապունա Օրբելիանին հաղորդում է, որ «...Փանա խանն ուժ էր գործադրել Սղնախի մելիքների նկատմամբ. հայերն այլևս չեին կարողացել դիմանալ. մի ձորի մելիք Յուսուֆ-Բեկը հարյուր ծուխից բաղկացած խիզաններով տեղահան էր եղել ու, դալով վրաստան, տեղ խնդրել վրաց թագավորներից»¹: Վրացիները նրանց ընդուռաջ էին դնացել և սղնախցիներին բնակեցրել թրիխիում:

Վրաց գրականության բազմաթիվ էջեր արտացոլում են Վրաստան զայթած հայերի ապրելակերպը, նրանց եղբայրական փոխարարերությունները վրացիների հետ: Հատկապես ուշագրավ են այն փաստերը, որ Վրաստանի հայությունը վրաց ժողովրդի հետ ոտքի է ելել, երբ Վրաստանի անկախությանը սպառնացել է թշնամին: Վրաստանի

¹ Ա. Մելիքսեր-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Հ. Գ., էջ 144:

հայության և վրաց ժողովրդի բարեկամությունը մարմնավորող հետաքրքիր պատմական դեպք է հաղորդել էզնատաշվիլին, որը կրկնում է նաև Վախուշտի թագրատիոնը: XVII դարի առաջին տասնամյակում, երբ թաթարները ավերելիս են եղել վրաստանը, պատահում է այսպիսի դեպք. թշնամու բանակը գալիս հասնում է Գորու մոտ գտնվող Դուս գյուղը: «Երբ որ նրանք հասնում էին այդտեղ, — գորում է էզնատաշվիլին, — գորեցի մի տերտեր, մին-միննակ, ոչինչ չգտալով դալիս էր Գորուց: Եվ այս ու այն կողմ նայելով՝ հանկարծ նկատեց, որ Գորու-և նրա դաշտերը զորքով է լցված: Ապա տերտերը զիսի ընկավ, որ նրանք վրացիներ չեին: Տերտերը զգաց, որ նրանք անօրեններ են և երկիրն ավերողներ: Եվ այն տերտերը շտապ վերագրածավ և վագեց Գորու ուղղությամբ, անցավ Կորի կամուրջը և հանեց կամքջի բոլոր տախտակները, որ և ջուրը թափեց, և կամուրջը քանդեց»²: Երբ թշնամին հասնում է կամրջին և տեսնում այն քանդված, հրաժարվում է Գորու վրա հարձակվելու մըտքից և իր զորքերը ետ քաշում: Այսպիսով հայ տերտերը Գորին փրկում է արյունահղությունից և ավերածություններից: Ի դեպ նշենք, որ այս փաստը, որպես երկու հարեւան ժողովուրդների եղբայ-

² Ա. Մելիքսեր-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Հ. Գ., էջ 19:

բության արտահայտություն, ժամանակին իր հոդվածներից մեկում օգտագործել է անցյալ զարդվաց հայտնի գործիչ, մանկավարժ և գրող Յակոբ Գոգերաշվիլին, որի մասին կիսուվի հետագայում:

Վրաց գրական հին հուշարձաններից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում իուանն Բագրատիոնի «Կամմասրա» երկը: Հեղինակն այստեղ իր դասընկերոջ շրջել է տալիս զանազան վայրեր: Այդ շրջագայություններից մեկի ժամանակ Բագրատիոնի դասընկերը Հաղպատի վանքում հանդիպում է Սայաթ-Նովային, և նրանց միջև զրոյց է տեղի ունենում: Գրքում զրի առնված այդ զրոյցը ուշագրավ է այն առումով, որ ցուց է տալիս, թե ինչպես հայ մեծ բանաստեղծ-երգիչը վանքում եղած ժամանակ ողբացել է իր աշխարհիկ կյանքից հեռանալը:

Սայաթ-Նովային վերաբերող փաստերից հիշատակության արժանի է նաև XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի սկզբների վրաց գրականագետգրիշներից հովանն Պենտելաշվիլու վկայությունը, որը գրի է առնվել Սայաթ-Նովայի երգերի ինքնաճեռագիր դավթարին կցված մի հիշատակաբանում: Պենտելաշվիլին վկայում է, թե հայ հանճարեղ բանաստեղծը որքան մեծ աշխատանք է թափել իր գործերը ավելի լիարժեք դարձնելու համար. «Մրագրողն (Սայաթ-Նովան—Տ. Կ.) ու այս խաղերի ա-

սողն շատ օր է մթնեցրել ու գիշեր լուսացրել սրանց ասելումն»¹:

Վերոհիշյալ փաստերին լավատեղյակ լինելու հանգամանքն է թելադրել հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննեսը. Թումանյանին գրելու. «Եվ էն երկու ժողովուրդը, որոնք իրենց պատմությունը սկսում են նրանով, թե Հայկոսը (Հայկ) և Քարթլոսը եղայրներ էին, մնացել ու մնում են անսասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով»²:

Այդ ամեծագույն հիշատակներից բանաստեղծական մարմնավորումը պետք է համարել XIX դարի առաջին կեսի վրաց դասական գրականության ականավոր ներկայացուցիչ, պոետ Ալեքսանդր Շավիձավածեին Սևանին նվիրված «Գոգչա» բանաստեղծությունը:

Ա. Ճավճանավածեն, ուսուապարսկական պատերազմից հետո լինելով պարսկական զավթիչների կամայականությունների հետևանքով ավերված Հայաստանում³, տեսնելով հայ ժողովրդի անտանելի դրությունը, տիսուր գույներով է նկարագրել

1 Լ. Մելիքսեբ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Հ. Գ., էջ 148—149:

2 Հովհ. Թամանյան, Սերեգի ժողովածու, Հատ. 4, Երևան, 1951, էջ 421:

3 Ալեքսանդր Շավիձավածեն 1828 թվականին նշանակվել է Պարսկական ազգագրած հայկական Ասմարական կու-



Հայաստանը։ Գոգչա լճի և նրա ափերի պատկերման միջոցով բանաստեղծը մարմնավորել է ամբողջ հայկական աշխարհի իրական վիճակը։ Առավճավաձեն զեղատեսիլ Սևանա լճի ափերին տեսնում է ավերակներ և ամայություն։ Այդ պատ-

ռափարիլ և միաժամանակ կատարել է այդ երկրամասում գրանցված զորամասերի հրամանատարի պարտականությունները։ Այ, Երիցյան իր «Ամենահայոց հայոց կաթողիկոսությունը» և Կովկասի հայր XIX դարում (մասն Ա, Թիֆլիս, 1894) գրում ուշագրավ տեղեկություններ է հայտնում Ա. Ճավճավաձեի դործունեության մասին Հայաստանում։ «Պարսից պատերազմը խանքարեց իշխ. Ճավճավաձեի զրական պարապմունքը, — զրում է Երիցյանը, — նա դարձավ վրաց ազատակամ գունդի հրամանատար, ստացավ գեներալի աստիճան և Կրասովսկու գնալուց հետո նշանակվեց «Հայոց աշխարհ» զինվորական նահանգապետ։ Այս պաշտոնում զորքերով գնաց առավ թայապետ, Ալշակերտը, մատակ Մոշ և բազմաթիվ հայ ժողովորդ դաղլիցքը բերեց Արարատյան աշխարհը» (էջ 354)։ Այնուհետև Երիցյանը Հայորդում է այսպիսի մանրամասներ։ Բայազետի նահանգում հայերի շարդին վերջ տալու համար Ա. Ճավճավաձեն փոքր տեղերով առաջ է ընթանում Բայազետը դրավելու տնահանգապետ իշխ. Ճավճավաձեն այդ շնչին ուժերով և միայն վստահ բնիկ հայոց օգնության վրա առաջ ընթացավ Բայազետը նվաճելու, և ապա, «Բայազետի նվաճելուց հետո իշխ. Ճավճավաձեի հրամանով հայոց հնծելագունդը զնաց և առանց արյունահեղության մտավ Դիագին, ու սիրալիր ընդունելություն գտավ տեղացի հայերից» (էջ 407)։ Ա. Ճավճավաձեի առաջինազգությը կանոնեցնելու համար երգումի սիրասուրը հրամայում է հայերին էրզրումից գաղթեցնել Երկրի խորքերը, և ևս լով այս անողոք հրամանը, սարսափած

կերը ավելի ցայտուն դարձնելու համար հեղինակը սկզբում նկարագրում է լինը։

Գոգչան մի լիճ է լայն ու ընդարձակ, աղմուկով ծովի, երբ ալիքներն են ճերմակ փըրփուրով ափերին ցրվում։ Երբեմբ շինչ է բյուրեղին նման։ Երկինքը ծավի Ռւ սեպ լեռների կանաչն է այստեղ պարզ արտացոլվում ։

Այդ գեղեցկությունը աղավաղում, ընդհանուր տպավորությունը փշացնում են լճի ափերին գրտնը վող ավերակները, որոնք հիշեցնում են երբեմնի շքեղ քաղաքներում իշխող ուրախությունը։

ալեշկերտցի հարյուրավոր հայ գերդաստաններ աղերսեցին ուսւաց օգնությունը։ Սրանց համակրելով հայոց այդ նեղ դրությունը, իշխ. Ճավճավաձեն շտապեց ազատել հայերինք (էջ 408)։ Բացի հայ ժողովրդին օժանդակող ուղարկան դործունեությունից, վրաց բանաստեղծը հայությանը օգնել է և այլ հարցերում։ Օրինակ, Այ, Երիցյանը զրում է. «Սեպտեմբերի կեսին Բայազետում երևաց ժամատաստը (շումա) և սկսեց շարդի թե բնակլաց և թե զորքին։ Ըևազ ճահանչելով տեղացի բնակլաց բնակլորդյունը, — գրում է մի ոռւ հեղինակի, — իշխ. Ճավճավաձեն աշխատեց ներգործել նախ և առաջ ժողովրդի բարոյական և հոգեկան ուժին վրա և զորանով ավելի շավ հասավ իր նպատակին, քան թե քարանտինական խիստ հսկողությամբ» (էջ 409)։ Խէ խոսք, որ նման գործելակիրպը պետք է սեր առաջացներ հայ ժողովրդի մեջ դեպի Ա. Ճավճավաձեն, «Երևանի նահանգում գաղթական հայք, — զրում է Երիցյանը, — տակալին սիրով հիշում են իշխ։ Ալեքսանդր Ճավճավաձեի բարի անոնքը...»։

Բացի վերոհիշեալից, պակաս հետաքրքիր չէ հետեւալ

1 Տեղաց գրականության ընտիր էջերը, Երևան, 1961, էջ 110։

Սակայն ափերը սկսվ են պատվում փլատակների՝
Հայոց երբեմնի պես-պես շենքերի սղո փշրանքով,
Որտեղ ժաղկում էր կյանքը փառավոր մեծ քաղաքների,
իսկ այսօր՝ միայն բվեր ու ավեր երկրների ներքո ։

«Դոգլա» բանաստեղծության մեջ վրաց պոհեմը
Հայաստանի անցյալի անկախությունը, նրա քա-
ղաքներում կերտված հոյակապ շենքերը, ժողովրդի
աշխուժությունը և հանգիստ կյանքը հակառում է
օտարազգի զավթիչների հարձակումների պատճա-
ռով քարերի կուլտի վերածված իր տեսած Հայոց
աշխարհին։

Կար մի ժամանակ, երբ քարերն այս սկ, այսօր ժամանակատ,
իրար միացած կիր ու շաղախով՝ բարձրացել են վեր,
Տերերը նրանց, բախտավոր ու գոհ, հպարտ ու անպարտ՝
Հանգստացել են այս պատերի մեջ ու փառավորվել ։²

Սակայն բանաստեղծի մտապատկերում ստեղծ-
ված Հայաստանի անցյալը տեղի է տալիս, և նա
նորից տեսնում է դառն իրականությունը, հայ ժո-
փաստը Հայաստանի Կենտրոնական արխիվում պահպանվել,
է Ա. Ճավճակածի գրությունը՝ Պասկելին (Ա. 1595), որից
երեսում է, որ Հայաստանում գտնված ժամանակաշրջանում
վրաց բանաստեղծը ոչ միայն շրջել է Հայարնակ վայրերում,
ժամոնթացել հայ գյուղացիների նիստուկացին, այս ժոազան
նախաձեռնություն է Հանդես բերել գյուղատնտեսական կուլ-
տուրաների (ցորեն, բամբակ, շալտիկ և այլն) լայն տարած-
ման ուղղությամբ։

1 Վերաց գրականության ընտիր էջերը, նրեան, 1961,
էջ 111:

2 Նույն տեղում:

զովողի տիսուր ու անելանելի վիճակը և հարակատի
սրտացավությամբ գրում։

Եվ նրանց վշտին նաև տեսնողն է մասնակից դառնում։

Լոռիթյուն միայն ու ուղևություն, ոչինչ և ամա՛,

Եվ մարդու սրտում ու աշքերի մեջ ցավն է տեղ բնում,

ու կըսկրծացող մի զգացում է ծնվում ակամա ։¹

2

XIX դարի երկրորդ կեսին, բուրժուազիայի զար-
գացման հետ միասին, ստեղծվում են ազգային
անտագոնիզմի նախադրյալներ։ Հայ բուրժուա-
զիայի և վրաց ազնվականության մեջ ուժեղ դա-
սակարգային պայքար էր մզվում։ Նրանք երկուսն
էլ այդ գասակարգային պայքարը փոխադրում էին
մասսաների մեջ՝ ազգային գույն տալով նրան։ Ինչ-
պես վրաց ազնվականության, այնպիս էլ հայ բուր-
ժուազիայի զաղափարախոսուներն իրենց սեփական
գործը հրամցնելով համաժողովրդական գործի
տեղ, ամեն կերպ աշխատում էին ազգային ստե-
լությունն սերմանել երկու եղբայրական ազգերի
մեջ։ Բայց ժամանակի հայ և վրաց առաջադեմ
գործիները, որոնք ազգել էին ուսւ ունուցիոն
դեմոկրատներից և տոգորվել դեմոկրատական,
հումանիստական գաղափարներով, դեմ են գորս
գալիս այդ հակաժողովրդական ազգային պայքարի
հրահրողներին և ամեն կերպ աշխատում ավելի ևս

1 Վերաց գրականության ընտիր էջերը, նրեան, 1961,
էջ 111:

ամրապնդել հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը:

Դրկից երկու ժողովուրդների փոխհարաբերություններն ավելի զարգացնելու գործում մեծ ջանքեր է թափել ականավոր զրոյ և հասարակական գործի իիլա ձավճավածեն; Նա խորապես հավատացել է մեր ժողովուրդների համերաշխության հաղթանակին: Գիմելով դարեր շարունակ դրկից երկու ազգերին, բանաստեղծը պնդել է, որ հայ և վրաց ժողովուրդներին հասցրած թշնամիների վընաը կարելի է վերացնել միմիայն նրանց փոխադարձ սիրով: Ինքը՝ ի. ձավճավածեն, շատ է սիրել հայ ժողովրդին: Իր հոդվածներից մեկում նա գրել է, «Յանկանում եմ հայերին հաջողություն և հզուրություն: Նրանց հզորությունը նույնպես և մեր հզորությունն է»: ի. ձավճավածեն ամենայն համոզականությամբ նշել է, որ «ոչ մի գրականության և հասարակության մեջ նույնիսկ մի օրինակ չեն կարող ցուց տալ, որ վրացին վատ հիշի ամբողջ հայությանը, նրա ինտելիգենցիային, որի վրա հիմնված է հայության ամբողջ արդարացի հույսը... Մեզ մոտ ու մեր կողմից ամբողջ հայությունը որպես ազգ երբեք ոչ կշտամբվել է և ոչ էլ վատ հիշվել¹: Քնո՞հակառակը, օրինակներ շատ կան, որ հայերի լավ գործին պատվով են վերաբերվել վրա-

ցիությունն ու նրա ինտելիգենցիան: Այս ապացույցը կարելի է գտնել ինչպես մեր գրականության, այնպես էլ կյանքի մեջ»:

Ականավոր գրողը, ենելով ազգերի համագործակցության, նրանց սերտ բարեկամության գաղափարից, այն միտքն է արտահայտել, որ «Հայաստանի անկախ գոյությունն առնավատշա է Վրաստանի նույն տեսակի գոյության»: ի. ձավճավածեն հայ և վրաց ժողովուրդների միասնության մեջ անհաղթահարելի ուժ է տեսել: Նա իրավացիորեն նըկատել է, որ մի ազգի ուժնդանալր մյուս ազգի ուժեղանալն է նշանակում: «Մենք լավ գիտենք, — զրել է ի. ձավճավածեն, — որ վաղեմի Վրաստանի թուլությունը սկսվեց այն դժբախտ օրից, երբ Հայաստանը (իրեւ պետություն—Տ. Կ.) տապալվեց, մեր այդ երրեմնի անջրապետը հարավից: Մենք հյուսիսից էինք պաշտպանում Հայաստանը և հայերը մեզ՝ հարավից: Այն բանից հետո, երբ Վախթանգ Գորգասալը ապահովեց այն ժամանակվա Վրաստանը հյուսիսից, ամբողջ մեր պատմությունը և հոգսն ուղղված էր հարավից Վրաստանի ամրապնդմանը: Եվ քանի դեռ Հայաստանը գոյություն

զովակությունների բարեկամությունը, օպտագործել են գրականության մեջ բացառական գույներով ստեղծված բուրժուազիայի, առևտրական վաշխառուական կապիտալի, թափադագնառությունների գրական կերպարները և հայտարարել, թե վրացի գրողը վատ է արտահայտվում հայ ժողովրդի մասին՝ որևէ վաշխառուի գրական տիպը ներկայացնելով որպես հայության հավաքական կերպար:

1 ի. ձավճավածեն նկատի ունի այն հանգամանքը, որ նացիոնալիստները ցանկանալով խարիսկ հայ և վրաց ժո-

ուներ, թաթարներն առաջին հերթին պետք է անց-նեին նրա վրայով, որպեսզի ներխուժեին Վրաստան։ Այդ իսկ պատճառով մեր ականավոր թագավորները և պետական գործիչները ոչինչ չեին խնայում, որպեսզի կարիքի դեպքով օգնեին հայերին։ Յավոր սրտի, մեր թագավորներից մի քանիսը չեին հասկանում՝ որքան կարեոր նշանակություն ուներ Վրաստանի համար Հայաստանի գոյությունը։ Հայաստանը ընկալ, և հարավից գոները բացվեցին դեպի Վրաստան թշնամիների ներխուժման համար։

Հայաստանի և հայ ժողովրդի մասին հատուկ սիրով է արտահայտվել նաև վրաց ժողովրդի մեծ բանաստեղծ Ակալի Սերեթելին։ Նա գրել է. «Նըրանց (հայերին) սիրում եմ և ցանկանում, որ մեր մեջ այնպիսի հարաբերություն լինի, ինչպես էր մեր նախնիների օրոք։ Ֆանկանում եմ, որ սրանից հետո գոնե ձեռք-ձեռքի տված մի ուղիղ ճամփով ընթանանք դեպի ապագան, թե չէ իրար հետ թշնամությամբ ոչ մեկս հեռու չենք գնա»։

Ականավոր բանաստեղծը հաճախ է անդրադարձել հայ և վրաց ժողովուրդների փոխհարաբերությունների հարցին և ինքն անձամբ սիրելով հայությանը, թե՛ իր հրապարակախոսական հոդվածներում և թե՛ բանաստեղծություններում արծարծել է երկու ժողովուրդների եղբայրության ամրապնդման գաղափարը։ 1911 թվականին իր հոդվածներից

մեկում Ա. Սերեթելին գրել է. «Զարմանալի չէ, որ հայերին էլ, այս մեր քրիստոնյա հարևաններին՝ մեզ հետ միասին մի պատմական թավայում տապակված, սիրեմ և համակրեմ»։ Նա միշտ հիացել է ու խանդավառվել այդ երկու հարևան ազգերի միշտ օգնության են եկել մեկը մյուսին և միահամուռ ուժերով պայքարել ներքին և արտաքին թրշնամիների դեմ։ «Մեր նախնիները, — գրել է Սերեթելին, — միշտ էլ եղբայրական հարաբերություններ են ունեցել հայերի հետ... Ծատ անգամ է շըրվել Հայաստանի վայրերը նրան կողմնակից և նրա համար անձնվեր վրացիների արյունով և այս կապն ապացուցվում էր հայ-վրացական միությամբ»։

Իրեն արևելքի ժողովուրդների պատմությանը բազածանոթ գրող՝ Ա. Սերեթելին Հայաստանի անցյալին անդրադարձել է նաև իր գեղարվեստական գործերում։ Օրինակ՝ «Նաթելա» պոեմում վըրաց բանաստեղծը Հյուսիսային Հայաստանի մայրաքաղաք Անիի մասին գրել է.

Ո՞վ իմանա որքան ցավ

Տեսակ Անին անվանի.

Այնտեղ մի տեղ չիք տեսնի,

Որ արևաներկ լինի։

Հնում ամեն թշնամի

Գրուում էր, արշավում։

Նա էլ խիզախ զիմադրում։

Պայտարում էր ու կովում։

Մի թշնամին մյուսին
Հաջորդում էր անդադար,
Գալիս էին ու գալիս
Ամրոխները անհամար...

Այնուհետև պոկեմի գործողությունը ծավալվում է Անի քաղաքում, ուր մոնղոլական զավթիչների բանսարկությունների և դաժանությունների պատճառով հայության հետ միհասին տանջվում են նաև քաղաքի պաշտպաններին օգնության եկած վրացիները:

Սրտառուց է եղել Ա. Շերեթիի բարեկամությունը հայ ականավոր դրամատուրգ Գ. Սունդուկյանի հետ¹, Նա տարբեր առիթներով երեք բանաստեղծություն է նվիրել իր սիրելի բարեկամին: 1901 թվականին «Թեպոյի» բեմադրության 30-ամյակի առթիվ Սունդուկյանին է նվիրել իր «Բարեկամիս» բանաստեղծությունը, 1910 թվականին, հայ դրամատուրգի ծննդյան 85-ամյակի կապակ-

¹ Վրաց անվանի բանաստեղծ ի. Գրիշաշվիլին Ա. Շերեթիի և Սունդուկյանի շնոր բարեկամության մասին դրել է: «Որպես աղքարին միացնող կամուրջ՝ Ակադին բնդհանրապես մեծ բարեկամ է Սունդուկյանին և նրա տիպերին: Ժամանակին ո՞վ չի տեսել այս երկու մարդկանց նախկին գոլովինյան պողոտայի վրա թե-թեի տված դրունելիս ո՞վ գիտե, քանի՞-քանի անգամ նրանց խոսել են ու երազել այս երկու ծողովուրդների ճշմարիտ եղբարական բարեկամության մասին, որը կենսագործեց միայն մեր օրերում...» («Սով. դրականություն և արվեստ», 1950, № 7,էջ 131):

ցությամբ Ա. Շերեթելին գրել է օգ. Ն. Սունդուկյանցին բանաստեղծությունը և 1912 թվականին՝ «Գաբրիել Սունդուկյանի թաղման օրը» բանաստեղծությունը: Հայ մեծատաղանդ դրամատուրգին ձոնված վերոհիշյալ գործերը տոգորված են հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ոգով:

Ա. Շերեթելոն խորթ է եղել ազգային խորականությունը: «Բարեկամիս» բանաստեղծության մեջ վրաց պոետը դիմելով Սունդուկյանին՝ գրում է:

Առանց ազգի խըտրության են
Բարեկամներ եմ մաղթում նըրան,
Ուղոր մարդ է ճշմարտապես
Արեգակի լույսի նման²:

Քաջ գիտակցելով, որ ժողովուրդների սերտ համարձակցությունն իրենից մեծ ուժ է ներկայացնում, Սերեթելին նույն բանաստեղծության մեջ հայտարարում է:

Միության և եղբայրության
Ոչ մի բան չեմ զերազանել,
Ուժը սրանց զուգակցության
էն գլուխ եմ ասել, ասել²:

Այնուհետև Ա. Շերեթելին այն միտքն է հայությում, որ հայ և վրաց ժողովուրդների վատ փոխհա-

¹ Լ. Մելիքսեբ-Բեկ, Գ. Սունդուկյանը և վրաց կլասիկները, «Տեղեկագիր» ԳԱ հասարակագիտության բաժանմունքի, 1950, № 8,էջ 74:

² Նույն տեղում:

բարերությունները կարող են միայն ուրախացնել այդ ազգերի թշնամիներին, քանի որ նրանց նպատակը հենց եղբայրական ժողովուրդների միջև ատելություն սերմանելն է:

«Գ. Ն. Սունդուկյանին» բանաստեղծության մեջ Ա. Սերենելին իր և հայ դրամատուրգի բարեկամությամբ մարմնավորել է հայ և վրաց ժողովուրդների հոգեհարազատության գաղափարը.

Ես մի վրացի, իսկ զու հայ ես մի,
Թալյ մենք երկուով եղբայր ենք հիմք.
Երկուս էլ զավակ նույն հողի, ջրի,
Եվ նույն բնության և նույն լեռների ։

Ապա բանաստեղծը գտնում է, որ Վրաստանի փարթամ ու ծաղկուն բնությունն է իր երփներանգ գույներով սնել Սունդուկյանի բնածին տաղանդը, նրա ստեղծագործությունները², որոնք և անմահություն են բերել հայ դրամատուրգին.

Եվ տառապանքիդ հուզամներն անվերջ
Հյուսել են հըմուտ՝ քո երկերի մեջ.
Ու ժառանգել ես անմահ մի անուն,
Սերունդից սերոնդ դարձել միս, արյուն,

1 Ա. Սերենելի, Հատընտիր, Երևան, 1940, էջ 74:

2 Նոյն միտքն է հայտնել Գ. Սունդուկյանը վրաց բանաստեղծ Ռ. էրիսթավու գրական գործունեության 50-ամյա հորեւանին նվիրված ճաշկերութի ժամանակ. «Եյս ևս կհայտնի մեր ազգի անունից, որ մենք՝ Վրաստանում սնված հայերս, վրաց հողով ենք հասունացած, Վրաստանի փորձանքին և ուրախությանը մենք միշտ հաղորդակից ենք եղել ու կլինենք» («Կովալին», 1895, № 46, էջ 8):

Բաղմաթիվ մարդկանց հույզ ու տենչերին
Միացնում եմ ես բաղձանքները իմ,
Կոնարհվում եմ մեծ գործիչի առաջ,
Կըրտսեր եղբար պիս՝ մեծ եղբար առաջ ։

Խոր վիշտ է պատճառել Ա. Սերենելիին Սունդուկյանի մահը: Այդ է վկայում նրա «Գարբիել Սունդուկյանցի թաղման օրը» բանաստեղծությունը, որի մեջ, սակայն, վրաց պոետը ոչ թե ողբում է իր բարեկամի մահը, այլ տալիս է Սունդուկյան-քաղաքացու, Սունդուկյան-մարդու և նրա ստեղծագործությունների խոշոր դերը «տարացեղ աշխարհի», այսինքն՝ Վրաստանի ժողովուրդների լուսավորման գործում: Եթենք այդ բանաստեղծությունն ամբողջությամբ, քանի որ այն լայն հասարակությանը հայտնի չէ.

Այսօր հողին են հանձնում
Ուշիմ ժարդու սառած դին,—
Որ լույս-շողեր էր սրբուում
Մեր տարացեղ աշխարհին:

Փայփայում էր հրաշագեղ
Իղձեր, տենչեր հուսալի.
Մարդ էր փընտրում ամեն տեղ
Եղբայրական սիրով լիւ

Մարդը միայն մարդ լինի,
Բոլորն իրար հաղասար,—

1 Ա. Սերենելի, Հատընտիր, 1940, էջ 74:

Հեղինակըն անվանի
Թարողում էր անդադար:
Վըսեմ գործով վայելեց
Ժողովրդի սեր, Հարգանք.
Հըստակությամբ վաստակեց
Հավերժ քուն ու մեծարանք^{1:}

Բնդհանրապես պետք է նշել, որ Գ. Սունդուկյանը հայ այն գրողներից է, որոնք սիրվել են վրաց ժողովրդի կողմից, բարձր զնահատվել վրաց գրական-կուլտուրական աշխարհում։ Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Սունդուկյանի ծանոթությունը վրաց գրողների հետ սկսվել է դեռևս այն ժամանակ, երբ նա բավականաչափ հեռու է կանգնած եղել գրականությունից։ Օրինակ, հայտնի է Հետեւյալ փաստը. Սունդուկյանին Դերբենդի աքսորից աղատելու համար նրա հարազատները և հատկապես մայրը՝ Թինաթինա Սունդուկյանը, հաճախ դիմել է պաշտոնական անձանց միջամտությանը։ Այդ անձանց մեջ է եղել նաև վրաց բանաստեղծ Գրիգոր Օրբելիանին, որը այդ ժամանակ վարել է Մերձկասպյան երկրների զորքերի հրամանատարի և բաղաքացիական մասի պետի պաշտոնը։ Գր. Օրբելիանին ընդառաջ զնալով Թինաթինա Սունդուկյանի թախանձանքներին, 1857 թվականի փետրվարի 25-ին հատուկ նամակով դիմում է Կով-

կասի փոխարքայի դիվանատան զիրեկտոր Ալեքսեյ Կրուզենշտերնին, որի մեջ ասված է։

«Ողորմած պարոն Ալեքսեյ Ֆեոդորովիչ,
իմ Թիֆլիս գտնվելու օրերին, մի քանի անգամ ինձ մոտ է եկել Դերբենդի զինվորական նահանգապետի գրասենյակի ծառայող, տիտուլյար խորհրդական Սունդուկյանցի մայրը և, բացատրելով բազմաթիվ կողմերով ծայրահեղ այն վիճակը, որ նա կրում է նրա որդու Դերբենդ ծառայության աքսորելու օրվանից, խնդրում էր իմ միջնորդությունը նրան Թիֆլիս փոխարքելու զործում՝ նախկին տեղում ծառայելու համար։

Այդ իսկ պատճառով և անձամբ ճանաչելով Սունդուկյանցին՝ որպես հիանալի երիտասարդի, որը նրա անմիջական պետերի կողմից միշտ երաշխավորվել է գովասանքի արժանի ծառայության և օրինակելի վարքի համար, ևս չէի կարող մերժել մոր խնդիրքը որդու հարցում իմ մասնակից լինելուն և ցանկանում էի անձամբ հաղորդել Զեզ ամենախոնարհ խնդիրքս նրա մասին։ Բայց զանազան գործեր և հոգսեր, որոնց մեջ ես գտնվում էի իմ Թիֆլիս լինելու ամբողջ ժամանակ, խանգարեցին ինձ։

Այժմ մեկնելով, ես վճռեցի դիմել Զեզ գրավոր, թախանձագին խնդրելով Սունդուկյանցի բախտում բարյացակամ մասնակցության և նրան Թիֆլիս համապատասխան տեղում ծառայության փոխա-

1 Լ. Մելիքսեր-Թելի, Գ. Սունդուկյանը և վրաց կլասիկները, «Տեղեկագիր», 1950, № 8, էջ 75—76։

դրելու մասին, երբ Դուք այդ կգտնեք հնարավոր^{1:}

Այս փաստաթղթում, տվյալ դեպքում, հետաքրքիր է վրաց բանաստեղծի կարծիքը երիտասարդ Սունդուկյանի մասին: Ընդհանրապես Գրիգոր Օրբելիանին միշտ էլ չերմ է վերաբերվել Սունդուկյանին, նրա բանաստեղծական բնավորությանը խորթ է եղել գրասենյակային ծառայությունը: Գ. Օրբելիանին 1858 թվականի ապրիլի 13-ին հետևյալն է գրել Դիմիտրի Զորջաձեին. «Հազիվ խեղճ Սունդուկյանին տեղափոխեցի շինարարական հանձնաժողովի անդամ»^{2:} Հետագայում, երբ Սունդուկյանը իր դրամատիկական ստեղծագործություններով մեծ դեր է կատարում Հայ և վրաց ունալիստական թատրոնների զարգացման զործում, ավելի սերտ բարեկամություն է ստեղծվում վրաց գրողների և Հայ դրամատուրգի միջև^{3:}, իսկ վրաց

պարրերական մամուլը հաճախ է անդրադառնում Սունդուկյանի պիհսների բեմադրությանը վրացական բեմում և դրվատում նրա ստեղծագործությունները:

Անցյալ դարի երկրորդ կեսին Հայ-վրացական թատերական կապերի ամրապնդման գործում վիթխարի դեր է խաղացել Գ. Սունդուկյանը: «Նա իր ստեղծագործություններով և հասարակական գործունեությամբ,— գրում է թատերագիտ Գ. Բուլսնիկաշվիլին,— նշանակալից լումա մտցրեց եղայրական Հայ և վրաց ժողովուրդների բազմադարյան բարեկամության բնդհանուր պատմության մեջ»^{4:} Գ. Սունդուկյանը երկար ժամանակ եղել է Հայ և վրաց բեմերի գործիչներին իրար կապող օղակը, նրանց ստեղծագործական համագործակցության ոգեշնչողն ու կազմակերպիչը, իսկ նրա դրամատուրգիան մտել է վրաց թատրոնի մեջ, որպես նրա օրգանական մասերից մեկը: Վրացի հանդիսատեսը միշտ էլ չերմորին է ընդունել Հայ մեծ դրամատուրգի կոմեդիաների բեմադրությունները: Բացատրելով այդ երևությների պատճառները, Գ. Բուլսնիկաշվիլին գրել է. «Պատահական չէ Գարրիել Սունդուկյանի կոմեդիաների փայլուն հաջողությունը վրաց բեմում: Դա պայմանավորված էր ոչ միայն նրանց գեղարվեստական նշանակալից ար-

1 Լ. Մելիքսեր-Թեկի, Գ. Սունդուկյանը և վրաց կլասիկները, «Տեղեկագիր», 1950, № 8, էջ 67:

2 Գ. Օրբելիանի, Նամակներ, հ. 2, էջ 238 (վրացերեն):

3 Հատկապն սերտ, ստեղծագործական բարեկամությամբ են կապված եղել Սունդուկյանը և Ռ. Էրիսթավին: Այդ է վկայում 1880 թվականին «Եվերիա» Համեսում տպագրված «Պեպոլի» առաջարանը, որտեղ Սունդուկյանը գրում է. «Տպագրելով վրացերեն այս իմ երկասիրությունը՝ նախ և առաջ պարտք եմ համարում սրտագին շնորհակառությունս Հայտնել բանաստեղծ իշխան»: Ուափիել երիտավլիխն, որն եղբարյական օգնության ցույց ավեց ինձ 1874 թվականին, երբ թարգմանում էի այս երկասիրությունը: («Եվերիա», 1880, № 3, էջ 207):

4 Գ. Բուլսնիկաշվիլի, Գարրիել Սունդուկյան, Թրիմիսի, 1949, էջ 3 (վրացերեն),

ժանիքներով, այլև նրանով, որ այդ ստեղծագործություններն ամբողջովին համապատասխանում էին վրաց թատրոնի և դրամատուրգիայի գաղափարական-գեղարվեստական ուղղությանը... Վրաց թատրոնը գնում էր ռեալիզմի, ժողովրդայնության, ժամանակի հասարակական կյանքի բննադատական պատկերման ուղիղով։ Այդ ուղիղով էր ընթանում նաև հայ մեծ դրամատուրգի գործունեությունը։

Գաբրիել Սունդուկյանի դրամատուրգիան իր լեզվով, բովանդակությամբ և գեղարվեստական առանձնահատկություններով մոտ էր վրաց դրամատուրգիային և թատրոնին, քանի որ նրա պիեսներում պատկերված էր վրացական քաղաքի՝ Թբիլիսի կյանքը։

Սունդուկյանի ստեղծագործությունների ժողովրդայնությունը վրաց բնմում պարզորեն արտահայտում և ընդգծում էր այն եղբայրական փոխհարաբերությունները, որ բազմաթիվ դարերի ընթացքում գոյություն է ունեցել հայ և վրաց ժողովրդների միջև և որին անկեղծորեն ներգործել է Գարրիել Սունդուկյանը¹։

Վրաց հանդիսատեսը Սունդուկյանի ստեղծագործություններին առաջին անդամ ծանոթանում է 1874 թվականին։ Նույն թվականին Քութախիսիում թատրասներների խումբը բնմարդում է «Պեպոն»։

1 Գ. Թուխնիկաշվիլի, Գաբրիել Սունդուկյան, Թբիլիսի, 1949, էջ 31 (վրացերեն)։

Այդ ներկայացման մասին «Դրոներա» թերթը ընթերցողներին հայտնում է հետևյալը։ «Հոկտեմբերի 21-ին Քութախիսիում վրաց ներկայացում էր տրվում, Ներկայացրին Սունդուկյանի «Պեպոն» կոմիդիան, թարդմանված հայերենից։ Պիեսն ամրող չույթյամբ լավ անցավ։ ...Ով ներկա էր ներկայացմանը, բոլորն էլ լավ կարծիք կազմեցին պիեսայի մասին»¹։

Թբիլիսիում «Պեպոն» առաջին անգամ բիմադրովում է 1875 թվականի նոյեմբերի 27-ին և այնուհետև՝ գեկտեմբերի 15-ին։ Ներկայացումը կազմակերպվում է թատերասներների կողմից։ Պեպոյի դերը կատարում է Գևորգ Զմշկյանը։ Մամուլի հազորման համաձայն երկու ներկայացումներն էլ լավ են անցել։ «Պեպոյի» առաջին բիմադրության առթիվ լույս է տեսնում վրաց հայտնի հասարակական դրամատիկ Սերգեյ Մեսխիի ընդարձակ հոգվածը։ «Հենց սկզբից ասում ենք,— գրում է Սերգեյ Մեսխին, — որ սրա նման դաղափարական, բեմին բավարարող կոմեդիա մեր հասարակությունը վրաց լեզվով և բեմի վրա դեռ չեր տեսել։ Կոմեդիայի արժանիքներին համարյա համընկնում էր խաղացողների կատարումը։

Ներկայացման ժամանակ վրացի թատրասներից մեկը մյուսին ասաց՝ «որտե՞ղ էին պահված մինչև հիմա այս խաղացողները, որտե՞ղ էր այս

1 «Դրոներա», 1874, № 448։

կոմեդիանս։ Այնուհետև Մեսիխն գրում է. «Երկու կողմն էլ (Հեղինակը և դիրակատարները—Տ. Կ.) իրավացիորեն արժանացան հասարակության համակրությանը և շնորհակալությանը. Հեղինակը համար կոմեդիայի համար, իսկ դիրակատարները փութացան և տաղանդավոր ներկայացման համար։ Մեր վերջին խոսքը և ցանկությունը այն կլինի, որ նման խելացի և էսթետիկական հաճույքի որբան հնարապոր է ավելի հաճախ արժանանամեր հասարակությունը...»¹: «Պեպոյի» ներկայացումը հայ և վրաց հասարակության մեջ առաջ է բերել անսախիքնթաց խանդավառություն, ամրապնդել է երկու ժողովուրդների եղբայրական համագործակցությունը; «Կվալի» պարբերականը այն միտքն է հայտնել, որ Սունդուկյանի պիեսները «միացրին երկու հարեւն ազգերին արվեստի հիման վրա»²:

1876 թվականի հունվարի 15-ին վրաց լեզվով բեմադրվում է «Էլի մեկ զոհ»: Արժանի է հիշատակել, որ այս ներկայացմանը մասնակցել է նաև ականավոր բանաստեղծ Ակակի Շերեթելին։ Այս ներկայացման մասին «Դրոերայում» կարդում ենք. «Այս վերջին տարիների ընթացքում մեծապատիվ Սունդուկյանը մողաք է դառնում մեր բեմի վրա, առաջին անգամ թութախսը ծանոթացրեց այդ տա-

1 «Դրոերա», 1875, № 136, 127:

2 «Կվալի», 1901, № 2:

ղանդավոր հայ դրամատուրգին։ Առաջինն այսուեղ խաղացին նրա հրաշալի «Պեպո» կոմեդիան։ Ապա նրա մյուս դրաման՝ «Էլի մեկ զոհ»), որ երկու անգամ ներկայացրին այնուղիղ և հիմա, ինչպես ասում են, նրա երրորդ դրամատուրգիական գործի բեմադրմանն են պատրաստվում։ Թիֆլիսն այս դեպքում թութախսի հետքերով է զնում, այսուղիղ էլ վերջին երկու անգամ ներկայացրին «Պեպոն», իսկ անցյալ հինգշաբթի ներկայացրին «Էլի մեկ զոհը»¹,

«Պեպոյին» և «Էլի մեկ զոհին» հետևում է «Խաթարալա» կոմեդիան, որը թրիլիսիի վրաց բեմի վրա իրար ետևից ներկայացվում է 1877 թվականի ապրիլի 5-ին և 15-ին։ Այս ներկայացման մասին ևս մամուլում դրական կարծիք է հայտնվել. «Զնայած մեզանում վրաց ներկայացումներ այնքան հաճախ չեն լինում, բայց այնուամենայնիվ երկար ժամանակ է շնորհ հաճախել այնպիսի հիանալի վրաց ներկայացման, ինչպիսին անցյալ երեկո տըրքից ամառային թատրոնում։ Ներկայացրին պ. Սունդուկյանի «Խաթարալա» կոմեդիան, թարգմանված հայերենից...»²

Սունդուկյանի դրամատիկական երկերի և նըրանց բեմադրությունների մասին վրաց պարբերական մամուլը բազմաթիվ և բազմազան դրականու երախտագիտությամբ լի կարծիքներ է հայտ-

1 «Դրոերա», 1876, № 6:

2 «Իմերիա», 1877, № 6:

նել, որոնց մեկ առ մեկ թվարկումը մեզ շատ հեռու կտանի և կշեղի մեր առջև դրած խնդրից: Նշենք միայն, որ Հայ դրամատուրգի կոմեդիաները վրաց բեմում հաստատվում են դեռ այն ժամանակ, երբ գոյություն ունեն միայն թատերասիրական խրձրեր: Հետագայում, Թբիլիսիում մշտական վրաց պրոֆեսիոնալ թատրոնի վերականգնումից հետո, Սունդուկյանի կոմեդիաները պատվավոր տեղ են դրավում նրա խաղացանկում:

Դ. Սունդուկյանը ինչպես Հայ թատրոնում, այնպես էլ վրաց թատրոնում մեծ դեր է կատարել իր պիեսների բեմականացման գեղարվեստական մեկնարանման գործում: Հաճախ վրաց թատերական գործիչները Սունդուկյանին հրավիրել են պիեսի գաղափարական մեկնարանման համար: Հայ դրամատուրգի գեղարվեստական ճաշակը, թատերական արվեստով տարված լինելը, թատրոնի գործիչների նկատմամբ չերմ ու սրտառուչ վերաբերմունք ունենալը, նրա բացառիկ ուժիսյորական տաղանդը մանրամասն հիշում է վրաց բնմի պարծանք Մակո Սափարվաշ-Աբաշիձեն. «Մի օր մեզ Հայտնեցին, որ Հաջորդ օրը ամբողջ խմբով Սունդուկյանի մոտ ճաշի ենք հրավիրված և այնտեղ պետք է պիես ընթերցվեր: Որքան հիշում եմ, այդ պիեսը «հաթարալան» էր: Դա 1882 թե 1883 թվականին էր:

Այն ժամանակվա խմբի կազմը շատ փոքր էր:

Ամբողջ խումբը բաղկացած էր 10—12 մարդուց: Հիշեմ անունները. պատվարժան Կոտե Ղիփիանի, Նշենք Գաբրոնիա, Վասո Արաշիձե, Կոտե Մեսատալյա Գաբրոնիա, Վասո Արաշիձե, Մարիամ Սափարովի, Շիշնիաշվիլի, Մձինարով, Մարիամ Սափարովի, Զայիկի Մաշարելի, Մաշո Ղիփիանի, Բ. Կորինթելի, Ավրոսենտի Ցագարելի և Գրիգորի Ղիփշիձե:

Ասիկո Ցագարելին հուշարար էր: Գիգան Ղիփշիձեն սցենարիուս, իսկ Ադամ Չուրինովը՝ աղմինիստատորը¹: Վերը հիշած բոլոր դերասանները հավաքվում են մի տեղ և ճամփա ընկնում դեպի Սոլոլակ, որտեղ ապրել է Սունդուկյանը: «Հասանք հրավիրեցին վերին Հարկը: Մեզ ընդառաջ եկավ ինքը՝ Գաբրիել Սունդուկյանը, հիանալի գեմքով մի մարդ, ժապերես, փոքրիկ բեղերով, մի խոսքով՝ հաճոյատես մի տղամարդ:

Նախ հյուրասիրեց՝ բացելով ճաշի հիանալի սեպան:

Երբ վերջացրինք ճաշը, մտանք դահլիճ: Այնտեղից հյուրասեր տանտերը մատնացուց արավ իր առանձնասենյակը՝ ասելով. «Այս էլ իմ աշխատասենյակը»:

Նստեցինք սեղանի շուրջը: Սկսվեց պիեսի ընթերցումը: Հանգուցյալը դիմում էր յուրաքանչյուրին՝ ասելով. «Ա՛յ, գենացվակե, այս դուք պիետք է խաղաք, լա՞վ ականջ դրեք»: Իհարկե, մեկ առ մեկ

բացատրում էր, թե ինչ բնավորություններ են և ինչպիսի տիպեր ենք մենք մարմնավորելու Երբ ավարտեց ընթերցումը, ցրվեցինք՝ ոգևորված ահես-սի բովանդակությամբ: Գարքիելը որոշ տեղ ճանապարհ զցեց մեզ և հրաժեշտին ասաց. «Հապա՛, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, հիմա իմ պիեսի բախտը ձեր ձեռքումն է»:

Այնուհետև Սափարովա-Աբրաշիձեն նշում է, որ վրաց թատրոնն այն ժամանակ սնվել է Սունդուկյանի պիեսներով. «Հիշում եմ, երբ նեղության մեջ էինք ընկնում, նրա պիեսներն էին մեզ փրկում: Այս պատվարժան հեղինակի պիեսները մենք համարյա անթերի էինք խաղում և լավ էլ եկամուտ էինք ստանում»¹: Երբ Սունդուկյանի պիեսներն են պատրաստել ներկայացման, շարունակում է պատմել դերասանութին, հեղինակն առնվազն երկու փորձի ներկա է եղել, թեկուղ տասն անգամ խաղացած լինեին այդ պիեսը: Բոլորին օգնել է, դերասաններից ավելի՝ ինքն է հուզվել, եթե տեսել է նույնիսկ աննշան դերի դերակատարը փոխված, խիստ ուշադրություն է զարձրել և ասել է. «Դննացվալի, զավակներս, այսինչ դերի դերակատարը փոխել եք, եթե կարելի է, զեռ այդ տեղը փորձենք»: Նրա գալը բոլորի մեջ ոգևորություն է առաջ բերել:

«Հիշում եմ, մեկ անգամ «Խաթարալայում» նա-

տալյայի դերը պետք է խաղայի: Նա մտավ իմ գրիմի սենյակը և զիտեց ինձ. զեմքին բավականության ժպիտ փայլեց: Ասաց. «Էլ ի՞նչ ասեմ, զավակս, գո՞ւշկա ջան, քանի դեռ դու կենդանի ես, կապրեն ե՛ իմ նատալյան, ե՛ էփեմիան: Ճիշտ, հոգուդ մեռնեմ, այսօր ինչպե՞ս է ձայնդա: Ուավ շմ, Գարրիե՛լ Նիկիտիչ, և զգիտեմ ինչպես կլինի իմ բանը», — պատասխանեցի հայ: «Եյ թե ինչ կասեմ: Ցավդ տանեմ, դու զիտես որտեղ եմ ես նստած, երգելու ժամանակ ինձ նայիր, թե այսպես նստեմ (և խաչեց ձեռները), երգը չկրկնես, իսկ եթե այսպես ձեռներս դրված լինեն բազկաթոռին, այն ժամանակ շվախենա՛ս, զնա՛ ու գնա, քանի անդամ էլ որ ինդրեն՝ կրկնի՞ր»:

Դրանից հետո հիմանդրության պատճառով հայինս հանգուցյալին չ'անդիպեցի... գլուխս եմ խոնարհում տաղանդավոր գրողի հիշատակի առաջ»¹:

Վրացական թատրոնի վերածնման և զարգացման գործում Գ. Սունդուկյանի կատարած ծառայություններն իր ժամանակին փայլուն կերպով բնուրոշել է վրաց թատրոնի անվանի դերասան Կոտե Ղիփիանին՝ հայ դրամատուրգի գրական գործունեության երեսնամյա հորելլյանին կարգացած իր ուղերձում: «Թանկապին Գարբիել Նիկիտիչ, — գրել է Կ. Ղիփիանին, — վրացական թատրոնի պատմու-

1. «Կոմունիստի», 1926, № 9:

1. «Կոմունիստի», 1926, № 9:

թյունն ապրեց իր գոյության երկու դարը շրջան։
Առաջին շրջանը 1850-ական թվականներն են, երբ մեր
հասարակության մեջ հանդես եկավ անմոռաց թա-
փառ Գեորգի էրիսթավին, որը հիմք որեց վրաց
թատրոնին և նրա առաջագիտության համար ստեղ-
ծեց իր դրամատիկական գործերը։ Նույնպիսի մի
գործից էր Զուրաբ Անտոնովը, որի պիեսներով իր
գոյությունն էր պահպանում այն ժամանակվա վր-
րաց թատրոնը։ Հետագայում նկատվեց տեղատվու-
թյուն։ Այլևայլ պատճառներով վրացական մշտա-
կան թատրոնը փակվեց, և անողոք ժամանակը, որը
ոչ ոքի չի խնայում, հասարակական ասպարեզից
հեռացրեց այդ մարդկանց, և վրացական թատրոնը
նիրհեց 25 տարուց ավելի։ Բայց նրա դործիշները
շարունակում էին խորհել։

Եվ ահա հանդես եկաք Դուք, ու վրացական
թատրոնի համար բացվեց մի այլ շրջան։ Սկսվեց
նոր կյանք։ 25 տարվա լեթարգիական քնից հետո
եկավ նրա (վրացական թատրոնի) վերածնության
շրջանը։

Շարունակելով իր խոսքը, Ղիփիանին ընդդում
է, որ այդ վերածնության համար վրաց թատրոնն
ամբողջովին պարտական է Սունդուկյանին, քանի
որ նա իր դրամատիկական ստեղծագործությամբ
նորից շունչ է տվել, և թատրոնի մարած դարկերա-
կը հնարավորություն է ստացել նոր ուժով բարա-
խելու «Դուք, որ բարձր եք պահել արվեստի դրո-

շը, — այնուհետև նշել է Ղիփիանին, — որի ստվերի
ու ծփանքի տակ տվեցիք մեզ բարձրարվեստ ստեղ-
ծագործություններ, պոետական վսեմ գործեր
(պիեսներ), Դուք ոչ միայն դրամատորգ եք, այլև
բանաստեղծ, բանաստեղծ, որ սահեղագործում է
ոչ թե շափածո և ոչ էլ հանգավոր, այլ մեր կենդա-
նի խոսքով։

Զեր կերտած տիպերին մենք բոլորս հանդի-
պում ենք կյանքի ճանապարհին, նրա յուրաքան-
չյուր քայլափոխին։ Նրանց հանդիպում ենք և այ-
ժքմ, բայց ոչ մեկը մեզանից ուշադրություն չէր
դարձնում, մինչև որ Դուք մարմնավորեցիք նրանց
Զեր դրամաներում և կատակերգություններում,
մինչև որ դրանով մեր աշքերը բաց արիք շրջապա-
տի նկատմամբ.. Այդպիսի քանքարով Դուք թար-
մացրիք մեր հասարակությանը, և մեզ մոտ երեան
եկավ դրամատուրգների, ինքնուրույն հեղինակնե-
րի, թարգմանիչների և փոխադրիչների մի ամբողջ
պլեադա, և այդպիսով Դուք առաջ մղեցիք մեր գր-
րականությունը։ Զեր շնորհիվ մեզ մոտ առաջ եկավ
դերասանների և դերասանուհիների մի ամբողջ
պլեադա, Զեր ստեղծագործությունները երեան բե-
րեցին մեզանում տաղանդներ, որոնց մենք մինչ
այդ չէինք ճանաչում։

Այո, Դուքը բանաստեղծ եք, քանի որ մեր ամեն-
օրյա գորշ, շահամոլական կյանքից բարձրացրիք
այնպիսի տիպեր, որոնք երրեք շեն նսեմանա, ո-

րուց Գուք անմահություն տվիք: Մի՞թե կարող են
մոռացվել Զեր Զամբախովի, Օսեփի, Զիմզիմովի,
Պեպոյի, Կակուլու, Գիքոյի, Էփեմիայի, Օսկան
Պետրովիչի, Խաչյի, Գեորգի Մասիսյանցի և Մար-
գարիտի տիպերը:

Վրացական բնեն այսօր տոնում է Զեր բեղմ-
նավոր գործունեության 30-ամյակը: Այսօր լրա-
նում է 30 տարին այն օրվանից, ինչ լույս է տեսել
Զեր հոչակավոր «Պեպոն», որ այս դիշեր խաղա-
ցինք և որի մեջ 30 տարի առաջ ես խաղացի նույն
Գիքոյի գերը, ինչ որ այսօր:

Որպես վրացական թատրոնի ավագագույն
գործիչ, ես մեծ ուրախությամբ շնորհավորում եմ
այսօրվա տոնը: Մենք, հարազատ թատրոնի գոր-
ծիչներս, աճել և դաստիարակվել ենք Զեր պիհսնե-
րով: Մենք տարված ենք արվեստի Զեր տիպերով:
Մենք ոգեշնչված ենք Զեր ստեղծագործությամբ, և
ինչքան էլ Զեր աշակերտներն ենք մենք, այնքան
ավելի մեծ սիրով ենք դիմավորում Զեր այսօրվա
հոբելյանը... Թույլ տվիք երախտապարտ աշակեր-
տին՝ որդիական սիրո զգացմունքով հասարակու-
թյան ասած ողջագուրել և համբուրել Զել, անզու-
գական զեկավար և խորհրդատու¹:

1901 թվականին, «Պեպոյի» երեսնամյակի առ-

1 «Առինետական գրականություն և արվեստ», 1950, № 7,
էջ 122—123: Ի. Գրիշաշվիլու «Առնդուկանը վրաց բնմի վրաց
հողվածից»:

թիվ, Գ. Սունդուկյանը հանդիպում է ունենում վրա-
ցի բանվորների հետ, որոնք դրամատուրգի պատ-
վին բեմադրում են նրա անմահ «Պեպոն»: Ներկա-
յացումից հետո բանվորները սրտագին ողջունում
են Հեղինակին և ճանապարհում երդերով ու զերմ
բացականչություններով: Հետաքրքրական է բան-
վորական ղեկավայրի ելույթը Թբիլիսիի վրացա-
կան թատրոնում կազմակերպված Սունդուկյանի
մեծարանքի երեկոյում: «Մեծապատիվ պ-րն Գար-
րիկը, Այս նշանակալից օրվա՝ Զեր «Պեպոյի» երսւ-
նամյակի լրացման առթիվ թույլ տվիք ժաղովրդա-
կան բնմի սիրողներին արտահայտել մեր խորին
համակրանքը և շնորհակալություն հայտնել ժողո-
վրդական բնմի առաջ Զեր մեծ ծառայություննե-
րի համար... Զեր բարձր միտքը, գեղարվեստական
տաղանդը և կյանքի խոր նանաշողությունը Զեզ
հնարավորություն են տալիս ճշմարտացի և կին-
զանի պատկերել ժողովրդի հոգին ու սիրութ. Զեր
կերտած կերպարները կենդանանում են մեր աշխի
առաջ: Գուք սրտով ժաղովրդին բարօրություն ցան-
կացաք. այդ կարող էր անհի միայն այն մարդը, ով
ժողովրդի հոգին ու ցավն իրենն է համարել, ով նրա
տանշանքով է տանջվել և խանդակությամբ ձըգ-
տել նրա լավագույն օրվան...»¹

Վրաց պարբերական մամուլի էջերում արտա-

1 «Իվելիա», 1901, № 94:

ցոլվել է Հայ և վրաց թատերական գործիչների սերտ, եղբայրական համագործակցության մի այլ փաստ ևս, որը կարելի է ասել եղակի է տարբեր ժողովուրդների թատրոնների պատմության մեջ: Երկու ազգերի թատերական գործիչները միշտ ձբդտել են գոնել Հայ և վրաց թատրոնների մերձեցման և ստեղծագործական փոխհարաբերությունների ուղիներ: Այս առումով ուշագրավ է Հետևյալ փաստը: XIX դարի 60-ական թվականներին Թբիլիսիում գործող Հայկական և վրացական թատերախմբերը հատուկ շենքեր չունեին: Դժվարություններով և այն էլ հազվադեպ ներկայացումներ են արքվել Թբիլիսիի պետական թատրոնում, բայց այդ թատրոնն էլ Հրգեհի Հետևյանքով այրվել է 1874 թվականին: Դրանից հետո վրաց և Հայկական ներկայացումներ տրվել են Թբիլիսիի ակումբներում, ամառային այգիներում, ուսումնարաններում և մասնավոր տներում, քանի որ վրաց և Հայ թատրոնների համար առանձին-առանձին շենքեր կառուցել Հնարավոր չեր, վրաց թատերական գործիչները մտահղանում են Հայ և վրաց թատերախմբերի համար միասնական ուժերով կառուցել մի ընդհանուր թատրոն: Այս մասին առաջին անգամ 1869 թվականին գրում է «Դրուեա» թերթը, «Զարմանալին այս է՝ խաղացողներ կան, հանդիսատես կա, բայց խաղատեղ չունենք... Մի՞թե մենք՝ շատ կա, բայց խաղատեղ չունենք... Մի՞թե մենք՝

պահել Մի՞թե մեջ չի գտնվի մի այնպիսի մարդ, որ այս արժեքավոր գործը հաջողեցնի... Վայել չե, որ Թբիլիսիի նման մեծ քաղաքն, այսքան ժողովուրդը թատրոն չունենա»¹:

«Դրուեա» հայություն ավելի հանգամանուրեն է անդրադառնում Հայ-վրացական թատերական շենքի կառուցման և նրանում մշտական խրմբերի աշխատելու հարցին: «Մի քանի խոսք վրաց թատրոնի կազմակերպման մասին» հոդվածում «Դրուեան» խոսում է այն մասին, որ Հայ և վրաց թատրոնները արդեն բավականաշափ հանդիսատես ունեն, «Վրաց ներկայացմանը, որին ես ներկա էի, — զրում է հոգվածագիրը, — այնքան ժողովուրդ եկավ, որ տեղ չկար, շատերը հետ վերադարձան...»: Թբիլիսիի բատրոնը, երբ Հայկական ներկայացում էր գնում, նույնպես լիրն էր ժողովրդով: «Հետևապես, — շարունակում է հոգվածագիրը, — պարտավոր ենք Հոգալ մեր ժողովրդի համար թատրոն կառուցելու մասին, որը, ինչպես երեսում է, այս բանի կարիքը շատ է զգում...»: Այսուհետեւ միտք է հայտնվում վրաց և Հայ թատրոնների համար մի ընդհանուր շենք կառուցելու մասին: «Թատրոնը պետք է լինի երկու ժողովուրդներին՝ վրացիներին ու հայերինը... Մենք և Հայերը եղբայրներ ենք... եթե երկու ժողովուրդներն ի-

1 «Դրուեա», 1869, № 19:

բար օգնեն, թատրոնի կառուցումը կհեշտա-
նա»¹:

Նույն թվականի վերջերին «Դրոերա» թերթը նո-
րից է անդրադառնում այդ հարցին, թերթը հրա-
պարակում է, որ իր թե Թրիլիսիի հայ թատրոա-
կան գործիչների որոշմամբ հին հայկական սեմի-
նարիայի շենքը վերակառուցվելու է թատրոնի:
«Մենք իմացանք, — կարդում ենք թերթում, — որ
թատրոնի կազմակերպիչները մեծ հաճույքով ըն-
կերակցում են վրացիների հետ նոր թատրոնի
ստեղծման գործում և համաձայն են կառուցել
միասնական թատրոն, եթե վրացիներն էլ իրենց
կողմից հենց սկզբից մասնակցեն այս գործին...
Հետեապես հիմա մեր հասարակայնությունից է
կախված ցույց տալ իրեն և օգնել թատրոնի հիմ-
նադրմանը հենց սկզբից: Այն մասին, որ թատրոնը
օգտակար գործ է, բավականաշափ ասված է մեր
գրականության մեջ: Մենք միայն պնդում ենք, որ
հասարակական թատրոնը նաև ցանկալի է այն
պատճառով, որ մոտեցնում է մեզ (վրացիներին և
հայերին) միմյանց և, բացի դրանից, կասկածից
դուրս է, որ կօգնի մեր աղքատ պրականության
զարգացմանը»²:

1 «Դրոերա», 1869, № 22:

2 «Դրոերա», 1869, № 49:

«Դրոերա» թերթը ոչ միայն պրոպագանդել է
վրաց և հայ թատրոնների համար մի ընդհանուր
շենքի կառուցման հարցը, այլև նա օգտավետ է
համարել երկու աղքերի թատրոնների միասնական
աշխատանքը, այն է՝ կազմակերպվի մի ամբողջա-
կան խումբ և այդ խմբի ներկայացումները տար-
վեն մի ընդհանուր ծրագրով: Թերթի խմբագիր
Սերգեյ Մեսիխին իր «Թրիլիսիի ժամանցի վայրերը
և վրաց թատրոնը» հոդվածում լայնորեն շոշափել
է հայ և վրաց աշխատավորության համար նման
թատրոնի հիմնադրման կարևորությունը և գրել է.
«Մեր հասարակ ժողովրդին (հայերին և վրացինե-
րին—Տ. Կ.) այժմ միայն մի Օրթաճալայի այգի է
մնացել, որտեղ ազատորեն կարող է տարվել կա-
խիթի գինով և, բացի դրանից, հաղարից մեկը կի-
նի, որ կվերցնի թատրոնի տոմս և կդնա դիտելու
իտալական օպերան... Մի խոսքով, մեր հասարակ
բանվորը, եթե չհաշվենք պանդոկները, ուրիշ ժա-
մանցի վայր չլունի և ով գիտե հետազայում երը
կունենա»³:

Կասկածից դուրս է, որ եթե հաջողվեր իրակա-
նացնել հայ և վրաց թատրոախմբերի համար ընդ-
հանուր թատրոն կառուցելու մտահղացումը, ապա
դա բավականաշափ կխթաներ եղայրական ժողո-
վուրդների թատրոնների ստեղծագործական համա-

1 «Դրոերա», 1872, № 28:

գործակցությանը¹, է՛լ ավելի կրաքրացներ նը-
րանց արվեստը։ Սակայն թե՛ վրացի և թե՛ հայ
բուրժուազիան հրաժարվում է թատրոնի համար
բանալ իր քսակը, և լավ մտահղացումը մնում է
լոկ մտահղացում։

Ինչպիս տեսնում ենք, վրաց պարբերական մա-
մուլում արտահայտված հայ և վրաց միասնական
թատրոնի ստեղծման գաղափարն առիթ է հանդի-
սացել խոսկելու նաև երկու դրկից ժողովուրդների
բարեկամության, սերտ համագործակցության մա-
սին; Եվ այդ առիթը միակը չէ։ Երբ թերթում ենք
վրաց մամուլը, նկատում ենք, որ վրաց առաջադեմ
ժուռնալիստները և խմբագիրները ուշադրությամբ
հետևելով օրվա իրադարձություններին՝ զրի են ա-
ռել այն բոլոր դեպքերը, որոնք եղել են հայ և վրաց
ազգերի սերտ փոխհարաբերությունների հետևանք։

Հայ և վրաց գրողների, առաջադեմ գործիչների
պայքարը՝ հանուն երկու ազգերի համերաշխու-

1 Հայ և վրաց թատրոնների նկատմամբ «Դրուեալի» ցու-
ցարեած սրտացագ վերաբերմունքը հուզել է շատ հայ հա-
սարակական զործիների։ Թրիխիսի հայկական թատերախմբի
դեկապար, մնե դերասան և թատերական խոշոր զործի Գեորգ
Զմշկյանը «Դրուեալի» հորելլանական երեկոյում ասել է. «Որ-
պես հայ բնմի ներկայացնեցիլ ե որպես մներ, որը ծառալել է
նաև վրաց բնմին, ննդում եմ թույլ տաք շնորհակալությունն
հայտնել «Դրուեալին», որի տառանամյակն եք տոնում այսօր.
շնորհակալություն եմ հայտնում այն մասնակցության համար,
որ նա միշտ ունեցել է, երբ խոսք է բացվել հայ-վրացական

թյան, բարեկամության է՛լ ավելի ամրապնդման՝
անհետեանք չի անցնում։ Հայերին և վրացիներին
միմյանց հետ ավելի մոտեցնելու, ծանոթացնելու
համար, սկսած անցյալ դարի 70-ական թվական-
ներից, պարբերական մամուլում, փոխադարձա-
րար, ավելի լայնորեն են լուսարանվում հարևան
ազգի կյանքը և գրական-կուլտուրական երեսլինե-
րը, սկսում են հաճախակի թարգմանել միմյանց։
Մասնավորապես վրաց պարբերական մամուլում
հաճախ լույս են տեսնում հայ գրողների մի շարք
գործեր, տեղեկություններ նրանց մասին։ Այսպիս,
օրինակ, վրացական մամուլում բարձր է գնահատ-
վել Բաֆֆին ու նրա կատարած գեր հայ գրակա-
վել Բաֆֆին մեջ։ Բաֆֆու կյանքի և նրա գրական գոր-
ծունեության մասին հատկապես շատ է խոսվել
«Էվերիա» պարբերականում, որը լույս էր տեսնում
իլիա Ծավագվածեի խմբագրությամբ։ Արտահայ-
տելով վրաց ժողովրդի խոր վիշտը հայ վիպասա-
նի մահվան առթիվ, «Էվերիան» մի շարք խմբա-

թեմի ստեղծման մասին։ Բացի Զմշկյանից, ալդ երկուին
ներկա են լինում նաև Գրիգոր Արծրունին, Արդար Հովհաննիս-
ներկա կենացական կուլտուրանի և ուրիշներ։ Սունդուկյանը իր
յանը, Գաբրիել Սունդուկյանը և ուրիշներ։ Սունդուկյանը իր
խոսքում շոշափում է հայ և վրաց արվեստի զարգացման հար-
թյան կենացը, Ար. Տովհաննիսիանը հայ ազգի կողմից հիա-
նալի խոռք է արտասանում և վերջում ասում է. «Այս մեր բա-
րեկամության մնչ ուժ կա, ճիշտ է, զիս փոքր, բայց ամպի-
սի, որ հետագայում կմնանա» («Դրուեալ», 1876, № 24)։

գրական ճողվածներ է տպագրել, որոնցից մեկում կարդում ենք. «Հայ գրականությունը կորցրեց մի պատվական, աղնիվ ու հանճարեղ գրող: Հանգուցյալ Բաֆֆին, որի իսկական ազգանունն էր Հակոբ Մելիք-Հակոբյան, մեծ ծառայություն է մատուցել հայերին իր գրական գործունեությամբ: Նա վերաբնակվեց Պարսկաստանից, նա ապաստան գրտավ այստեղ՝ Թբիլիսիում, այստեղ գործեց իր սիրելի աղջի համար, այստեղ վախճանվեց ու թաղվեց: Այսօր ամբողջ հայ աղջո սգում է այսպես անձամանակ վախճանված գրողին, որն իր կյանքում շատ անգամ է հնչեցրել իր շնորհալի աղջու խոսքը և որը շատ անգամ է շարժել իր հայրենակիցների սիրութ, բարձրագույն զգացմունք ու միտք ներշրնչելով: Այս տեսակ մարդուն աղջոր դժվար է մոռանում, որովհետեւ մարդն իր սրտում կրում էր իր աղջի վիշտը և ուրախությունը»¹:

Սույն խմբագրականում անց է կացվում այն միտքը, որ Բաֆֆին իր ստեղծագործությունների և հայ ժողովրդին մատուցած ծառայությունների համար միշտ կհիշվի իր աղջի կողմից և նրա հիշատակը վառ կմնա հայ ժողովրդի սրտում. «Մարդ երկու անուն պետք է ունենա, — ասում է վրացին, — մեկն այստեղ է մնում, մյուսն իր հետ է տանում: Դու այդ երկուսն էլ ունեիր, և քո հայրենակիցները քեզ հետ հեռացող անվան հետ միասին ճամփեցին

ձեռագործ, ձեռքով շինած անցողական պսակներ, իսկ մյուսը՝ նորը, այստեղ մնացողը հյուսեցին իրենց սրտի հետ անձնուագործ պսակով, որը ոչ անցնում է և ոչ թառամում: Ի՞նչն է այս, եթե ոչ անմահությունը»: Բաֆֆու անմահության մասին նույն միտքն է հայտնել «Իվերիան» իր հետևյալ համարներից մեկում. «Եթենկ չէ անցյալ օրը (Բաֆֆու թաղման օրը—Տ. Կ.) մեզ ապացուցեց, որ քեզ նման մարդը մահով էլ չի մեռնում, ընդհակառակը, դու հաղթեցիր անհաղթ մահին, դու մեղքիր մահը, որովհետեւ քո զանքն ու աշխատանքն անձեռագործ հիշատակ թողեց ամեն մի աղնիվ հայի սրբում և այդ սրտում երկար կպահվի քո անունը, ինչպես մարդարիտը ծովում»¹:

Ահա այսպիսի սրտառուշ տողերով է զնահատվել հայ վիպասանը վրաց պարբերականի էջերում: Պակաս սրտառուշ չէ նաև «Իվերիայի» հաղորդած տեղեկությունները Բաֆֆու կյանքի և գործունեության մասին, որը, վրաց ընթերցողին ժանոթացնելով Բաֆֆու կյանքի անցած ուղու հետ, միաժամանակ նպատակ ունի ցույց տալու, թե ինչպիս նա ծանր զրկանքներ կրելով հանդերձ, կարողացել է ստեղծել գեղարվեստական խոշոր արժանիքներ ունեցող երկեր: «1860 թվականին,— գրում է «Իվերիան», — վախճանվեց Բաֆֆու հայրը, և կյանքում անփործ գրողը ընկավ ծանր աղքատության ու նե-

1 «Իվերիա», 1888, № 88:

1 «Իվերիա», 1888, № 90:

ղության մեջ: Հանգուցյալ գրողը մեծ հաճույքով էր հիշում այն օրերը, երբ քաղցած լուսացնում էր Հավլարարում ունեցած իր ցուրտ սենյակում: Նա մի ձեռքով եռոտանի սեղանն էր բռնում, իսկ մյուս ձեռքով ստեղծում էր այն մեծ պրեհրի նյութերը, որոնցից շատերը զեռևս մնում են անտիք: Այդ ժամանակ հանգուցյալը ավելի շատ էր նեղվում աղքատությունից: Ինքը պարծանքով էր պատմում այն մասին, թե ինչպես վախճնում էր, որ իրեն որևէ մեկը չտեսնի, ուստի ամրող օրը նստամ էր քաղցած և սպասում մթնելուն, որպեսզի գուրս գա և հացթուից հինգ դրոշի հաց գնի:

Մի անգամ նա հրավիրված էր Արձրունու մոտ ժողովի (խոսքը վերաբերում է 1871 թվականին Հրավիրած ժողովին), որտեղ նյութեր էին քննում և ծրագիր կազմում Գր. Արձրունու խմբագրությամբ հրատարակվելիք «Մշակ» թերթի համար: Ահա այդ ժողովին ներկա լինելու համար գալիս է Բաֆֆին: Հավլարի վայրէջքում դուրս ընկավ նրա կողիկի ներբանը: Հանգուցյալը կոշիկի ներբանը թելով կապեց և այս ձեռվ ամրող երիկոն այնպես անցկացրեց պր. Արձրունու մոտ, որ ոչ ոք չնկատեց: Չորս հինգ ժամվա ընթացքում աթոռի վրա նստած էր, ինչպես վրան կպած: Վախճնում էր, որ կոշիկը որևէ մեկը տեսնի և իր շքավորությունն ու նեղությունը հայտնարելի է:¹

1 «Եվերիա», 1888, № 88:

Նախքան Հովհ. Թումանյանի և Ավ. Խսահակյանի համար գալը, Գ. Սունդուկյանից հետո վրաստանում ամենից ավելի սիրել են Բաֆֆուն: Հայ վիպասանի ստեղծագործությունները վրաց ընթերցանության մեջ լայն ժողովրդակայնության մեջ լայն ժողովրդակայնություն վայելի լով հանդիրձ,¹ միաժամանակ առիթ են հանդիսացել վրաց առաջադիմ մտածողների համար՝ խոսելու հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն ավելի ամրապնդելու, փոխադարձարար իրար օգնելու և գրական կուլտուրական կապերը առավել և ընդլայնելու մասին: Այսպիս, օրինակ, վրացերենի թարգմանակած «Խենթ» վեպի հրատարակումը լայն արձագանք է գտնում վրացական պարբերական մամուլում: Այլ առթիվ ընդարձակ գրախոսական է արդյունակ նաև «Խվերիայում», որտեղ գրախոսողը բարձրությունում նաև անդամականությունում նշանակալի առաջատար է գործությունը:

1 Մինչև «Խենթ» թարգմանությունը, վրացերենի հարազմանվել նաև Բաֆֆուն մի շաբթ այլ գործեր ևս. «Դրոնեա» թերթում ապադրվել է նրա «Արքայազն Ալեքսանդրի կյանքը Պարսկաստանում» ակնարկը (1872, № 28): Այնուհետև 1891 Պարսկաստանում մի գրքույթուն Դավիթ Տեր-Դավթյանցի թարգմանությամբ և նրա կողմէից կազմված համառոտ կենսագրականությունը, վրաց լեզվով լույս են տեսնում Բաֆֆուն կրող պատմվածքները: «Մի բանի պատմվածքներ» խորագիրը կրող այս ժողովածությունը անդ են գտնել «Սովոր», «Անբախտ Հոփիսիմեն» և «Ֆախանդանոց» գործերը: Վրացերենի են թարգմանվել նաև «Ֆիբրուարի», «Անմեղ գոհ», «Բիբի-Շարարանի», «Մինն այս Ֆիբրուարի», «Անմեղ գոհ», «Բիբի-Շարարանի», «Տիմակ-Փուշ» և այլ երկեր:

Ճըր գեանատելով «Խենթի» գեղարվեստական ար-
ժանիքները, նրանում թուրքական հարստահարիշ-
ների դեմ տարած հայ ժողովրդի պատագրական
պայքարի վարպետ պատկերումը, միաժամանակ
կանգ է առնում գրականության միջոցով հարեան
ժողովրդին ավելի մոտիկից ճանաշելու հարցի
վրա: «Ամոթ է մեզ համար, — գրում է գրախոսա-
կանի հեղինակը, — որ այսքան մոտ հարեան ազ-
գին, ինչպիսին են Հայերը, մենք չենք ճանաշում,
ժանոթ չենք հատկապես նրանց գրականությանը,
որ չի կարող հետաքրքիր շինել: Մեզ ներելի է, եթե
եվրոպական որեւէ գրականության ժանոթ շինենք
կամ Հետաքրքրվենք, իսկ հայ գրականությունը ոչ
միայն պետք է հետաքրքրի մեզ և ժանոթ պետք է
լինենք նրան, այլև անհրաժեշտ է, որ մենք ուսում-
նասիրենք այն, ինչպես և Հայերը՝ վրացականը:
Վրացիների և Հայերի շահերն այնպես են զոդված
իրար հետ, որ մտքով կույրն անդամ չի կարող բա-
ցասել այս հանգամանքը: Ուրեմն անհրաժեշտ է
փոխադարձ հարաբերությունների ուժեղացում¹,
Այսուհետև գրախոսողը շնորհակալություն է հայո-
նում թարգմանչին և հուսաղովում, որ «Խենթից»
հետո վրաց հասարակայնությունը Բ. Եվանգուլո-
վի միջոցով կծանոթանա «Դավիթ-Բեկին» և այլ

երկերի¹, որի շնորհիվ նա կհամարվի վրաց թարգ-
մանիչների մեջ ամենալավը և կվայելի վրաց ըն-
թերցասեր հասարակության հարզանքը:

Պակաս ուշագրավ չէ հետեւյալ փաստը: 1892
թվականին մահանում է Գրիգոր Արծրունին: Վրաց
հասարակայնությունը մեծ վշտով է նշում հայ կուլ-
տուրայի դործիչ մահը: Նշանավոր գրող Գիորգի
Սերեթիին Արծրունու թաղման իր հրաժեշտի խոս-
քում բնդղում է հանգույցալի ծառալությունները
Հայերի և վրացիների եղբայրական փոխհարաբե-
րությունների ամրացման գործում: Այդ մասին
«Իվերիան» գրում է: «Պարսն Սերեթիին վրացե-
րեն ասաց, որ հանգույցալոր սրտանց կողմնակից
էր վրացիների և Հայերի միությանը, քանի որ եր-
կու աղղերն էլ առանձին-առանձին թույլ են, իսկ

1 1902 թվականին «Մոռամբե» ամսադրում սկսվում է տպագրելի Բաֆֆու օնենթա վեպը, որն առանձին դրույ լույս
է տեսնում: 1903 թվականին, Վրացերեն հրատարակված «Խենթի-
թի» առաջարանում թարգմանչից գրում է, որ շիմ կարծիրով,
իրար հետ ծանոթանալու ամենալավ միջոցը մեկս յուսի դրա-
կանությանը փոխադարձ ծառալեն է: Այնուհետև Բ. Եվան-
գուլովը իր պատրաստականությունն է հայտնում այդ դործին
անձնիքրաբ ծառայելու մասին և ավելացնում, որ ինքը Հա-
յունից վրացիներին է թարգմանելու մի շարք երկեր, որոնց
թվում շնան մի մեծ պատմական վեպ «Դավիթ-Բեկ» անոնվագ,
որտեղ հետինակը (Բաֆֆին) խոսի է նաև Վրաստանի մասին
և լավ նկարադրի այն ժամանակա «XVIII դարի առաջին
կես» ազնվականության կյանքը: Բայց «Դավիթ-Բեկը» ան-
հայու պատճառներով չթարգմանվեց:

միասին մեծ ուժ են ներկայացնում: Այդ պատճառով այս աճյունի առաջ խոսք տանը միմյանց, որ այստեղ պառկած հարգանքի արժանի մարդու պատգամը չենք մոռանալ: Ժողովուրդը երկարատև «ամեն»-ներով և «կեցցե-կեցցե»-ներով արտահայտեց իր համակրանքը բոլոր ճառախոսների և առանձնապես Արասխանյանի և Սերեթելու նկատմամբ»¹:

Այսպէս, հասարակական-կուլտուրական երեւույթների բազմաթիվ միջոցառումներ անցել են հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման նշանաբանով: Բերենք մի օրինակ ևս. 1908 թվականի հունվար ամսին նշվում է Թթիլիսիի հայկական թատրոնի 50-ամյա հորելյանը: Հունվարի 27-ին Գ. Սունդուկյանի պատվավոր նախագահությամբ տեղի ունեցած հայ գրամատիկական ընկերության տոնական նիստում, հայ թատրոնի գործիչների՝ Գ. Սունդուկյանի, Գ. Զմշկյանի, Տեր-Դավթյանի, Սիրանուշի և Հրաչյայի հետ միասին,

1 «Եիվերիա», 1892, № 277: Այստեղ արձե հիշատակել, որ երբ մահանում է Գիորգի Սերեթիլին, նրա թաղման ժամանակ հայ աղքի անոնցից կարեկցական խոսք է արտասանում «Մշակ» թերթի խմբագիր Ա. Քալանթարը: Վրաց պարերականը նշում է, որ մահախոսական ասողը հիշատակելով հանգուցյալի հասարակությանը մատուցած ծառայությունները, առանձնապես ընդգծել է Սերեթելու այն համոզմունքը, որ պուրակական կրանքի առաջադաշտման համար անհրաժեշտ կովկասի բոլոր ազգությունների համերաշխ համագործակցու-

ընկերության պատվավոր անդամներ են ընտրվում վ. Արաշիձն և Ա. Սումբաթաշվիլին: Հետևյալ օրը տրվում է տոնական ներկայացում, որին վրաց թատրոնի և դրամատիկական ընկերության կողմից ներկա են լինում Ն. Գարունիան և Ն. Էրիսթավին: Դաշլիճը ծափահարություններով է ընդունում Ն. Էրիսթավիի՝ հայ և վրաց ժողովուրդների եղբայրական փոխհարաբերությունների անկեղծ զգացմունքով ներծծված ողջույնի խոսքը: Ն. Էրիսթավին ասում է. «Այսօր հիսուն տարի է, ինչ հայ թատրոնը անվեհներաբար ծառայում է հայրենի բեմին և ժողովրդին: Կեսդարյա անխոնչ գործունեությունը հասարակական բնագավառում հիշատակության արժանի է և ամբողջ հայ ժողովրդի համար պանծալի: Բայց առանձնապես հիշատակության արժանի է բնմական գործունեությունը այնպիսի հանգամանքներում որված ազգերի համար, ինչպիսին ենք մենք՝ վրացիներս և հայերս: Անարդարացի մոտեցումը մեր երկու հարեւան ազգերի նկատմամբ զգալ տվեց, թի ինչ գդրախտություն է ներկայաց-

թյուն, այդ թվում նաև հայերի ու վրացիներին: Ա. Քալանթարը, շարունակում է «Կվալի» հանդիսը, —ասաց, որ «Հանդուսյալի երկարամյա գործունեության ընթացքում այս գծերը մշտապես մնացել են նրա էության մեջ... Նա իր անոնք զրեց այնպիսի պատվաժան դեմքերի թվում, որոնք զանազան ազգությունների միջն փորձում էին խաղաղություն ստեղծել և կոչ էին անում դեպի համերաշխություն» («Կվալի», 1900, № 4,էջ 57):

նում ժողովրդի համար, երբ հալածում են նրա լի-
գուն և ժողովրդին: Այդ դրության մեջ գտնվող ժո-
ղովրդին միմիայն մխիթարում է Հարազատ քեմը
և այդ քեմն է առաջնորդում նրա զարգացմանը ու
ամրապնդում հոգում լավագույն ապադային հաս-
նելու հույսը: Թիմը ոչ միայն կյանքի հայկին է,
այլ նաև լավագույն կամուրջ է ժողովրդի մեջ կու-
տքրա, լուսավորություն և ինքնադիտակցություն
ներմուծելու համար: Ահա, այսպիսի պատվարժան
նպատակի է ծառայել հայկական թատրոնը այս
հիսուն տարիների ընթացքում և շնայած այն բա-
նին, որ նրան հանդիպել է տատասկավոր ուղի և
բազմաթիվ դժվարություններ, բայց հաղթահարել
է այդ բոլորը և արժանավայշել կերպով կատարել
իր իսկական պարտքը ու հայրենի քեմը հասցրել
րարձր զարգացման...»¹:

Հանդիսավոր երեկոն անց է կենում ոռու, հայ և
վրացի ժողովուրդների բարեկամության նշանարա-
նով: Հայ դրամատիկական ընկերության ներկայա-
ցուցիչը շնորհակալություն հայտնելով ոռու և վրա-
ցի բարեկամներին, նշում է հայ թատրոնի կողմից
անցած բարդ, դժվարություններով լի ուղին և ընդ-
դում, որ այդ խոշնդուտների հաղթահարման գոր-
ծում հայ թատրոնի մշակները միայնակ չեն եղել.
«Նրանք Զեղ հետ ձեռք-ձեռքի են տվել, ընկեր ոռու-
ներ և վրացիներ: Դուք մեզ հետ միասին տարել եք

յուրօն ու սովոր, մեզ հետ միասին լաց եք եղեւ:
մեզ հետ միասին կոչ եք արել, կենաց և մահու
կոփի եք մղել աշխարհի մութ ուժերի դեմ...»¹:

1911 թվականի մայիս ամսին նշվում է հայ ա-
կանավոր գրող Ա. Շիրվանզադեի գրական գործու-
նեության Յթ-ամյակը: Հորելլյարը բազմաթիվ ող-
ջույնի ուղերձներ է ստանում տարրեր հասարակա-
կան-կուտուրական կազմակերպությունների կող-
մից, որոնց թվում նաև վրացական «Սախալիո գա-
ղթի» («Ժողովրդական թերթ») պարբերականի և
ֆիլհարմոնիայի կողմից: Մենք այստեղ բերում ենք
երկու ուղերձն էլ, որովհետև նրանք գեներ չեն հրա-
սարակվել և գտնվում են Հայկական ՍՍՌ ԳԱ Գրա-
կանության և արվեստի թանգարանում: Ահա վրա-
ցական ֆիլհարմոնիայի ընկերության ուղերձը.

«Մեծաբազու, փառապանծ երկրի որդի Շիրվան-
պաղե,

Թբիլիսիի վրացական ֆիլհարմոնիայի ընկե-
րությունը միծ համակարանքով և հիացմունքով նր-

¹ «Տարեգրություն 1907—1908 թթ.», Հայ դրամատիկա-
կան ընկերության ժողովածուս

Հետաքրքրական է նշել, որ նոյյնափակ բարեկամական
մինուրտում է անցել Թբիլիսիի վրաց թատրոնի վերականգ-
ներման Յթ-ամյակին նվիրված տոնակատարությունը 1900 թվա-
կանի Հունվարի 2-ին: «Եվբրիան» նշում է, որ տոնակատա-
րության ժամանակ ասված բազմաթիվ շնորհավորանքներից
ամենից ուշագրավը եղել են հայ գործիչների ողջույնի խոս-
քերը: Կարդացվել է «Աղրիւր» և «Տարազ» ամազոնքի ուղեր-

շում է ընդհանուրի համար հիշատակության արժանի օրը և մյուսների հետ մեկտեղ պարտաւորված է զգում անձամբ արտահայտելու իր խոր հարգանքը»: Այսուհետև ընդգծելով բարձր առաջադիմ գաղափարներով ներծծված կուլտուրայի դերը ժողովրդին դաստիարակելու, լուսավորելու զործում, ուղերձում ասվում է . «Երիվանի ներկայացուցիչը, որ բնագավառին է՝ պատկանելիս լինի նա՝ պոեզիայի, երաժշտության, նկարչության, ճարտարապետության, քանդակագործության և ուրիշ նման գիտելիքների, պատկանում է աշխարհին: Նա բացառապես չի պատկանում մի որևէ պազության, բայց բոլորի համար թանկագին է: Նկատի ունենալով այս բոլորը Թթվիլիսի վրաց ֆիլհարմոնիայի ընկերությունը օրհնում է Զեր 30 տարվա տատասկներով ծածկված շատ ժանր ուղին, բայց արդասավոր գործունեությունը, որի ընթացքում որպես քարաժայու անհողողող եք մնացել և պատկով ժառայիլ եք մեկ անդամ ընտրած Զեր նպատակին:

Ճը, որտեղ ասված էր, «Շատ հարգելի վրաց դրամատիկական ընկերությանը ուղարկուի» և «Տարադիր խմբագրությունը չերմորեն, եղարյարար օրհնում է այսօրվա տոնը—արվեստի տաճարի հիմնամյա գոյության առթիվ: Այդ կես դարվա ընթացքում ով կարող է թվել, թե որքան զրկանքներ, տանջանքներ եք կրել, որ կարդացել եք պահպանել այն տաճարը, որը գեղեցկություն է ծնում, լավ իդեալներ է առաջանում, քարացած հոգիներ է փափկացնում և ճաշակ ու դդացնում է ստեղծում: Թող երկար տարիներ ամուր մնա զեղեցկության

Ցանկանում ենք առաջիկայում Զեր երկարաժանությունը և բազմաթիվ տարիներ»¹:

«Սախալիս զաղեթի» խմբագրության ուղերձում ասված է.

«Մեծարդու հոբելյար.

«Սախալիս զաղեթի» խմբագրությունը սրտադիմ համակրանքով միանում է իր հարեւան հայ հասարակայնության այսօրվա հոբելյանական հանդիսին:

Թող այս հոբելյանական տանակատարությունը արժանի կերպով զնացատի հայրենի ասպարեզում զործող քուրմին և նրան հարգանք մատուցելով, միանա համաշխարհային արվեստին և համերաշխության զաղափարին ու ճշմարիտ սիրով հատուցի իր հայրենիքի վրա լուսավորության շահ բարձրացնող արվեստի անձնագոհին»²:

տաճարը՝ մեր սիրելի և դրայրական վրացիների ինքնադիմակագության ամբապնդման ոյունը: Այսուհետեւ ողջույնի խոսք է ասում Հայկական թատրոնի դերսանների ներկայացուցիչը, «Կես դար է անցել թատրոնի հիմնադրման օրից,— ասում է նա (մեր Հայաջողվեց պարզել ողջունողի ով լինելը—Տ. Կ.),— և հիմա հասարակությունը աստիճանաբար հասկանում է իր նախնիների մտքի ճշտությունը, հասկանում է «Բաժանությունների կոմեդիայի միաբար» որ ամբացնում է միասնությունը: Եթև որտեղի առաջին տեղը արվում է միասնությանը, սեւ կանունը, որտեղ առաջին տեղը արվում է միասնությանը,

1 Հայկ, ՍՍԾ ԳԱ Գրականության և արևեստի թանգարան, Երբավանզանի փոնդ:

2 Խոյն տեղում:

Ինչպես տեսնում ենք, Հայ և վրաց ժողովուրդների համբաշտաշխության զաղափարը միշտ էլ եղել է վրաց առաջադեմ գործիչների ուշադրության կենարոնում։ Այդ նորատակին իր զգալի լուման է ներդրել նաև Հայտնի հասարակական գործիչ, գրող և մանկավարժ Յակոբ Գոգերաշվիլին։ Նա նույնպես իիհա Ճավճավածիկ և Ակակի Սերեթիկի հետ միասին կրթությամբ պայցրաբել է նացիոնալիստների դեմ։ Գոգերաշվիլին Հանդես է եկել մի շարք հրապարակախոսական հոդվածներով («Քարթալինա», «Ինչ էինք երեկ» և այլն) և ապացուցել, որ երկու եղբայրակից ժողովուրդների միջև նացիոնալիզմի թույն սերմանող զաղափարախոսներն ամեն ինչ ներկայացնում են կեղծ ու մտացածին ձևով։ «Անտագոնիզմ, փոխաղարձ ատելություն, — ահա տերմիններ, որոնցով բնորոշվում է Հայերի և վրացիների փոխհարաբերությունները՝ Հակառակ հաղարավոր փաստերի, որոնք խստ հակասում են նման կեղծ պնդման»։ — դրել է Գոգերաշվիլին։ Երկու եղ-

բնի, մենք Հավատացած ենք, որ ամեն ցանկություն, ամեն մի բարի գործ կապակի Հաչողությամբ։ Մենք, այս նուրբ տաճարի ծառայողներս, Հայ բնմի գերասաններս, տեսնում ենք ինչպիսին են Զեր Հաչողությունները թատրոնի բնագավառում։ Ուրեմն թույլ տվեք մեզ Զեր տռնակատարությանը մասնակցել խորին Համահրանքով, թույլ տվեք նմանվել Զեզ այս գործունեության բնագավառում, թույլ տվեք մենք էլ այս տաճարում լսենք Համերաշխության և միասնության խոսք։ Չնայած այսօր երկու ազգերն էլ ունեն ազգային բնի, բայց խորապես Հավա-

բայրակից ժողովուրդների նկատմամբ նման Հայացքներ ունենալը Գոգերաշվիլին անվանում է վայրենի, վնասակար, համարում է նախապաշարմունք, թյուրիմացություն, մի կողմից տղիտության արդյունք, մյուս կողմից՝ շարամտության։ Այդ բամբասաներից խորապես զայրացած, Գոգերաշվիլին պատմական փաստերով ապացուցում է, որ այդ ազգությունների միջև ոչ միայն անտապոնիզմ չի եղել ու չկա, այլև նրանց մեջ «գոյություն ունի ամենաամուր, ամենաարտակից եղբայրական փոխհարաբերություններ»։

Ոչնչացնելու համար վրաց ազգայինների այն թյուր պնդումը, որ իբր թե Վրաստանում ապրող Հայությունը նեղ օրերին՝ արտաքին թշնամինների հարձակման ժամանակ, վրաց ժողովրդի հետ միասին ոտքի չի կանգնել պաշտպանելու Վրաստանը, Գոգերաշվիլին պատմական փաստերով ապացուցում է Հակառակը։ Օրինակ, նա Հիշատակում է, ինչպես վիրը նշվեց, XVIII դարի վրաց պատմիշ էղնատաշվիլու կողմից զրի առնված Հայ քահանացի անձնազո՞ւթյունը 1709 թվականին Գորի քա-

տացած եմ, որ նրանց ուղին լիքն է տատասկներով, առաջիկայում բազմաթիվ զժվարություններ են սպասվում և այդ իսկ պատճառով, եղբայրներ, ձեռք-ձեռքի տված անցնենք այդ խոչընդունակությունը, ոչնչացնենք այդ տատասկները, որպեսզի Հարցուրամակի տոնակատարության ժամանակ հարթ ու պայծառ ուղի ստեղծներ դեպի այս հիանալի տաճարը, որպեսզի ապա-

ղաքը օսմանյան Հրոսակախմբերի ավերածություններից փրկելու գործում և ապացուցում, որ Վրաստանի հայ բնակչությունը վրաց ժողովրդի հետ միասին միշտ էլ անձնուրաց կովի է ելել և Վրաստանը պաշտպանել թշնամիների ոտնձգություններից:

Գոգերաշվիլին պնդել է, որ չնայած լեզվի և դավանանքի տարրերությանը, հայերը և վրացիները «ըստ իրենց ծագման՝ մոտ, բարեկամ ազգություններ են և ըստ ամբողջ կենցաղյին կերտվածքի զարմանալի նմանություն ունեն»: Բացի դրանից, «երկու ժողովուրդների պատմական ճակատագիրը եղել է այնպիսին, որը պետք է ուժեղ կերպով օժանդակեր եղբայրության և միության ամրապնդմանը նրանց միջև»: Ինչումն է կայանում պատմական ճակատագրի՝ ընդհանրությունն ըստ Գոգերաշվիլու. Երկու ժողովուրդներն էլ ընդունելով քրիստոնեությունը՝ դառնում են քրիստոնեական քաղաքակրթության կրողները և տարածողները Փոքր Ասիայի հյուսիսային մասում: Ծուտով երկու ժողովուրդները ենթարկվում են բազմաթիվ այլա-

զա սերունդը անարգել կերպով լոի ճշմարիտ խոսք: Վերջացնելով մեր անկեղծ շնորհավորանքը, ցանկանում ենք վրաց թատրոնին բարդավանում և լավագույն ապագա: Այսպես, սիրելի եղբայրներ, միաձայն բացականչենք. կեցց՛ մեր եղբայրակից վրացիները, կեցց՛ նրանց կողմից ստեղծած ազգային թատրոնը («Խվերիա», 1900, № 2):

դավան թշնամիների կատաղի հարձակման: Օտարապգի զավթիչները տեսնելով, որ անհնարին է զըրկել հայերին և վրացիներին նրանց ազգությունից և կրոնից, ձգտում են բնաշնչել այդ ժողովուրդներին: Ընդհանուր վտանգը միացնում է հայերին ու վրացիներին, և նրանք միասնաբար պաշտպանում են իրենց ազգությունը, կրոնը և գոյությունը: Պատմական այս էքսկուրսից հետո Յա. Գոգերաշվիլին դրել է. «Պարտք եմ համարում հիշեցնելու, որ հայերի և վրացիների, հնում երբեմնի ունեցած մի դավանանքի ու համերաշխության շնորհիվ և՛ Հայաստանը, և՛ Վրաստանը հզոր էին ու անվեհեր: Հետագայում Հայաստանի կործանումն ու Վրաստանի թուլանալը հետևանք էին այն անմիտ, անախորժ սարաձայնությունների և կոփների, որ սերմանեցին երկու ազգերի հոգեորականությունը եկեղեցիների անջատման ժամանակ»: Վրաց գողող երկու ժողովուրդների հասարակական գործիչներին կոչ է արել և խորհուրդ տվել պատշաճ եղբակացություններ հանել անցյալի դասերից: «Այսօր,— գրել է Գոգերաշվիլին, —վրացիների և հայերի միջև ազգային, տոհմական, տնտեսական հողի վրա տարածայնության սրումը կործանիլ ազգեցցություն կունենա երկու ժողովուրդների համար, ինչպես այդ տեղի ունեցավ անցյալում կրոնական կոփների ժամանակ»:

Յակոբ Գոգերաշվիլու սիրոտը լի էր բարիդրա-

ցիական զգացմունքներով դեպի հայ աղօք, նա
բուռն կերպով տենչացել է, որ հարևան հայ ժողո-
վուրդը աղատ ու ապահով աճի ու զարգանաւ: Պա-
տահական չէ այն կտակը, որ թողել է ֆոփերաշվի-
լին. նա իր կարողության մի մասը կտակել է վրաց
աղջին, իսկ մյուսը՝ հայ և աղբբեշանցի ժողովուրդ-
ների կուլտուրական կարիքների համար:

3

Վրաց առաջադեմ գրողների և դեմոկրատ գոր-
ծիչների տրադիցիաները՝ տարրեր ժողովուրդների,
մասնավորապես հայերի և վրացիների միջև բա-
րեկամական փոխհարաբերությունները զարգացնե-
լու գործում, իրենց պարարտ հողը գտան Անդըր-
կովկասում սովորական կարգեր հաստատվելուց
հետո: Կոմունիստական պարտիայի լենինյան աղ-
դային քաղաքականության շնորհիվ ավելի ամրա-
պլինդից հայ և վրաց ժողովուրդների բարեկամու-
թյունը: Ինչպես մեր մեծ Միության բոլոր գրողնե-
րը, այնպես էլ Սովորական Վրաստանի գրողները
և արվեստի գործիչները, ողեշնչված ժողովուրդնե-
րի բարեկամության՝ այդ իսկական բանաստեղծա-
կան թեմայով, իրենց լուման հն մտցնում բազմ-
ազ Սովորական Միության հիմքերի հիմք հան-
դիսացող ժողովուրդների բարեկամությունն առա-
վել ևս ամրապնդելու գործում: Սովորական վրաց

գրականության ինչպես խոշորագույն գրողները,
այնպես էլ երիտասարդ ներկայացուցիչները, շա-
րունակելով իրենց դեմոկրատ նախնիների լավա-
գույն տրադիցիաները, ավելի հաճախակի են անդ-
րադառնում հայ և վրաց ժողովուրդների եղբայրա-
կան համագործակցության գնդարիվնատական նկա-
րագրությանը: Վրաց գրողները պատկերում են սո-
վորական կարգերի օրոք ծաղկած Հայաստանը,
նրա շքնաղ բնությունը, իր պայծառ ապագան կեր-
տող հայ ժողովուրդին: Կարելի է առանց վարանման
ասել, որ վրաց մամուլում և գրողների աշխարհում
համարյա առանց բացառության արձագանք է գը-
տել հայ ժողովուրդի համար նվիրական համարվող
ամեն մի իրադարձություն՝ լինի ու Հայաստանում
սովորական կարգերի հաստատման տարեդարձ
կամ հայ գրողների կյանքին ու գրական գործու-
նեությանը նվիրված հորելյան և կամ այլ տոնա-
կատարություն:

Սովորական Վրաստանի կուլտուրայի գործիշ-
ները, այդ թվում նաև գրողները հասուն սիրով ու
հարգանքով են խոսել հայ ժողովուրդի հանճարեղ
բանաստեղծ, ժողովուրդների բարեկամության դրո-
շակակիր Հովհաննես Շումանի մասին: Ահա ինչ
է գրել 1924 թվականին «Թեհատրի դա ցիովերա»
(«Թատրոն և կյանք») պարբերականի հոդվածա-
գիրը.

«Մուսթավելու պողոտայով անցնելիս երբեմն

ձեզ կհանդիպեր մի ծերունի, որն ակամա գրավում
էր ձեր ուշադրությունը:

Անկարելի է, որ դուք մոտովն անցնեիք ու նրան
չնկատեիք, նրա ամբողջ արտաքինը, հաղթանդամ
մարմինը, դեմքի արտահայտությունը չափազանց
գրավիչ էր իր ազնվությամբ:

Քաղաքավարի, կրթված, մաքուր, դեպի ամեն-
քը լի սիրով և ազնվությամբ. ահա թե ինչ կարող
էիք կարդալ նրա աչքերում, ահա թե ինչ էր վկա-
յում նրա զեմքի ամեն մի մասը:

Այսօր Ռուսթավիլու պողոտան որրացած է. նը-
րան այլևս չի զարդարում այն մեծ ու ազնիվ հրո-
շակավոր ծերունին, և մենք ամենքս զգում ենք այդ
որբությունը, այդ մեծ կորուստը:

Ո՞վ էր այդ ծերունին:

Հովհաննես Թումանյանը»¹:

Այսուհետև հողվածագիրը, տալով Հովհ. Թու-
մանյանի կյանքի ու զրական գործունեության բը-
նութագիրը, շարունակում է. «Թումանյանն իր աշ-
խատավոր ժողովրդի հոգացողն էր, նրա տենչերի
արտահայտիչը, նրա իղձերի երգիչը, նրա վշտերի
սփոփիչը և միևնույն ժամանակ ոչ պակաս սի-
րելի նաև մեզ համար, որովհետև նա սիրեց Վրաս-
տանը, ինչպես իր երկրորդ հայրենիքը՝ Վրաստանի
արեր, գեղեցկությունը և լավ զգացմունքները
հյուսված են նրա բանաստեղծության մեջ.

Ենենք՝ տեսով ու ճանաշով,
Ընկեր, ախպիր, մեր ու քոր՝
Մեր քամանչով, ուրախ կանչով
Գնանք գեղ կյանքն ընդհանուր:

Այս էր Հովհ. Թումանյանի տենչանքը. վրա-
ցիները և հայերը, Վրաստանը և Հայաստանը, եր-
կուսն էլ նրա համար թանկագին էին; Նա ուզում
էր այս երկու ազգերի միջև ստեղծել մի ընդհանուր
եղբայրական բարեկամություն և համերաշխու-
թյուն, որին նա նվիրված էր և որի անկեղծ քա-
ռողին էր:

Հովհ. Թումանյանը լուսաբացի ավետարեն
էր, աշխատավոր ժողովրդի պայծառ առավոտյան
Տարիելն էր: Իր ամբողջ էությամբ նա ձգտում էր
ու երգում այս պայծառ առավոտը, որովհետև նա
աշխատավոր ժողովրդի ազատազրման ոգեշունչ
քարոզիչն էր»¹:

Զերմությամբ, հարազատի անկեղծությամբ ու
անմիջականությամբ գրված սույն տողերը վրա:
պարբերականը տպագրել է Հովհ. Թումանյանի
մահվան առաջին տարեգարձի կապակցությամբ:

Խոր վիշտ է պատճառել վրաց ժողովրդին Թու-
մանյանի մահը: «Հայ ականավոր բանաստեղծ
Հովհաննես Թումանյանի Մոսկվայում վախճանվե-
լու լուրը ծանր տպավորություն գործեց բանվոր-
ների, գյուղացիների և աշխատավորական կազմա-

1 «Թիատրի դա ցխովքեա», 1924, № 17:

կերպությունների վրա»¹, — զրել է «Կոմունիստի» թերթը:

Հովհ. Թումանյանի մահը ծանր տպավորություն է գործել նաև բանաստեղծ Իսսեր Գրիշաշվիլու վրա: Նա հայ պոետի մահվան առթիվ զրած «Վրաստանի բարեկամին» բանաստեղծության մեջ արտահայտելով իր ծանր վիշտը, այդ մեծ կորուստի մասին զրել է.

Հերթը ճերմակ էր, հասակը սակալն

Արժավենու պես վեր ու սլացիկ.

Կեհց մեզանից մահը դժմակամ

Քո արևաշոնձ կյանքը գեղեցիկ:

Արցոնքն աշքերիս չի' էլ ցամաքում,

Ի՞նչ խոսք ասեմ ես, սփոփեմ որի՞ն.

Արդոք, խորտակված սիր աշխարհում

Կա' մարդ, որ զա իմ ցավը խօրին:

Դոն' մ ես..., Ահա' անցյալը քեզ հետ,

Սակայն ոչ թի հին փառքը տանելով.

Երկինքն ամպերով ահա լուսավետ—

Կթացրանա քո լույսը ժպիաներով²:

Հետաքրքրական է Գրիշաշվիլու հուշերն այս բանաստեղծության վերջին տան մտահղացման մասին. «...Գրական աշխատանքի շուրջը զրուցից հետո Հովհաննեսը հայտնից. «ցանկանում իմ իրկար ժամանակվա իդս իրագործել, ցանկանում

եմ թարգմանել Հոմերոսին, Ֆիրդուսուն և Ռուսթավելուն, մասնավորապես հավանում եմ «Վեհվիսիս տղասանին» և, եթե հիվանդությունս շամանգարեց, մտածում եմ այս մեծ աշխատանքին ձեռնարկել գարնանից»:

Այլև Հնարավորություն շունեցավ:

Երբ լսեցի նրա մահը, անմիջապես հիշեցի այն երեք պոետներին, և այդ առթիվ իմ գրած բանաստեղծությունն այսպես վերջացրի.

Կրացվի ծոցը անդրշիմյան,

Կթեցվի արևն հասկից ավելի,

Եվ քեզ կողշոնք փոնչն երրորդության,—

Ֆիրդոսին, Հոմերն ու Ռուսթավելին ։

Իր սերը Թումանյանի նկատմամբ Գրիշաշվիլին արտահայտել է հայ բանաստեղծից կատարած բարձրորակ թարգմանություններով, որոնց շնորհիվ Թումանյանը գարձալ վրաց ժողովրդի սիրելին: 1924 թվականին Գրիշաշվիլու թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսնում Հովհ. Թումանյանի «Ընտիր երկերը»: Իր թարգմանությունների առթիվ վրաց բանաստեղծը զրել է. «Եմ նպատակն էր հանգուցյալի հիշատակը հավերժանելու համար տված խոստումս պարզերես կատարելը (մի անգամ զրուցի ժամանակ ես և Թումանյանը իրար խոստացանք թարգմանել մեր երկերը)»:

1 Կոմունիստիք, 1923, № 69:
2 Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, Երևան, 1956,
էջ 86:

Ես ցանկանում էի Հովհ. Թումանյանին, Վրաստա-
նի ամենալավ բարեկամին, վրաց ժողովրդին ներ-
կայացնեի իր իսկական պատկերով...

Էլ շնչ կարող մտնել նրա ընտանիքը բացճա-
կատ և ոչ էլ նրա կենաց բաժակը դատարկել հան-
դիսավոր երեկոյթներին։ Այս թարգմանությունը
թող հոգիթաս լինի այն թանկապին հանգուցյալի
համար, որի հիշատակը դեռ չի մարել մեր սըր-
տում։ Ես խոստում կատարեցի»¹։ Մի այլ տեղ, իր
կատարած թարգմանությունների կապակցությամբ,
Գրիշաշվիլին զրել է. «Ես ցանկանում էի, որ այս
թարգմանությունը վրաց բանաստեղծի կողմից եղ-
բայրական ազգության լավագույն բանաստեղծի
հուշարձանը լինի, այն բանաստեղծի, որին ան-
սահման սիրով սիրում է մեր ժողովուրդը և որը
պայքարում էր այդ ազգությունների եղբայրության
համար»²։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հովհ. Թու-
մանյանի և վրաց բանաստեղծի անձնական ծանո-
թությունը, նրանց բարեկամական-ստեղծագործա-
կան փոխհարաբերությունները թիւ զեր չեն կատա-
րել մղելու Գրիշաշվիլուն ուսումնասիրելու հայ-
վրացական գրական-կուլտուրական կապերը, որի

1 Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, թարգմ. Ի. Գրիշաշ-
վիլու, 1924, էջ 21։

2 Ի. Գրիշաշվիլի, Հիշողությունների մի էջ, «Պրոլետար»,
1938, № 67։

հետեւանքը եղել են հայ գրողներին և հայ թատրո-
նին նվիրված մի շարք արժեքավոր ուսումնասիրու-
թյունների Այս առումով հիշատակության է ար-
ժանի հետևյալ փաստը, որ վերաբերում է Հովհ.
Թումանյանի Գրիշաշվիլու առաջին ծանոթությա-
նը և զրա արդյունավելու հետևանքների պատմու-
թյանը։ «Հովհաննես Թումանյանի հետ, — զրում է
ի. Գրիշաշվիլին, — ես ծանոթացա 1914 թվականի
մայիսի 15-ին, հիշտ այն օրը, երբ արձան էր զրո-
վում Սայաթ-Նովային Հին Թբիլիսիում։

Այս տոնակատարության նախաձեռնողը Հովհ-
աննես Թումանյանն էր։ Թերթերում հայտարար-
ված էր, որ արձանի բացման եկողները գան Սա-
յաթ-Նովայի սիրած ծաղկով—ակարմիր վար-
դով...»։

Հենց այս տոնակատարությանն էլ որոշեցի, որ
վրացիներին էլ ծանոթացնեմ այս մոռացության
մատնված Հին Թբիլիսիի երգչին, նոր սաղ տամ
նրա ձեռքը։ Այս նպատակով ես ձեռնամուխ եղա
աշխատանքի և, 1918 թվականին, լույս ընծայեցի
առանձին բրոցյուրով Սայաթ-Նովայի մասին մե-
նագրությունը, նրա վրացերեն երգերի հետ միա-
սին։

Այս բնագավառում իմ աշխատանքը շատ դրժ-
վար կլիներ, եթե ինձ չօժանդակեին ակաղեմիկ Ն.
Մառը, նկարիչ Գ. Բաշինջաղյանը և մասնավորա-
պես Հովհաննես Թումանյանը։

Երբ որևէ թվական ես դժվարությամբ էի ձեռք
բերում, ինձ օգնության էր գալիս Հովհանն ։ Թուման-
յանի մեծ էրուպիցիան։ Բարձրանում էի նախկին
վոզնեսենսկայա փողոցով, զգուշ թակում էի զու-
ռը, նրա աղջկեր՝ նվարդն ինձ ուղեկցում էր հոր
մոտ, և նա էլ իր սովորական ժամանում, — այն ժպի-
տը մի բանաստեղծություն արժեր, — հարցուիրու
էր անում, թե ինչպես է ընթանում աշխատանքը։

Ահա այսպիս Սայաթ-Նովան մոտեցրեց ինձ
Հովհաննեսին։

Մի անգամ Հովհաննեսը հիվանդ էր, սպասում
էր բժշկի, և ես հանկարծ զուրը բացի։

— Ինչ կոնիմ հեքիմ,
Ինչ կոնիմ չարեն,
Քու տվածն ուրիշ զիդ է,
Ուրիշ զիդ։

Ինձ դիմավորեց նա Սայաթ-Նովայի այս հայտ-
նի բանաստեղծությամբ։¹

Քանի որ այստեղ խոսվեց Գրիշաշվիլու «Սա-
յաթ-Նովա» աշխատության մասին, մի բանի խոսք
ասենք վրաց բանաստեղծի այդ բանասիրական
աշխատանքի ստեղծման դրդապատճառի կապակ-
ցությամբ։

1 Ի. Գրիշաշվիլի, Հիշողությունների մի էջ, «Պրոլետար»,
1938, № 67։

Սայաթ-Նովայի վրացական երգերին կցված իր
աշխատության մեջ Գրիշաշվիլին խոսում է այն
շարժառիթի մասին, որը միտք է հղացրել զրադալին
հայ մեծ երգչի կյանքի և ստեղծագործությունների
ուսումնասիրությամբ։ Հիմնական առիթն, ինչպես
արդեն ասվեց, եղել է Սայաթ-Նովայի արձանի բա-
ցումը։ որին շատ շատերի հետ միասին ներկա են
եղել նաև վրաց հասարակայնության ներկայացու-
ցիները։ Նրանք դիմել են երիտասարդ Գրիշաշվի-
լուն հետեւյալ խոսքերով։ «Թիկիսիցի մարդ ես,
մայրդ հայուհի, ըստ երևութիւն կհիշես Սայաթ-
Նովայի վրացերեն խաղերը, կամ լսած կիրնես նրա
կապի մասին իր ժամանակի վրացիների հետ...
Լավ կլիներ գլուխ բերեիր այսպիսի մի աշխատու-
թյուն։ Ժողովերի Սայաթ-Նովայի վրացերեն խա-
ղերը և ապա նրա կենսազրականով հանդերձ հրա-
տարակեիր, որպիսզի վրաց հասարակայնությունը
իրագեկ լիներ այս հազվագյուտ բանաստեղծ-երգչի
և նրա ժամանակի մասին։»¹

Գրիշաշվիլու «Սայաթ-Նովա» ուսումնասիրու-
թյան հրատարակությամբ հիմք է դրվում սայաթ-
Նովապիտության վրացական ճյուղին։ Այդ աշխա-
տությունը վրաց գրական ու գիտական շրջաննե-
րում հետաքրքրություն է առաջ բերում դեպի Սա-
յաթ-Նովայի անձնավորությունը, նրա ժամանակա-

1 Ի. Գրիշաշվիլի, Սայաթ-Նովա, Թիկիսի, 1918, էջ ?
(Վրացերեն)։

շրջանը, նրա ստեղծագործությունը և այլն; Ինքը Գրիշաշվիլին իր այդ գործի մասին զրել է. «Այս աշխատությունը միանման հետաքրքրություն առաջացրեց Սայաթ-Նովայի պոեզիայի նկատմամբ: Սայաթ-Նովան իր կյանքով և գործունեությամբ դարձավ մի շարք վրաց բանաստեղծների թեման ու հետազոտությունների առարկան»^{1:}

Իր «Գրական ակնարկներ» ընդհանուր խորագրով հրատարակված գրքում Գրիշաշվիլին զիտեղել է նաև Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակի առթիվ գրված ակնարկը, որտեղ ասում է. «Եվ ահա, Սայաթ-Նովան այժմ կանգնած է մեր առջև, որպես խորն էմոցիայի և հազվագյուտ լիրիկական ձայն ունեցող մի երգիչ, որի 200 տարի առաջ ասված մոտիվները այսօր էլ սրտի հուզմունքով է լսվում: Որքան ավելի հեռանում ենք նրանից—նա ավելի մոտենում է, Սայաթ-Նովան մեզ հետ է, մեզ՝ գրողների, բանվորների, կոլտնտեսականների, երիտասարդների և ծերերի հետ:

Մեր ժամանակաշրջանը, սովորական էպո-իան, վեցցրեց և գնահատեց Սայաթ-Նովային, մի բանաստեղծի, որը կարողացավ բարձր գեղարվեստական խորով և դրավիչ եղանակով արտահայտել այն, ինչը նրա ժամանակի, նրա շրջապատի մարդկանց ուրախացրել է կամ տիրեցրել. մենք

1 Ի. Գրիշաշվիլի, Գրական ակնարկներ, Թբիլիսի, 1957, էլ 223 (Վրացերեն):

նրան գնահատում ենք, որպես «խալիի նոքարի» (ժողովրդի ծառայի), որի պոկլովան անսահման սերէ ծնում մեր ժողովրդի հերոսական անցյալի նըկատմամբ և խոր հետաքրքրություն առաջ բերում անցյալ դարի ոռմանտիկական հրանգով պարուրված կենցաղի նկատմամբ»^{1:}

Սայաթ-Նովայի կերպարը «մի շարք վրաց բանաստեղծների թեման» դառնալով, պիտուական ոգեշնչման աղբյուր է հանդիսացել նաև Գրիշաշվիլու համար: Հայրենական պատերազմի տարիներին Գրիշաշվիլին զրում է. «Սայաթ-Նովայի սազով» բանաստեղծությունը, որում այն միտքն է հայտնում, թե հայրենիքի ծանր օրերին, երբ թշնամին մահ է. ափում հարազատ երկրի վրա, բանաստեղծ-քաղաքացու քնարը պետք է ուզմի երգեր հնչեցնի և ժողովրդին ոգեշնչի անձնուրաց պայքարի ընդդեմ մինչև ատամները զինված արյունաբրու թշնամու: Իր բանաստեղծության համար բնաբան ընտրելով վրաց մատենագրի հետևյալ խոսքերը, որ «Հերակլ թագավորի արշավանքի ժամանակ Սայաթ-Նովան առաջնորդում էր մարտիկների ուզմախոսմբը և իր սազով ոգեշնչում հայրենիքի քաջարի պաշտպաններին», Գրիշաշվիլին զրում է.

Ո՞վ դու, մարտիկ և բանաստեղծ,
Քեզ եմ հիշում հիմա.

1 Ի. Գրիշաշվիլի, Գրական ակնարկներ, Թբիլիսի, 1957, էլ 223 (Վրացերեն):

Սաղիդ ուժ էր ներշնչում մեծ՝
 Հերոսներին անմահ։
 Սաղիդ լարերն երբ կամեցար
 Սաղիդ կապիչ ամութ,
 Դուռ բանեցիր մի ծայր, մի ծայր՝
 Ժողովուրդը հանուր,
 Ժողովուրդն էր լարը պահում
 Սաղիդ վրա կարող,
 Հաղթանակի հույսն աշխարհում
 Երգեցիր այդ լորով։
 Այդպես էր այն հին ժամանակ,
 Եվ այդպես է կրկին,
 Հետևում եմ ես շարունակ
 Սաղի հենց այդ երգին ։

Արժեքավոր աշխատանք է կատարել ի. Գրիշաշվիլին նաև հայ-վրացական թատերական կապերի ուսումնասիրման բնագավառում։ Այս առաջնորդ ուշագրավ է նրա Գ. Սունդուկյանին նվիրած աշխատասիրությունը։ 1950 թվականին Թրիփսիում Գրիշաշվիլու խմբագրությամբ, առաջարանով, ծանոթագրություններով և բառարանով լույս է տեսնում հայ մեծանուն դրամատուրգի պիեսները, որով բանաստեղծը մեծ ծառայություն մատուցեց վրաց հասարակայնությանը Սունդուկյանի ստեղծագործությունը նրան մատշելի դարձնելու գործում։

Ժողովածուին կցված առաջարանում, ինչպես

1 Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, Երևան, 1956, էջ 80։

նաև «Սունդուկյանը և վրաց հասարակայնությունը» 1, «Սունդուկյանը վրաց բնմի վրա» աշխատություններում (դրանք հիմնականում միննուկն ու առաջնասիրությունն են) Գրիշաշվիլին ընդգծում է այս խոշոր ծառայությունները, որ կատարել է Սունդուկյանը վրաց թատրոնի վերածնման գործում, խոսում է հայ դրամատուրգի և վրաց թատերական գործիչների սերտ բարեկամական կապերի մասին և այլն։

«Վրաց և հայ ժողովուրդների բարեկամությունը երկարատև պատմություն ունի։ Այս երկու ազգերի ճակատագիրը կապված է եղել իրար։ Արտաքին նվաճողների ներխուժումների ժամանակ վրաց ժողովուրդը շատ անգամ է օգնության ձեռք մեկնել հայ ժողովուրդին՝ հայրենիքի ազատության և անկախության համար մղվող պայքարում։ Նույնը և Հայերը։ Փորձության ժամին նրանք կանգնած են անգին հարևան վրացիների թիկունքում և գործով են հաստատել իրենց բարեկամությունը» 2,— զրել է Գրիշաշվիլին «Սունդուկյանը վրաց բնմի վրա» ուսումնասիրության մեջ։ Այսուհետև խոսելով XIX դարի հայ և վրաց առաջադիմ գրողների գործու-

1 «Սունդուկյանը և վրաց հասարակայնությունը» ուսումնասիրությունը տպադրվել է ի. Գրիշաշվիլի, Գրական ակնարկներ, Թրիփիսի, 1957, էջ 224—251 (վրացերներն)։

2 Ի. Գրիշաշվիլի, Սունդուկյանը վրաց բնմի վրա, «Սկիտական գրականություն և արվեստ», 1950, № 119։

նեռության մասին՝ երկու ժողովուրդների եղբայրական փոխհարաբերությունների ամրապնդման բրնձագլառում, Գրիշաշվիլին շարունակում է. «Դարրիել Սունդուկյանն առաջիններից է եղել, որ արտակարգ ոգեգործությամբ ու սիրով ժառայել է ին' հայ, թե՛ վրաց թատրոնին: Սունդուկյանը սրտի թրթիռով բացեց վրաց թատրոնի դարպասները և գոտավ այնտեղ շափազանց սիրելի անուններ՝ Վասո Աբաշիձե, Նատո Գաբունիա, Կոտե Ղիմիանի, որոնք բազկատարած, աղուհացով թանկագին հարևանից վերցրին վրացական խոնչայի վրա դրված ձեռագիր պիեսները...»¹:

Ապա կենսագրական մի շարք տեղեկություններ հայտնելուց հետո Գրիշաշվիլին կանգ է առնում Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմական պատմության վրաց թատրոնում և բնորոշելով Պեպոյի կերպարը, զրում է. «Այս պիեսի գլխավոր հերոսը թիֆլիսեցու տիպ է և առավել թիֆլիսեցիք են հասկանում նրա նշանակությունը: Ահա թե ինչու փորձ արվեց հայերենից հայերենի թարգմանել «Պեպոն»՝ պատճառաբանելով, թե Սունդուկյանի քաղաքի բարբառը ոչ բոլոր հայերին է հասկանալի:

Պեպոն հարազատ զավակն է հին թիֆլիսի...

Սունդուկյանի ստեղծագործության մշտաբուխ

1 Ի. Գրիշաշվիլի, Սունդուկյանը վրաց բնմի վրա, «Սովետական գրականություն և արվեստ», 1950, № 7, էջ 119:

աղբյուրը մեր մայրաքաղաքն է: Լավ է ամել իլիա Զուրաբիշվիլին. «Սունդուկյանի հերոսների գործունեության միջավայրը Թիֆլիսն է, այս սահմաններից նրանք հեռանալ չեն կարող»: Ուրիշ ոչ մի քաղաքի հանդիսատես այնպես չի թափանցել այս պիեսի խորության մեջ, ինչպես թիֆլիսեցի հանգիստեսը: Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում «Պեպոն» արտակարգ ժողովրդայնություն էր վայելում, քանի որ թիֆլիսեցիք ամենից լավ էին զգում ու ապրում այս պիեսի պիեսոնաժների, մասնավորապես գլխավոր հերոս Պեպոյի բնակլորության առանձնահատկությունը»¹: «Պեպոն քաղաքի տիպ է,— շարունակում է Գրիշաշվիլին,— Պեպոն ազնիվ վաստակի մարդ է, իր հալալ աշխատանքով ապրող, Պեպոն ձկնորս է, նրա հարստությունն իր դամբը (ուլկանն) է, նրա պահողը՝ Քուս գետը»²: Նախքան այս ուսումնասիրովիլյան մյուս հատվածների մասին խոսելը, միջանկյալ նշենք, որ Պեպոյի կերպարի մասին ասված այս չերմ խոսքերը Գրիշաշվիլին մարմանավորել է «Զկնորսի երգը» բանաստեղծության մեջ: Այստեղ ևս ընդգծելով, որ Պեպոյի միակ զանձը ուռկանն է և Քուսն էլ նրան պահող մայրն է, և որ նա տերերի պես ան-

1 Ի. Գրիշաշվիլի, Սունդուկյանը վրաց բնմի վրա, «Սովետական գրականություն և արվեստ», 1950, № 7, էջ 120—121:

2 Նույն տեղում, էջ 124:

դործ չէ ու այդ իսկ պատճառով նրա կերած հացը
հալալ է, Գրիշաշվիլին գրում է.

Թաց երբ դաժան մարդիկ քինոտ
և սուսմ են իմ սիրար արդար,
Դնում եմ ես իմ թռի մոտ,
Թացում սիրոս մտերմաբար,
Լուսմ է նա եղբօր նման
իր Պետոյի ցավը նորից,
Թե մեռնե՞մ էլ, դիտեմ, միայն
Եղբար Քուոք կափսոսա ինձ 1...

Պետոյի սերը Քուոք գետի նկատմամբ սիմվոլիկ
է. Հեղինակն այստեղ անց է կացրել հայ և վրաց
ժողովուրդների փոխադարձ և անխախտ սիրո զա-
ղափարը: Պետոն հայ աշխատավորության հավա-
րական կերպարն է, իսկ Քուոք գետը՝ վրաց ժողո-
վորդի սիմվոլը:

Սիրելով Պետոյին, վրաց բանաստեղծը երախ-
տագիտությամբ է խոսում այդ կերպարը ստեղծո-
ղի մասին: Վերոհիշյալ ուսումնասիրության մեջ
խոսելով Սունդուկյան-մարդու, Սունդուկյան-քա-
ղաքացու մասին, Գրիշաշվիլին գրում է. «Սունդուկ-
յանը ճշմարիտ մոքալաքի էր (քաղաքացի), Թբի-
լիսիի սիրահար, նրա հավատարիմ երգիչը»: Եվ
այնուհետև «...այս մեծ հայը, այս իր ժողովորդի
մեծագույն վաստակյալը անսահման սիրում էր

Վրաստանը և վրաց ժողովորդին: Միշտ և ամենու-
րեք սիրով ու գուրգուրանքով հիշում էր այն նշա-
նակալից գերը, որ իր կյանքում խաղաց Վրաստա-
նը: Վրաստանը իր երկրորդ հայրենիքն էր համա-
րում: «Ես այս երկրի զավակն եմ», — այսպիս ա-
րարուեց Սունդուկյանն իր խոսքը «Պետոյի» հորե-
ւանին: «Վրաստանը սիրում եմ ինչպիս իմ հայրե-
ւիքը, վրացիներին՝ ինչպիս իմ եղբայրներին ու
զավակներին. այսքան մեծարանք իմ համեստ
վաստակին չի համապատասխանում: Սա վկայում
է միայն ձեր բարեսրտությունը» («Յնորիս փուր-
ցելի», 1901, № 1452):

Ու մեկ անգամ տեսել է Գաբրիել Սունդուկյա-
նին, նա երեք չի մոռանա այդ բացափկ և ուշա-
դիր մարդուն: Նա միշտ զգայուն ու սիրելի էր,
մարդկային զգացմունքներով լեցուն: Չնայած այն
բանին, որ Գաբրիելի հայրը շքավոր չէր և ինքն էլ
ծառայության շնորհիլ բավականին կարողություն
ուներ (Հոնորար նա երբեք չէր վերցրել), այնուա-
մենայնիվ նա շքավորների կողմն էր 1:

«Գաբրիել Սունդուկյանը, — շարունակում է
Գրիշաշվիլին, — բոլորին միատեսակ հմայում էր
իր աղնվությամբ, բարեսրտությամբ և համեստու-
թյամբ: Հաճախ նրա անմիջականությունը հասնում

1 Ի. Գրիշաշվիլի, Թանաստեղծություններ, Երևան, 1956,
էջ 85:

1 Ի. Գրիշաշվիլի, Սունդուկյանը վրաց բեմի վրա, «Սո-
վետական գրականություն և արվեստ», 1950, № 7, էջ 130:

էր մանկական միամտության հնքնամոռացության շափ սիրում էր բնության գեղեցկությունը, միայն բնությունը կարող էր գերազույն հաճույք պատճառել անվանի գրողին, Անգամ գարնան հասարակ ծաղիկը (դեղձի ծաղիկը) նրա խանդաղատանքի առարկան էր:

1912 թվականի մարտի 16-ին վախճանվեց Գարրիել Սունդուկյանը՝ ութսունյոթ տարեկան հասակում:

Մահվանից ութ ամիս առաջ նա գրեց իր կտակը և ուղարկեց «Մշակ» լրատրի խմբագրությանը՝ խնդրելով, որ հրապարակվի իր մահվանից հետո: Այս կտակը, ինչպես և Սունդուկյանի ամբողջ գործունեությունը, ազնվության ու պոետական վսիմ խառնվածքի մարդկացին մի գոկումնատ է: Այս հուզիլ կտակում կենդանի կերպով լսվում է հայրենիքի բախտավոր ապագայի համար սրտակեղ հայրենասերի կանչը:

Սրտի ցավով հրաժեշտ էր տալիս մեծ գրողը բազմատանջ հայ ժողովրդին: Նա երազում էր, որ իր հայրենիքը գտնի իր խսկական ազատությունը, ստեղծվի ու վերածնվի իր հարազատ երկիրը: Գ. Սունդուկյանը նկատում էր, որ այն ժամանակվա պայմաններում անհնար էր ժողովրդի լիակատար ազատությունը, բայց աներեր հավատում էր, որ կամ մի ժամանակ, երբ հայ ժողովրդը կտեղծի իր հայրենիքը, կարծեքալորի իր աշխատանքը և

ազնվությունը: Ամբողջ ուժով կծաղկի ազգի նյութական և հոգեոր կուլտուրան»¹⁺:

Տեսնելով Սունդուկյանի երազանքների իրականացումը՝ վրաց ժողովրդասեր բանաստեղծը խոր սիրով է արտահայտվել թումանյանի հայրենիքի, նրա ազատասեր ժողովրդի մասին: Գրիշաշվիլին, ողենչված Սովորական Հայաստանի, նրա լավագույն մարդկանց առօրյայով, խանդավառությամբ է հրգել զարեր շարունակ հալածված և կեղեքված, ներկայումս Կոմունիստական պարտիայի աղքային քաղաքականության և ուսև մեծ ժողովրդի օգնության շնորհիվ ազատագրված հայ ժողովրդին: «Սասունցի Գավիթ» հազարամյակի տոնակատարության առթիվ գրած «Սովիսամմազ» բանաստեղծության մեջ Գրիշաշվիլին, դիմելով հայ ժողովրդին՝ գրել է.

Արև ելավ հյուսիսից, արևելքից չելավ նա, Ե՛ւ չի ճնշի ձեզ ոչ ոք, աշըզ կառոտ չի մըրա: Նորովիցե՛ք, ցնծացե՛ք, շողքն է ընկել ձեզ վըրա, Համատեղում տանըվեց դուք շողում եք աննման, Ճողի վրա Ե՛ւ շկան արյան հնութեր ու խալեր:

Ի՞նչ օքեր են. թե ճնում Հայաստանում ցարական Ոստիներն ոխերիմ արյուն առան ու հառան, Զերմ եղբայր ենք մենք այսօր, սադի երգով մենք եկանք:

1. Գրիշաշվիլի, Սունդուկյանը վրաց բհմի վրա, «Սովետական գրականություն և արվեստ», 1950, № 7, էջ 131—132:

Հարյավ Գավիթը պարթե, հարյավ պարթե մեր հսկան,
իր շուրջն առավ, հալարեց նոր ուժերը խնդարեր։

* * * * *

Արցոմեն էր հար, վայնատն բռնել աշխարհը արար,
թայց Սասոնցի Գավիթը հկավ որպես փրկարար
Մեր մեջ չկան էլ այսօր սրտեր ցավից վշտահար,
Եղբայրության զըսոցը շողում է մեզ մշտավառ
Կապրինք խաղաղ, երանիկ, բյուր տարիներ ու դարեր ։

Նույն միտքը Գրիշաշվիլին արտահայտել է Հայաստանի 20-ամյակին ուղղած իր ողջունի խոսքում: «Սասոնա քաջերի երգանիկ հետնորդները;— գրել է բանաստեղծը, — հաղթական կերպով կոմունիզմի անառիկ ամրոցն են կառուցում վերածնված հայ աշխարհում: Հայաստանի բազմադարյան և խիստ հարուստ կուլտուրան ձեռք բերեց լրիվ ու ազատ զարդացման բոլոր պայմանները և շողում է նոր փայլով ու վեհությամբ»:

Անշափ ուրախություն ու ոգևորություն է բերում ինձ՝ վրաց բանաստեղծիս, հայ ժողովրդի այս մեծ տոնը: Գարերի ընթացքում հայ և վրաց ժողովուրդների լավագայւն որդիները միասին են պաշտպանել իրենց հայրենիքի ազատությունը և պատիվը, նըրանք ժառանգել են փոխադարձ բարեկամության հիմանալի արագիցիաներ»²:

1 ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 120—121:

2 «Գրական թերթ», 1940, № 32:

Հայ ժողովրդի մղձավանշային անցյալի և պայտառը ներկայի հակադրությամբ է գրված նաև Խաչատուր Արովյանի մահվան 100-ամյակին նվիրված «Վերը Հայաստանիկ» բանականդարձությունը.

Մի դար առաջ... երազ է այս:
Դու ժգատվում, ողբո՞ւմ էիր:
Մի դար առաջ զնացիր զու,
Խնչպիս զնաց Մաշարելին ։

Հայաստանի մութ երկնքում
Մոռլին ու մուժն էր թնածում,
Թշնամին էր, որպիս համրիչ,
Խաղում ձեզ հնտ ու հարվածում:

Վեհշատ որպիս զամրանաքար՝
Ժողովրդի որտին իջած.
Հեծում էր նա անհանգրվան,
Երազներով զիռ շշիչած²:

Այնուհետև Գրիշաշվիլին ուրախությամբ նշում է, որ Հայաստանին այդ անմիխիթար վիճակից փրկել է Լինինը, որից հետո Վերը Հայաստանինա մշտապիս ամոքվել է ու բռնվիլ և հայ ժողովուրդը խինդ է առել ու կերտում է իր ապագան:

1 ի. Մաշարելին վրաց ականավոր թարդմանիլ էր, երաբարգմանությամբ լուս են տիսել վ. Ենթապիրի մի շարք ողբերգությունները: Մաշարելին ես անհետ կորել է ի. Արովյանի նման:

2 ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, 1956, էջ 101:

Եղածն ի՞նչպես միիմարել:—
«Հորովելը» թախժից ծնվեց.
Թայց հայտնվեց մեծ լենինը—
Աղատության օրն ավետեց:

* * * * *

Հայաստանի վերքը շկա՞ւ
Ա՛րդ, նայիր շուրջդ հրձվելով,
Դարեր տևող եղբայրության
Դաշն է հյուսվել պողպատ թելով:
Ե՛րդ իմ, հոսի՛ր մինչ լուսաբաց,
Խնջուլքումն այս՝ կյանքով առատ.
— Գա՛յսարև Սո՛միսիթո,
«Էլ մի լաց ըլի, խաղ արա»¹:

Հուզիլ է Գրիշաշվիլու բանաստեղծությունը՝
Նվիրված հայ մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանին, որին դիմելով նա ասում է, թե Իսահակյանը
վերադարձավ հայրենիքի վիշտն ու կարոտն իր
սրտում և տեսնելով նրա ծաղկած վիճակը, հիաց-
մունքով երգեց այն:

Թայց երր հովիտն արցունքների
Դարձավ եղեմ ծաղկավետ,
Անուշ ձայնով քո քնարի
Մեզ գերեցիր, ո՛վ վարպետ.
Երգիդ շնչով զառ Մանթաշի
Հովը շնկաց խնդավետ:
Դեմդ եւանք սիրով, սրտանց,
Քո մեջ տեսանք մենք կրկին
Մեղնից այնքան արցունք խւած

Թուժանյանին թանկապին,
Դո՛ւ ձայն տվից ռամբին տանջված,
Ծեն պահեցից երգը հին ։

Այնուհետև Գրիշաշվիլին բացառիկ ուժով ընդ-
գծում է Իսահակյանի պոեզիայի հմայքը, նրա հա-
րազատությունը վրաց ժողովրդին: Նա հայ բա-
նաստեղծին անվանում է եղբայրության ծիածան և
ընդգծում, որ Իսահակյանը հավերժ կապրի վրա-
ցիների սրտում:

1954 թվականի նոյեմբերի 25-ին մեծ հանդի-
սավորությամբ նշվում է հայ մեծ ուռուցիոններ-
դիմոկրատ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-
ամյակը: Ողջունի խոսքով հանդես են գալիս եղ-
բայրական ռեսպուբլիկաների գրողները: Վրաց ժո-
ղովրդի անունից ելույթ է ունենում ի. Գրիշաշվիլին,
որն իր խոսքում ասում է. «Ես եկել եմ ձեզ մոտ և
թանկագին եղբայրներիս բերել ձեր եղբոր՝ վրաց
ժողովրդի սերն ու սիրութը»:

Ես ոտք դրեցի գեղեցիկ Հայաստանի հողի վրա,
որպեսզի աշխատասեր, տաղանդավոր և աղնիկ
հայ ժողովրդին հաղորդեմ Վրաստանի լեռների և
դաշտերի բնակիչների շերմ ողջույնը:

Ես եկել եմ ձեզ մոտ եղբայրակից Վրաստանից
և ինձ հետ բերել եմ վրաց ժողովրդի ողջույնն ու
վառվուն հոգին: Եկա և բերեցի ձեր դրկից, ձեր
եղբոր մեծ սերը, բարի և մաքուր զգացմունքները,

1 ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, 1956, էջ 102:

1 ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, 1956, էջ 87:

եկա և այստեղ էլ գտա հերոս աշխատասեր և տա-
դանդավոր հայ ժողովրդի ջերմությունն ու սերը» ¹

Այնուհետև Գրիշաշվիլին ընդգծում է, որ վրաց
և հայ ժողովուրդները մի միասնական ընտանիքի
որդիներ են: Նրանք այնպիս հարազատ ու մոտեն
իրար, ինչպես մի ճյուղից ելած երկու ծաղկի:

Հայ և վրաց ժողովուրդները ապրել են մի հո-
գով,— շարունակում է Գրիշաշվիլին,— շնչել են
նույն օդը և միացյալ ուժերով դիմադրել ներխու-
ժող թշնամիներին: Այսպես է եղել հնում, այսպես
է նաև հիմա, այսպես կլինի միշտ, քանի դեռ հո-
սում են Հրազդանը և Քուրք, քանի դեռ մեծ մտա-
ծող նալբանդյանի նույնիսկ մի տողը չի ջնջվի սո-
վետական ժողովրդի հարուստ հոգուց:

«Մենք՝ վրացիներս,— ոգեշնչված ասում է վր-
աց բանաստեղծը, — հպարտանում ենք մեծ դե-
մոկրատ նալբանդյանի անունով, նա ընդհանուր
գաղափարներով մոտ էր կանգնած մեր գործիշնե-
րին: Նալբանդյանը ժողովրդի ազատությունն իր
կյանքի նպատակն է համարել: Ծնորհակալություն
Միքայել նալբանդյանին, որն իր հայրենիքին վե-
րադրեց այն բոլորը, ինչ ժողովուրդը տվել էր
նրան:

Միքայել նալբանդյանն անմահ է: Նա այսօր
մեզ հետ է, նա մեր ժամանակակիցն է» ²:

Ապա Գրիշաշվիլին արտասանում է Միքայել
նալբանդյանին նվիրած իր բանաստեղծությունը,
որ բերում ենք ամբողջությամբ.

Անզոր էր քո դեմ զնդանը դաժան,
Բիրտ շղթաների շառաւը անվիրչ
Դու աղատության բարքարուտ ճամփան
Հարթում էիր քո կրծքով հողմածեծ...
Հավատն էր քո մեջ լույսի, ճշմարտի,
Նա էր հրդեհում հայացքդ անամպ...
Դու անմահացար, որ ժողովրդիդ
Հավիտ ծառային, քո ճշմարտությամբ:
Օ՛, աղատության քո կանչը հզոր,
Վեհ, աղատության կանչը հողհցունց,
Տե՛ս, քանի շուրթից հնչում է այսօր
Եվ եղբայրության գառնում ուղցույց:
Քայլում ես մեզ հնատ աննկուն ու վես,
Ու պիտի քայլնս, քայլես քանի կան
Մեր Քուն ու Զանդուն և հզոր Վոլգան 1...

Հայ և վրաց ժողովուրդների գարավոր բարե-
կամությունն ու սերտ համագործակցությունն է
վոլեբրգել Ա. Արաշելին իր «Հայաստանին» բա-
նաստեղծության մեջ: Նա մեծ ուրախությամբ է
գալիս Սովետական Հայաստանի 25-ամյակը տո-
նիլու, գալիս է որպես «եղբայրը՝ եղբոր խնջույ-
քին» և երգում է երկու եղբայրակից աղքերի հոգե-
հարազատությունը: Բանաստեղծը հպարտությամբ
է նշում, որ հայ և վրաց ժողովուրդները դարեր շա-
րունակ սերտ համագործակցված իրար հետ պայ-

1 «Գրական թերթ», 1954, № 44:

2 նույն տեղում:

1 «Սովետական Հայաստան», 1954, № 280:

քարել են ներքին և արտաքին թշնամիների դեմ ու հասել ներկայիս պայծառ օրերին։ Ա. Արաշելին ցանկանում է, որ ապագայում էլ Հառուի և Քարթ-լուսի ժողովուրդները ավելի ևս ջերմ սիրով կապվեն իրար հետ։ Բանաստեղծական հուզականությամբ Արաշելին զրել է։

Այս սուրբ հուզերը հավետ վառ պահած
Կուզեի տեսնել և տպադայում,
Որպես ժիածան մի կամուրջ դառած՝
Մեծ Արարատից մինչ Կաղբեկն հեռու։
Թող բոցավառվի՞ ի մահ թշնամու
Մեր եղբայրության շողջողուն արփին,
Թող հագերժ ապքին սիրով իրարու
Հայոս և Քարթլոս եղբայրներն անդին։

1948 թվականին զրած «Հովհաննես Թումանյանի հիշատակին» բանաստեղծության մեջ Ա. Արաշելին իր անհուն սերն է արտահայտել «Ռուս-թավելու սերնդի սիրելի եղբոր» նկատմամբ։ Բանաստեղծն ուրախությամբ է նշում, որ «սիրելի Հովհաննեսի» անունը, որպես վրաց ժողովրդի մեծ քարեկամի, ջերմությամբ է հիշում ամեն մի վրացի։

Սովետական վրաց գրականության ավագ սերնդի ներկայացուցիչներից Հայաստանի և Հայերի մասին արտահայտվել և դրել են նաև Շ. Գաղիանին, Կ. Գամսախուրդիան, Տ. Տաբիձեն, Պ. Իաշվիլին, Ա. Զիբովանին և Ս. Էլուլին։ Հիշյալ գրողները բարեկամական կապերի մեջ են գտնվել հայ գրողներից շատերի և հատկապես Հովհ. Թու-

մանյանի և Ավ. Խսահակյանի հետ։ Գրական գործիչների այդ եղբայրությունը և բարեկամությունը նրանց համար վեր է ածվել մի ընտանիքի անդամ դարձած հայ և վրաց ժողովուրդների ամենաբարձր ձգտումների ու երազանքների հարազատության սիմվոլիկ արտահայտության։ Ավելի պարզ ասած, Հայաստանին և հայ ժողովրդի յավագույն զավակներին նվիրված տոնակատարությունների, տարեդարձերի առթիվ զրված վրացական կուլտուրայի գործիչների ողջունի խոսքերը, ձոն-բանաստեղծությունները և հուշերը մասնակի բնույթ չեն կրել։ այդ զրվածքների մեջ արտահայտված սիրո միջացով վրաց գրողները արտացոլել են այն ջերմ զգացմունքները և անկեղծ, անկաշառ սերը, որ վրաց ժողովուրդը տածում է զեպի հայ ժողովուրդը և նրա հայրենիքը։

Այդպիսին է Պաուլ Խաչվիլու «Հովհաննես Թումանյանին» բանաստեղծությունը, որ վրաց պոետը գրել է 1923 թվականին՝ Թումանյանի մահվան կապացությամբ։ Խաչվիլին բարձր գնահատելով հայ մեծ բանաստեղծին, նրա կատարած դերը ժողովուրդների միջև բարեկամությունն ամրապնդելու գործում, իր ժողովրդի, և իր խոր վիշտն է արտահայտում մեծ կորուստի կապակցությամբ։ Բերում ենք այդ բանաստեղծությունը ամբողջությամբ։

Ով գու խնդություն՝ աշքերով մանկան,
Առավոտն էր քեզ ցողել շնորհով.

Նայում էինք քեզ հարգանքով կամկար,
Հաճախ համբուրում շերմությամբ, սիրով:

Մեղրամամի պիս հսկա ու հզոր,
Վառվեցիր բարձր հայոց լեռներին,
Ու եղրայրության քո շահը բռուր
Պարզեցիր վրաց քո եղրայրներին:

Երգերդ դրած՝ լույս աղախնիներ,
Բոյոր քիմերում ապրում են նրանք,
Դու առաքյալի նման անձնվեր,
Սառացար ընդդեմ կովի ու արյան:

Քո կյանքը նորավ ներշնչում վսիմ,
Մահկ մշուշեց սրտերը հավիտ,
Քեզ սուրբ Հովհաննեսա մանուկներն կասին,
Իսկ մենք կկրկնենք՝ տղու մեր սուրբ պոհու:

Քո ոսկի կյանքը տվիր ավարի,
Ու ես նայում եմ աշքերով վշտու,
Թե ե՞րբ Անուշը որպիս եղանի
Կկանգնե լուսե գերեզմանիդ մոտ 1:

Թումանյանի և նրա ժողովրդի, հայ և վրաց ժողովրդների դարերի խորբից եկող եղրայրության,
սովուտական կարգերի օրոր ծաղկած ու բարգավաճած Հայաստանի մասին բազմիցս գրել է ականավոր գրող-դրամատուրգ Շալվա Դադիանին: Թումանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ Շ. Դադիանին գրում է «Անվեհեր հոգու տեր պոետը խոսքը, որտեղ ասում է, որ ինքն այնքան էլ մոտ չի ճանաշել ժողովրդների եղրայրության քարոզիլ և մեծ քանատեղծ Հովհաննես Թումանյանին: Հազիվ եր-

կու թե երեք անդամ զրույց է ունեցել նրա հետ,
սակայն այդքանն էլ բավական է եղել, «որպեսզի
մարդ կախարդվեր նրա հոգու անվեհերությամբ»:

Զուսպ, բայց քաղցր զրուցընկեր էր, թե կուզե
ալեհեր, սակայն կենզանի, աշխուժ աշքերով: Նա
մեծ հավատ ու հոգու անսասանություն էր հանդիս
բերում, երբ խոսքը վերաբերում էր իրեն հետա-
քրքրող ու այրող հարցերին:

Որո՞նք էին այդ հարցերը:

Պոեզիան ու ժողովուրդների բարեկամությունը,
մասնավորապես հայ-վրացական փոխհարաբերու-
թյունները:

Որքան քնքանք, որքան գորովալից սրտի կսկիծ
կար նրա խոսքերի մեջ:

Արաքս և Քուռ գետերի մի հարթավայրից սկիզբ
առնելը, հետազում կողք-կողքի եղբայրաբար
հոսելը և վերջում միանալը՝ ծովի մեջ թափվելու
համար, նրա աշքում մի կենդանի սիմվոլ էր երկու
ժողովրդների պատմական հակատակրի:

Նրա պատկերացումով ծովն այստեղ որպես
մարդկություն էր ներկայանում: Նա հավատում
էր, որ Հայաստանն ու Վրաստանը ինքնուրույն
կերպով զարգանալով ու հաստոնանալով, հարազատ
ու բարձր կուլտուրայով զինված, վերջում իրենց
լուսան պիտի ոցին ողջ մարդկության զանձա-
րանը» 1:

1 «Վրաց գրականության ընտիր էջեր», 1961, էջ 476:

Շարունակելով իր խոսքը, Շ. Դադիանին ասում է, որ այդ մտորումներն ու տեհնչանքները նրա սըրտին սպեղանի են եղել այնպիսի տիսուր ժամանակներում, երբ Հայաստանի բոլոժուազիան և Վրաստանի թավադ-ազնվականությունն իրար զեմ թշշնամական ժամփեներ են սրել:

«Մենակ էր նա, որը էր մնացել այդ անվեհեր մարդն այն տիսուր ու մոայլ օրերին՝ ժողովուրդների եղայրության իր քարոզով։

Սրտանց ցանկանում էիր, որ շատ-շատերն այդ որբի նման լինեին, բազմանային թե մեղանում, թե մեր եղայրակիցների մեջ, բայց այդ մասին այն տիսուր օրերին կարելի էր միայն երազել։

Պատմությունը, սակայն, ապացուցեց, թե որքան ճիշտ էր մտածում ու զգում թումանյանը՝ այդ մեծ մարդը։

Մեր էպոխան հաստատեց միություն, ժողովուրդների եղայրություն, և Հայաստանն ու Վրաստանն էլ մտան այդ եղայրական մեծ ընտանիքի մեջ։

Ահա թե ինչու պոեզիայի բարձունքներում է՛լ ավելի խոշոր է երևում մեռած՝ սակայն միշտ անմոռաց—այդ անվեհեր հոգու տեր Հովհաննես թումանյանը»¹։

Շ. Դադիանին իր ելույթներում ու հողվածներում հաճախ է կանգ առել հայ և վրաց ժողովուրդ-

ների ներկայիս հոգեհարազատության ու փոխըմբռունման պատմական ակունքների վրա։ «Դեռ ժամանակներից վեր, — ասել է Շ. Դադիանին Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարում ունեցած իր ելույթում, — հեռավոր դարերից ծագել է Հայաստանի և Վրաստանի ժողովուրդների բարեկամությունն ու սերը։ Վրաստանում, հին տարեգրությունների մեջ, հիշատակվում է մի առասպելական պատմություն այն մասին, որ ժողովուրդների նախահայրերը—Հայաստանինը՝ Հառուր և Վրաստանինը՝ Քարթլուր, — եղել են հարազատ եղայրներ։ Այդ պատմությունը կուցել է հաստատված պատմագրության կողմից, բայց հայտնի է, որ առասպելները ժագում են եթե ու իրական փաստերից, ապա, համենայն զեպս, զըրանք ստեղծող ժողովրդի ձգառումներից։

Մեր ժողովուրդները միշտ կիսել են պատմական անցքերի կողմից ուղարկված վիշտն ու ուրախությունը։

Իսկ ինչ վերաբերում է մեր գրականություններին, ապա այդ բնագավառը միշտ էլ եղել է տվյալ դարաշրջանի առաջավոր գաղափարներով և մըտքերով երկուստեր միասնականացնող և հարստացնող»¹։ Նույն միտքը Դադիանին հայտնել է նաև Խ.

1 «Սովետահայ դրականության տարեգրություն», Երևան, 1957, էջ 518—519։

Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված հոբելյանական նիստում¹:

Անդրադառնալով Հայկական կուլտուրալի գործիչների մատուցած ծառայություններին վրաց զբուականությանը և թատրոնին, խոսելով Հայ և վրաց առաջաղիմ զավակների համագործակցության մասին, Շ. Գաղիխանին ասել է. «...մենք զիտենք, որ շատ հայեր դեռ հին ժամանակներում աշխատել են հօգուտ վրացական զրականության, պերել են վրաց լեզվով և դրանով հարստացրել են վրացական գորականության գանձարանը, իսկ նրանց մեջ փայլում է Սայաթ-Նովայի, ամբողջ Անդրկովկասի այդ իսկական երգասացի անունը, որն իր կյանքի մեծ մասն անց է կացրել Վրաստանում և Ալդա Մահմեդիանի հրոսակների արշավի ժամանակ ընկել է Հերոսի մահով՝ ֆիզիկապես ևս պաշտպանելով իր սիրելի վրաստանը և նրա մայրաքաղաք Թբիլիսին»²:

Այնուհետև կանգ առնելով XIX դարի հայվրացական գորական երևույթների վրա, Շ. Գաղիխանին նշում է, որ վրաց ժողովուրդը չի կարող մասնաւ «հրաշալի» դրամատուրգ Գաբրիել Սունգուլյանին, որ համասար սիրով տվել է և Հայկական, և վրացական թատրոններին իր հրաշավի ստեղծագործությունները և իր ողջ էությամբ հան-

գիսացել է կարծես մարմնացումն երկու ժողովուրդների սիր և բարեկամության: «Հետո մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը՝ Վրաստանի լավագույն և անկեղծ բարեկամներից մեկը, — շարունակում է Գաղիխանին, — Վրաստանում շատ սիրելի գրող Շիրվանղաղին, որի պիեսները հաճախ բեմադրվել են վրացական բեմերի վրա, իսկ պարբերականներում տպագրվել են նրա արձակ երկերը:

Վրաստանում են աշխատել և իրենց լավագույն երկերն են ստեղծել նաև հոշակավոր Բաֆֆին, Նար-Գոսը և ուրիշներ:

Իսկ Վրաստանի կողմից եղել են առաջավոր գործներ, որոնք միշտ աշխատել են հանուն մերժողովուրդների բարեկամության և սիրո, նրանցից հայտնի են արձակագիր Գեորգի Շերեթեին և Վրաստանի XIX դարի պոեզիայի զարդ Ակակի Շերեթեին»¹:

Այդպիս է եղել նաև թատերական արվեստի ասպարեզում: Վրաց ականավոր դրամատուրգը հիշեցնում է, որ Հայկական և վրացական թատրոնի աշքի ընկնող դերասանները եղել են խիստ մերձավոր բարեկամներ և երբեմն ինչպես Հայկական, նույնպես և վրացական դերասանները մասնակցել են երկու թատրոնների ներկայացումներին ևս,

1. «Սովորահայ դրականության տարեգրություն», 1957, էջ 519:

1. Sh'ur «Սովորահայ դրականության», 1948, № 227:

2. «Սովորահայ դրականության տարեգրություն», 1957,

էջ 519:

ինչպես, օրինակ՝ «Հիանալի դերասաններ» Զմբցկյանը, Արաքյանը, Միրաղյանը, Տեր-Դավթյանը և ուրիշներ, նույնպես և վրացական «թատրոնի կլասիկներ»՝ Վասո Աբաշիձեն, Կանդելակին, Սահարովա-Աբաշիձեն, Գվարիձեն և ուրիշներ:

«Այսպիսով, — ընդհանրացնում է Դադիանին, — Հայկական ու վրացական ինտելիգենցիայի առաջավոր ավանդարդությունը է Հապարտանալ նաև իր անցյալ բարեկամությամբ և Համագործակցությամբ»¹:

Խոսելով Հայերի և վրացիների եղբայրական փոխհարաբերությունների, նրանց կուլտուրայի գործիչների համագործակցության հետագա ամրապնդման ու զարգացման մասին սովետական կարգերի օրոք, Շ. Դադիանին Վրաստանում Սովետական իշխանության հաստատման 32-րդ տարեդարձի առթիվ «Գրական թերթին» ուղղած իր խոսքում գրել է, որ Վրաստանի բարեկամությունը սովետական մյուս ոհսպուրլիկանների հետ և Հատկապես Հազարավոր տարիներով եղբայրաբար ապրող Հայաստանի «խոշոր ձիրք ունեցող ժողովրդի» հետ այժմ ավելի է ամրապնդվել և ոչ մի բան չի կարող թուլացնել այս երկու ազգերի աներեր բարեկամությունը:

«Մեր գիտնականները, գրողները, դերասաննե-

րը բարեկամական կապերով կապված են Հայաստանի գիտնականների, գրողների ու դերասանների հետ:

Ես անձամբ հպարտանում եմ, որ կարող եմ ասել, թե ինձ հետ բարեկամություն են անում մեծարգո Ավետիք Խաչակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Նաիրի Զարյանը և այլ թանկագին ընկերներ:

Թույլ տվեք, ուրեմն, Վրաստանի համար երջանիկ այս օրը վրացական գիտով խմել Հայաստանի փառապանծ ուսուցության և նրա առաջավոր մարդկանց կինացը և իմ ընկերների հետ մեկտեղ նրանց ևս ցանկանալ հաջողություն, արգելքների հաղթահարում և մշտական առաջընթաց՝ նորանոր հաջողությունների համար»²:

«Հայաստանի խոշոր ձիրք ունեցող ժողովրդի» առաջավոր մարդկանորից՝ Խաչատոր Արովյանի մասին խոսելիս Շ. Դադիանին դարձլաւ ընդդեմի է Հայ և վրաց ժողովուրդների բախտակից լինելու հանդամանքը, նրանց կուլտուրաների միջև ընդհանուր զերի առկայությունը, որոր գալիս է այդ ժողովուրդների հոգեհարազատությունից, ապրելակերպի նմանությունից: «Մենք, վրացի գրողների ներկայացուցիչներս, — ասել է իր ելույթում Դադիանին Հայ մեծ լուսավորչի մահվան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում, — մեծարում ենք մեծ գրող և հայրենասեր Խաչատոր Արովյանի

1 «Սովորական գրականության տարեգրություն», 1957, էջ 519.

2 «Գրական թերթ», 1953, № 8:

Հիշատակը և բերել ենք մեր անկեղծ սերն ու սըրտագին ողջույնը ամբողջ հայ ժողովրդին:

...Սուպիկել ես մեզ, հայերի մերձավորացույն հարևան Վրաստանի ներկայացուցիչների համար այս պանծալի տոնը հուզիչ է այն պատճառով ես, որ մենք հիանալի կերպով հասկանում ենք մեր ժողովուրդների պատմական բախտը, երբ դարերի խորքում մենք միասին էինք ընթանում և ստեղծում էինք կուլտուրական արժեքներ»¹:

Գ. Սունդուկյանից և Հովհ. Թումանյանից հետո Շ. Դադիանին հատկապես սրտառուց է արտահայտվել Ավ. Խսահակյանի մասին, բարձր է զնահատել հայ ականավոր բանաստեղծի դյութիչ ու գերող պոեզիան: «Ես տեսնում եմ սիրելի, մեծ բանաստեղծ Ավետիք Խսահակյանին,— զրել է Դադիանին,— նա կանգնած է բարձրաբերձ Պառասի վրա, որ վեր է խոյացել բազմաշարչար Հայաստանի ամորված, զգայուն սրտում»:

Ահա իր բարձունքից նա մինչև մեր սրտի խորքերն է հասցնում իր վեհ հոգուց բխած պոեզիայի դյութական հնչյունները:

Բա՛րձր, բա՛րձր է կանգնած նա, սակայն նրա ամբողջ էությունն իր պաշտած, իր հարազատ ժողովրդի հետ է, նրա առաջավոր ձգումներով ու իդերով է շնչում:

Դյութիչ, ակնապարար են թանկագին Ավետիքի

պոեզիայի փարթամորեն աճած ճյուղերը, իսկ կենսալից արմատները մխրճվել են խոր, հայկական հնադարյան կուլտուրայի ընդերքում:

Պառնասի բարձունքին է կանգնած նա, որա համար էլ այնքան պարզ տեսանելի է ոչ միայն Հայաստանի, այլև բոլոր ժողովուրդների համար: Ում չեն հասնում նրա շքնաղ պոեզիայի կախարդիչ հնչյունները, զրանցով հիանում են ոռաը, ուկրաինացին, բելոռուսը, աղրբեջանցին, վրացին, ուզբեկը, շուվաշը... բոլորը, բոլորը... և որքա՞ն ուրախալի է, որ նրան լավ են ճանաչում նաև արտասահմանում:

Այսօր մեր պանծալի պոետի 80-ամյա հորեւանն է:

Ամբողջ սրտով ցանկանանք նրան դարձյալ երկար տարիների բեղմնավոր, բովանդակալից կյանք, ցանկանանք հաջողություն:

Անձամբ ես իմ սրտի եղբայրական ձայնն եմ միացնում բոլոր նրանց ձայներին, ուլքեր այնքան հարգում ու զնահատում են ծերունագարդ Վարպետին, իմ հոգու կանչն եմ միացնում նրա երկրպագուների հոգու կանշին: Ապրիր ուրախության մէջ, թանկաղին Ավետիք»¹:

Հայ ժողովրդի, հայերի ու վրացիների բարիդրացիական հարաբերությունների, նրանց կենցաղի նմանությունների մասին արտահայտվել է նաև

1 «Սովորական Հայաստան», 1948, № 227:

1 «Սովորական Հայաստան», 1955, № 258:

վրաց ականավոր արձակագիր Կոնստանտինն Գամ-սախուրդիան: «Վարպետաց վարպետի աջը» վեպի հայերն հրատարակության առթիվ գրած իր խոսքում Գամսախուրդիան նշել է. «Ինձ համար, իսկապես, ուրախալի է, որ իմ վեպը հնչելու է եղբայրակից հայերի սքանչելի և հնագույն լեզվով»¹:

Անդրադառնալով հայ և վրաց ժողովուրդների պատմական պայծառ բարեկամությանը, անվանի արձակագիրը գրել է. «Հայ-վրացական եղբայրությունը մեր սերնդի մարդկանց հնարածը չէ: «Քարթիս ցխովրերայում» Հառուի և Քարթլոսի եղբայրության մասին մերկած լեզենդը անշուշտ ուներ իր պատմական հիմքը:

Այս երկու ժողովուրդներո իրենց ամոռող ողբերդական ապատմության ընթադրում զործով և արյամբ ամրապնոեսին այդ եղաւորությունուն:

Մենք միասին էինք պայրարում իրանի և Բյուղանդիայի, արարների և խաղարների, սելցուկների և օսմանցիների ոհմեր:

Մեր ժողովուրդներո մեծասոււն հեռոսություն ցույց տվենին առ կոհիներում և յնաւած հառատե արյան հեղեղների՝ ստեղծելե՛ Հայաստանի և Վրաստանի սրան, եթ որականությունուն, ճարտարապետությունը, պատմական արձակը»²:

1 Ա. Գամսախուրդիա, Վարպետաց վարպետի աջը, Երևան, 1960, էջ 5:

2 Նույն տեղում, էջ 5—6:

Այնուհետև խոսելով երկու հարևան երկրների ընդհանուր թշնամիների ուազմական հզորության, նրանց վարած արշավանքների մասին, որոնց շընորհիվ շատ երկրներ ու ժողովուրդներ բնաշընջման են հնիքարկվել, Գամսախուրդիան ընդդում է, որ հայ և վրաց ժողովուրդներն այդ արհավիրքներից ազատվել, օտարազգի զավթիշներին՝ «զարհութելի վիշապներին», կուլ չեն զնացել նաև հայ-վրացական անկաշառ միության, զանազան հրոսակախմբերի դեմ միասնական ուժերով հանդիս զալու շնորհիվ: «Վրաստանն ու Հայաստանը եղբայրարար ձեռք-ձեռքի տված՝ անողոք կոիվ էին մղում այդ վիշապների դեմ:— Դրում է Գամսախուրդիան,— ֆրանսիացի պատմաբան Դեֆրեբուսը ցույց է տալիս, թե արաբական էմիր Մամլանը ինչպիսի՝ պարտություն կրեց վրաց թագրատ III և հայոց Գագիկ թագավորների ընդհանուր ուժերից...»

Վրաստանի և Հայաստանի քաջակորով և խելացի թագավորները, գրողներն ու գործիչները միշտ տեսնում էին այդ պատմական եղբայրության պահպանման անհրաժեշտությունը: Երբ հայ պատմիշներն ու գործիչները կոչ արեցին Դավիթ Շինարարին Անին ազատելու սելցուկների գերությունից, նա հարձակվեց սելցուկների վրա և Անին ազատագրեց 1123 թվականին:

Ավելի ուշ, Գեորգի III ու Թամար թագուհին

բազմիցս արշավեցին թուրք զավթիչների վրա, որոնք ջանում էին ջնջել երկրի երեսից Հայաստանի մեծ կուլտուրան»¹:

Այս պատմական էքսկուրսից հետո Կ. Գամսա-խուրդիան գրում է. «1942 թվականին Երևանում, իմ բարեկամներ՝ Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դիմիրճյանի և ակադեմիկոս Հորսելու ներկայությամբ ես հայտարարեցի:

Մենք՝ վրացիներս, ձեղ՝ հայերիդ սիրում ենք նրան համար, որ մենք երկվորյակների պիտի նման ենք իրար, մեր ժողովուրդների ողբերգական պատմությունները նման են, մեր լեռները, մեր զետերը, վերջապես մեր լեզուներն ու ճարտարապետություններն ապացուցում են այդ բարեկամության նմանությունը:

Մեր սերնդի, մեր ժամանակի մարդկանց պարտականությունն է՝ երբեք և ոչ ոքի թույլ շտալ արատավորել արյան կաթիներով ամրապնդված հայ-վրացական եղբայրությունը, որն անշուշտ առհավատշաղակարող է լինել մեր ժողովուրդների հաջողությունների և հաղթանակների:

Մենք պետք է կտակենք մեր զավակներին՝ ամուր պահել այդ եղբայրությունը»²:

Ինքը՝ Գամսախուրդիան, սիրելով հայ ժողո-

վրդին, նրան համարում է իր մեծ բարեկամը և բարձր գնահատում նրա կուլտուրան: «Հայաստանում ևս ունեմ դարձյալ մի պանծալի և մեծ բարեկամ, — զրում է վրաց արձակագիրը, — որի հանդեպ ունեցած սերը միշտ վառ է իմ մեջ, որ իր կուլտուրայով, իր բազմադարյան տանշանքներով և իր արիությամբ հանրահուշակ հայ ժողովուրդն է»³:

Հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը սրբությամբ ու անկաշառ պահպանելու համար է պայքարել անվանի բանաստեղծ Տիգիան Տարիձեն: Դեռևս Անդրկովկասում սովորական կարգեր հաստատվելուց առաջ, մենշեկիների և դաշնակների ազգակործան քաղաքականության պատճառով ծագած հայ-վրացական ընդհարումների ժամանակ, Տիգիան Տարիձեն հանդես է գտվում վրացական մամուլում և քննադատում է մենշեկիների և դաշնակների ազգադավ քաղաքականությունը, որի նպատակն էր վնաս հասցնել հայերի ու վրացիների եղբայրությանը և այդ ժողովուրդներին շեղել սովորական կարգերի հաղթանակի համար պայքարելու ուղղությունը: Այդ մասին բանաստեղծը հիշում է իր ինքնակենսագրության մեջ: «Եմ ժամանակի արամադրության համար, — զրել է Տարիձեն, — բնորոշ է իմ բաց նամակը հայ նշա-

1 Կ. Գամսախուրդիա, Վարպետաց վարպետի աջը, Երևան, 1960, էջ 6:

2 Նույն տեղում, էջ 6—7:

1 Կ. Գամսախուրդիա, Վարպետաց վարպետի աջը, Երևան, 1960, էջ 7:

նավոր բանաստեղծ, Թիֆլիսի հայկական հայրենակցության նախագահ Հովհաննես Թումանյանին՝ հայ-վրացական կոլիզների ժամանակ, տպագրված «Սաքարթվելո» («Վրաստան») վրացական թերթում։ Նամակում դատապարտվում է ազգային հարցի լուծման մենշևիկների ու դաշնակների մակեղոնյան մեթոդը և կոչ է արդում ինտերնացիոնալ բարեկամության։ Թիֆլիսի թերթերում տպագրված Հովհաննես Թումանյանի պատասխանը մեծ բանաստեղծի դեպի հարեան եղբայրական ժողովուրդը տածած անկեղծության և վսեմ սիրո օրինակ է, բայց մենք գիտենք, որ ժողովուրդների իսկական եղբայրությունը Անդրկովկասում իրազործվեց միայն լենինյան ազգային քաղաքականության հիման վրա։¹

Սովետական կարգերի հաստատումից հետո Տ. Տարիեն ճանապարհորդում է Սովետական Միությունում։ Հաճախակի այցելությունները Մոսկվա ու Լենինգրադ, Ռուսահնայի, Բելոռուսիայի, Հայաստանի քաղաքները և գյուղերը, Միջին Ասիայի ուսապուլիկանները, Հարստացնում են Տաբիձեի տըպավորությունները, լայնացնում են նրա բանաստեղծական աշխարհի հորիզոնները և օժանդակում անմիջական ստեղծագործական կապերի ստեղծմանը եղբայրական գրականությունների ներկայացուցիչների հետ։

¹ Տապահ Տաբիձե, Իզбраниое, Մոսկվա, 1957, стр. 8.

Իր ամբողջ գրական գործունեության ընթացքում, ինչ ձևով էլ այն արտահայտվեր, — լիներ գառական կույզի Բելոռուսիայի մայրաքաղաքում՝ նվիրված տարրեր ազգությունների գրողների համագործակցությանը, կամ զիտական ուսումնասիրություն, որտեղ քննարկվում է Գրիբունդովի գրական կապերը ՀԽ դարի սկզբի վրաց առաջազեմ հասարակայնության հետ, Հոդված, նվիրված հայականավոր վիպասան Ա. Շիրվանզադեի կյանքին ու ստեղծագործությանը կամ զեկուցում Սայաթ-Նովայի պոեզիայի ինտերնացիոնալ բնույթի մասին, հավասարապես մոտ ու հարազատ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին, — ամենուրեք ու ամեն տեղ Տաբիձեն հանդես է գալիս որպես մեր երկրի տարրեր ազգությունների բարեկամության շատագով։

Երեսնական թվականներին ժողովուրդների բարեկամության թեման նրա պոեզիայում կիստրոնական տեղ է զրավում։ Այդ այն հիմնական բանաստեղծական տեսանկյունն էր, որտեղից պոետը ձգտում էր արտացոլել և իմաստավորել նոր կյանքի հաստատման բազմակողմանի պրոցեսը, նոր հասարակական գործունները, քաղաքական երևույթները, կուլտուրական կապերը և, վերջապես, կենդանի մարդկանց փոխհարաբերությունները։

Ազատ և իրավահավասար ժողովուրդների եղբայրական բարեկամությունը Տաբիձեի համար

դառնում է խելացիության և բարձր Հումանիզմի առավելագույն վառ արտահայտություն, որ կաղմում է նոր կարգերի էությունը:

«Հայաստանում» բանաստեղծությունների շարքը վկայում է այն մասին, թե որքան օրգանական է եղել բարեկամության թեման պոետի համար: «Քարերի աղաղակը», «Պոետների երազանքը մարմնացած», «Կենաց», «Անապատի ավտոմանապարհը» բանաստեղծություններում ամեն մի բանաստեղծորեն ստեղծված արդիականության նկարագիր, ամեն մի դրվագ հայ ժողովրդի հերոսական անցյալից, ամեն մի լեռ, արահետ և նույնիսկ Հայաստանի քարը վրաց բանաստեղծի զիտակցության մեջ սերտորեն կապվում է ոչ միայն իր ժողովրդի անցյալի ու ներկայի, այլև իր սեփական կենսագրության հետ:

Պատահական չէ, որ այդ շարքի հաջողված գործերից մեկը՝ «Պոետների երազանքը մարմնացած» բանաստեղծությունը, Տարիձեն նվիրել է հայ մեծ պոետ Հովհանն Թումանյանին, մի մարդու, որն անձամբ Տարիձեի համար դեռևս պատահեկության տարիներից իր մեջ մարմնավորել է Հարեան ժողովուրդների եղբայրական միության ազնիվ ձեզտումները: Վրաց բանաստեղծն արտահայտելով իր սերը Թումանյանի նկատմամբ, այնուհետև այն միտքն է արտահայտում, որ հայ մեծանուն բանաստեղծի երազանքը աղգերի անխախտ եղբայրու-

թյան մասին մեր օրերում զարձել է իրականություն, ընդիմիշտ անհետացել են թշնամություն հըրահրող պատճառները ու եղբայրը եղբոր դիմ էլ չի ելնում և ով անցյալում եղել է թափառական հոգիվ, այսօր երկիր է կառավարում:

Անհետ կորել է գժտությունը հին,
նվազ մեր երազն է արդեն իրական...
Ով երեկ հովիրվ էր սոսկ լեռնային,
Այսօր աշխարհն է վարում տիրական:

Կովկասյան եղբայր ազգերը այսօր
Ռուիշ մի երգ են համերաշխ երգում.
Աշխատանքն աղատ տեր է զերհզոր,
Նվազ քո Անուշն էլ չի հեկեկում:

Եղբայրներին հետ եկել եմ ևս էլ
Այս եղբայրությանն ասելու նոր երգ.
Այն երգը, որ դու էիր սկսել,
Կշարումակնք այսօր ահա մենք 1:

«Կենաց» բանաստեղծության մեջ Տարիձեն, անդրադառնալով Հայաստանի ոչ հեռու պատմական անցյալին՝ սուսական զորքերի կողմից Հայաստանը աղատազերելու կարևոր իրադարձությանը, իրավացիորեն գրել է:

Թիպետ խաղաղվեց երկիրն այս մի պահ,
Թիպետ երևանն առաջ զորքը ուռւս,
Մարդկանց բաժինն էր զիս զրկանք ու մահ,
Եվ մաքառում էր ժողովուրդն անհույս:

1 «Վրաց դրականության ընտիր էջնոր», 1961, էջ 467:

Այս տրաում հովտում՝ ասես թաղման վալք¹
Փոլած էր մոխիրն աճեղ անցյալի
Անթաղ ոսկորներ, գանգեր անհամար,
Հետքերն անպատում դարավոր ցավի ²:

Բանաստեղծն այնուհետև այն միտքն է առծարծում, որ ցարական միապետությունը չէր, որ պետք է փրկեր պարսկական ու թուրքական հարստահարիշների կամայականությունների հետևանքով ավերված Հայաստանը: Տարիձեն պնդում է, որ հայ ժողովուրդը ազատվելով իսպառ բնաշնչվելու մեծագույն շարիքից՝ գտնվում էր իրավագուրկ, թշշվառ վիճակում: Ցարական իշխանության ազգային քաղաքականությունը, փոքր ազգություններին միմյանց դեմ լարելը և ազգամիջյան կոփիվներ հրահրել³՝ սկսուցիայի վերելքին վնաս հասցնելու նպատակով, ժողովուրդներին մշտապես պահում էր լարված վիճակում, զրկում ստեղծագործ աշխատանքի հնարավորությունից և թշնամացնում դըրկից, եղբայրակից ազգերին միմյանց հետ:

Թշնամի էին եղբայրը եղբոր
Եվ ցեղը ցեղին՝ այն զաժան դարում,
Եվ տրաում-ախուր Արաթոք պղտոր
Արցունքներով էր անվերջ վարարվում ²:

Այդ բոլորին ավելանում է իմպերիալիստական

աետությունների կողմից հրահրված հայկական կոտորածները, հայության գաղթը սովորական թուրքիայից, «ցեղակից տղորուկի»՝ դաշնակցության ազգադավությունը, և հայ ժողովուրդը նորից կանգնում է բնաշնչման եղրին:

Նորից հրդեհը բռնկեց դաման,
Գայլիր ոռնացին. ջարդարար ու զող,
Կարա Բեքիրը՝ կոչումով փաշա,
Անցավ ալդ երկրով վայրի մոլուցքով:

Ոչ միայն թուրքն երկիրն ավերեց,
Այլև ցեղակիցազրուկն ազգադավ,
Եղբայրն եղբոր դեմ իր սորը սրեց,
Եվ զրեծն անեց ու ահազնացաց... ¹

Հայ ժողովրդին ոչնչացման վտանգից փրկում է մեծ կենինի վառած նոր լույսը: Տարիձեն ոգեցընված գրում է,

Եվ ահա... կենինն իժաստուն ու մեծ
Վասեց Կովկասում փրկության նոր լույս,
Եվ հավերժորեն նա եղբայրացրեց
Հայ ու վրացի և թուրք, օս ու սուս ²:

Բանաստեղծը համոզված, որ եղբայրակից հայ ժողովուրդն արդեն աղատադրվել է դարավոր շըղթաներից և մշտնչենական տառապանքներից, որ

1 Եվրաց գրականության ընտիր էջեր, էջ 464:

2 Նույն տեղում:

ընդմիշտ փակվել են վշտի դռները և Հայաստանը
ցնծությամբ է տոնում իր վերածնունդը, խանդա-
վառված շարունակում է.

Այստեղ չի զարթնի այլևս ոչ մի խան,
Չի լսվի անդամ նման զառանցանք.
Ուրեմն, թնդա՞ւ, իրդ ուրախության,
Եվ վշտի վրա դիր ամուր փականք:

Թող ծաղկի երկիրը Խորհրդային,
Կենացը՝ մի նոր արևի արդար,
Եվ կենացը նոր սերնդի, որ գին
Դառնությունները սոսկ գրքում կարդա:

Այդ նոր սերնդի՝ իր երշանիկ ապագան կերպող
Հայ ժողովրդի բնությունը վերափոխող ստեղծա-
գործ, ոգեշունչ աշխատանքն է գովերգել Տ. Տարի-
ձեն իր մի այլ՝ «Քարերի աղաղակը» բանաստեղ-
ծության մեջ.

Հին միֆը ահա՝ ասես կյանք առած,—
Քարեր են քանդում կիկլոպներն այստեղ,
Ենթեվոզ ժայռերի անկում ու շառաւ,
Մթին կիբճերում սարսափն է նստել:

Բանաստեղը հպարտությամբ նշում է, որ աշ-
խատանքը մեզնում դարձել է փառքի ու պատվի
գործ, հայ ժողովրդը վայելում է իր աշխատան-
քի պատուները, դարձել է իր ճակատագրի տերը և

1 «Էրաց գրականության ընտիր էջեր», 1961, էջ 465:

քայլում է գեպի նրանկությունը տանող արևոտ
ճանապարհով.

Այդ բոլշևիկյան քլոնզն է փորում,
Ու տես, հասել է մարդն իր երազին,
Այն ինչ տանշանք էր, քրտինք ու արյուն,
Փարձել է սիրանք ազատ ու ազնիվ:

Չի պատկանելու էլ խալիֆներին
Քաղաքը այս նոր՝ թաղղադի նման,
Ելել է մարդը որչերից մթին,
Ու բռնել իր նոր, արևոտ ճամփան:

Դե ուրախացիր, աղնիվ բարեկամ,
Խսկ շար թշնամին թող կորչի անհետ,
Էլ լի հանդուժի կացինն երկաթի,
Կապաժմի նա, ով շար է ու նենդ:

Շ, ոչ, իդուր չէ կրում մեր գերը
Պատկերը հզոր Մորճ ու Մանգաղի,
Փոխվել է մարդը ու նրա զիմքը,
Ու նա բնության արքան է հիմի:

Ահա փոթորկեց ծովը ժայռերի,
Ալիքների պնս քարեր ժփացին,
Փառը ու հաղթանակ կուռ բազուկներին,
Որոնք քարերին ճանապարհ բացին:

Տ. Տարիձեն բարձր է գնահատել հայ ժողովրդի
կուլտուրան: Ակնածանքով խոսելով Հայաստանի
պատմական հուշարձանների մասին, նա միաժա-
մանակ հիացել է սովետահայ գրողների, նկարիչ-

ների ստեղծագործություններով։ Այս առումով ուշագրավ է վրաց բանաստեղծի «Անապատի ավտոճանապարհը» շափածո գործը։ Գովերդելով Հայաստանի բնությունը, Զանգեզուրի կուսական լեռնաշխարհը, Ալագյազի կանաչապատ լանջերը, Արարատի ձյունապատ գագաթը, Հայկական վեհարժարապետությունը, Տարիձեն ողեջնշված խոսում է նաև ժողովրդի կենսունակության, առողջ, ընդվոր և շրնկճվող ուժու մասին, որը եղել է հիմնական նախապայմաններից մեջը և օգնել դիմանալու դարերի փոթորիկներին ու կուլ զննալու զանազան արտաքին և ներքին թշնամիների ազգակործան քաղաքաբականությանը։ Բանաստեղծը հայժողովրդի թշնամիներից խայտառակության սյունին է գամում զաշնակցությանը, որ ցանկանում էր Հայրենիքը վաճառել օտար տերերին։ Սակայն հայժողովրդի ազատատենչ ձգտումները, դարերի ստրկական լուծը թոթափելու նրա երազանքը պայքարի է հանում Հայաստանի աշխատավորությանը ընդդեմ տիրող կարգերի և կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տապալելով ատելի դաշնակցության արյունոտ տիրապետությունը՝ զառնում է իր բախտի տերը։ Եվ ահա, լինելով Սովետական Հայաստանում ու տեսնելով իր պայծառ պապան կերտող հայ ժողովրդի ուրախ ու երջանիկ կյանքը, մոտիկից ծանոթանալով Ավ. Խսահակյանի և Յ. Զարենցի պոեզիային, գերվելով Մար-

տիրոս Սարյանի հիմասքանչ արլեստով, Տարիձեն իր բանաստեղծությունը ավարտում է ժողովուրդների եղբայրության կոչով։

«Հայաստանում» բանաստեղծությունների շարքով չի սպառվում Տիցիան Տարիձեի մատուցած ժառայությունները հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործին։ Ցանկանալով ավելի մոտիկից ծանոթացնել երկու դրկից ժողովուրդներին միմյանց հետ, վրաց բանաստեղծը հաճախ հանդես է եկի հայ դրողներին նվիրված հողվածներով, թարգմանել է Ավ. Խսահակյանի «Արու-Լայա Մահարի» պոեմը և այլն։ Հայաստանում եռած ժամանակ Տարիձեն գրել է. «Մենք՝ վրասիներս ու հաւերը խայտառակ շափով քիչ ենք ճանաշում միմւանդ. պիտի որական քայլեր անել աւս փոխառարձ ճանաշողությունը ունաւ հողի վրա զնիւու տեսակետից։ Վրացական գրականության միջ նկատվող այս բաղր վերացնելու համար որոշ ծառաւություն կառող են մատուռի իմ արհատություններու ես պատրաստել եմ մի սիրո Հովհաննես Թումանյանի մասին, որն ընդունված է Վրաստանի Պետհրատի կողմին. ատարաստվում եմ որել մի սիրո նոռ Հայաստանի մասին, իսկ աւմու ոռաղված եմ Ավ. Խսահակյանի «Արու-Լայա Մահարի» պոեմի թարգմանական աշխատանքով»¹:

1. Տ. Տարիձեի թարգմանությամբ «Արու-Լայա Մահարի» պոեմը լույս է տեսնել 1931 թվականին։ Վրաց բանաստեղծը

Հայաստանի և Հայ ժողովրդի մասին գրված գործերից ուշագրավ են նաև պրոլետարական բանաստեղծ նոյ Զոմլեթելու «Երևանին» և Կ. Լորթքի-փանիձեի «Երևանից մինչև էջմիածին» բանաստեղծությունները։ Կ. Լորթքիփանիձեի հիշյալ բանաստեղծության մեջ արտացոլվել են այն տպավորությունները և մտորումները, որոնք նա ունեցել է, երբ ճանապարհորդել է Երևանից էջմիածին։ Բանաստեղծը վառ գույններով նկարագրում է Հայաստանի բնությունը, նրա գեղեցիկ ձմեռը և ապադիմելով կառապանին, ասում է. «Դե՛մ, քշիր ձիերդ, անիվներովդ ակոսիր, ի՛մ սիրելի կառապան, քո հարազատ երկիրը։ Ուրախ եմ, տեսնելով, որ փակվել են այն դառը վերքերի բերանները, որոնք հնում կրծոտում էին մեր մարմինը»։ Այստեղ Կ. Լորթքիփանիձեն ընդգծում է Հայ և վրաց ժողովուրդների բախտակից լինելու փաստը, այն ճշշմարտությունը, որ այդ երկու ժողովուրդները դարեր շարունակ եղել են մի մարմնի պես, պայքարելու մարտել են իրենց ազատության ու անկախության, իրենց մարմինը տանջող «դառը վերքերը»

պոեմի թարգմանության առաջաբանում գրել է. «Ինձ համար բոլորովին պարզ էր, թե ինչ խոշոր զժվարությունների առաջ էի կանգնած, երբ ձեռարկում էի այսպիսի մի պոլմի թարգմանությանը»։ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Զավարյան, Արքագծեր Հայ-վրաց գրական-կուլտուրական կապերի պատմության, Երևան, 1959, էջ 167—169։

բուժելու, այսինքն՝ արտաքին ու ներքին թշնամիների շահագործումից, հարստահարումից և ստրկական կապանքներից աղատագրվելու համար։ Իր ժողովրդի ազատության համար մղած պայքարի պատմությունը լավատեղյակ բանաստեղծին հետաքրրում է նաև աղատատեհն Հայ ժողովրդի պատմությունը, և նա դիմելով կառապանին, խընդումում է. «Ասա, պատմիր ինձ, թե որտեղ ինչ կորիւներ են տեղի ունեցել. թեև ես՝ իրեւ մի այլ ազգի մարդ, չեմ հասկանա ասածդ, բայց այսօր քո լեզուն էլ մալրենի է ինձ համար, որովհետև այդ լեզով էր խոսում Շահումյանը»։

Հայ ժողովրդի պատմական անցյալը և երջանիկ ներկան է արտացոլվել նոյ Զոմլեթելու «Երեվանին» բանաստեղծության մեջ։ Պոհտը, նկարագրելով Հայության վեհ ու հերոսական, սակայն տառապանքներով լի կյանքը՝ ուսուլյուցիայից առաջ, բացականչում է. «Օ՛հ, Երևան, օ՛հ Վանի ժողովուրդ, հին Նահրիի հռչակված ժողովուրդ։ Դու շատ վեհ ժամանակներ ես ունեցել, բայց դրա հետ մեկտեղ հազար վիշտ ու տանջանք ես կրել։ Ապա Զոմլեթելին հիացմունքով պատկերելով «ամբողջ աշխարհում մեծ համբավ ունեցող» Արարատ լեռան իր վրա թողած մեծ տպավորությունը, անցնում է Հայ ժողովրդի ստեղծագործ, շինարարական աշխատանքի գովերգմանը և Հույս Հայտնում, որ Հայաստանում սովետական կարգեր հաստատվե-

լուց հետո հայ ժողովուրդն առաջ կընթանա իր ո-
րոշակի կերպով գծած, վստահելի ճանապարհով:

Հնի և նորի հակադրությամբ է գրված նաև
Վրաստանի ժողովրդական պոետ Գ. Լեռնիձեի «Հա-
յաստանին» բանաստեղծությունը: Պոետը նախա-
ռակա պատկերում է որպես մի երկիր, որտեղ դաշտերը ջրվել են արյուն-արցոն-
քով, որովհետև դարեր շարունակ հայ ժողովրդի
զիմին կախված է եղել օտար հարստահարիչների
դաժան եղեննի սուրբ և նա տառապել է վշտի ծո-
վում ու կրել ստրկության բիրտ շղթաներ.

Խոշտանգվում էիր բիրտ շղթաներում,
Եռցող արտասուր, ավեր, վշտի ծով...
Երիմների պես ցուրտ էին սփռում
Դաշտերդ պատած քարո՞վ ու քարո՞վ 1...

Եվ վրաց բանաստեղծը զարմանք է հայտնում,
թե ինչպես բազմից հողմածեծ և տանջանքների
մեջ հեծող հայ ժողովուրդը կարողացավ պահա-
նել իր գոյությունը.

Երկի՞ր սրբանուրը արցոնքով ջրված,
Հազար ավերի, դավերի դու զո՞ւ, —
Ինչ ուժ կար քո մեջ, որ առուղ մեաց՝
Շուրթին լուսայդի երգ հավերժող 2...

Այս հարցադրմամբ լեռնիձեն ընդգծում էր, որ
հայ ժողովուրդը չի բնաշնչվել և իր գոյությունը

պահպանում է առաջին հերթին շնորհիվ իր աննը-
կուն, կինսահաստատ և քաջարի բնավորության:
Այնուհետև բանաստեղծը խանդավառված երգում
է, որ նրբեանի արտասուրի և արյան մեջ կորած,
թշնամիների կողմից հալածված հայ ժողովուրդն
իր անշեց հավատի շնորհիվ դեպի լուսավոր գալի-
քը՝ ՍՍԱԾՄ ժողովուրդների մնծ ընտանիքում կեր-
տում է իր փառավոր ապադան.

Զնդում են զվարթ մորմերդ անթիվ,
Լաստակներդ հաղթ սլանում դեպ վեր,
Այս քո երկիրն է Մհերի, Դավթի՝
Հագել լուսայդի բոցեզնն թներ 1...

Ոգեշնչված հայ ժողովրդի ստեղծագործ, լնու-
թյունը վերափոխող և բազմաթիվ բարիքներ ստեղ-
ծող աշխատանքով՝ վրաց բանաստեղծն իր ձևոքն
է առնում «Սևանի թասը» և խմում է հայ ժողովրդի
կինացն ու նրան մաղթում.

— Էլ ոչ մի ավեր, ոչ մի պաշարում.
Միայն մեր սիրով լինս պաշարված...
Եղբարնե՞ր, հպենք մեր սրտերն իրար,
Զողենք անձկալի հույզով անարատ,
Թող բոցավառվեն այդ հրով վարար
Թէ՛ Մղնինվարի և թէ՛ Արարատ 2...

Գ. Լեռնիձեն լի է անսահման սիրով դեպի Սո-
վետական Հայաստանը, նրա կուլտուրան, հայ ժո-

1 «Մովեսական Հայաստան», 1956, № 220;

2 Նոյն տեղում:

դովրդի ծոցում սնված զավակները, որոնք իրենցով
մարմնավորում են ամբողջ Հայությանը.

Զանգվից եմ լուսմ հրճվանքդ անշեշ,
Որ լցնում է զառ խինդով սար ու ծոր,
Քո սրտի երդն է կաթում հոգուս մեջ
Խսահակյանի տաղով մեղրածոր...
Երգը հուզակեզ մեր կուտասուի,
Սարյանի վառած երանգը շողոմ,
Քարձել են, ասես, թեն իմ երագի,
Լեռներից սիրով սիրաւ ես ողողում 1...

Անսահման սիրով է գովերգել Հայ ժողովրդի
մեծանուն պոետ Ավ. Խսահակյանին Գ. Լեռնիձեն
իր «Ավետիք Խսահակյանին» էրապրոմտ-բանա-
ստեղծության մեջ. Հեղինակը բանաստեղծական
գեղեցիկ խոսքի և պատկերների միջոցով մեծարում
է վարպետին, նշելով, որ նա իր պոեզիայով ան-
մահացել է, և որ նրա երգերը դարեր կապրեն ու
կբարախն «Հայաստանի սրտի հետ».

Դու կովկասյան երգիների նահապետ,
Խառնվել ես անմահության շնչի հետ:
Ոտքը՝ հողին և հայացքը՝ երկնքին,
Մասս է լինում երգիդ նժույգը կրկին:
Հեղեղեցիր այնքան կարու, այնքան սեր
Ու կուշեցիր նրանց «Երգեր ու լինքեր»:
Վերքդ գնաց, երգդ մնաց աշխարհին
Մաքուր որպես ձյունը Մասւաց կատարին:
Ու երգիդ հետ մնաց անօնդ անմեն

Եվ կմնա այդպես դարեր ու դարեր,
Կրաքախի Հայաստանի սրտի հետ,
Դու կովկասյան երգիների նահապետ 1:

Արվեստի ու գրականության և ընդհանրապես
իրենց ստեղծագործությամբ ու գործունեությամբ
ազգային սահմաններն անցած և համայն մարդ-
կությանը հայտնի դարձած կուտուրայի գործիչնե-
րին նվիրված պոեմները, ձոն-բանաստեղծություն-
ները կամ գրավոր բնութագրումները պեսք է դիտ-
վեն նաև որպես տվյալ ժողովրդի, նրա քանքարի
գովնօրում: Զե՞ս որ այդ գրողները և արվեստագետ-
ները մեծ են առաջին հերթին հենց այն պատճա-
ռով, որ նրանք կարողացել են վարպետորեն և գե-
ղարվեստական բարձր հնարանքների միջոցով ար-
տահայտել ժողովրդի ձգտումները, մտորումները,
նկրտումները, պատկերել ազգային սովորութնե-
րը, աշխատանքային հերոիկան և այլն Այս առու-
մով հիշենք Մայակովսկու, Զարենցի այն ստեղծա-
գործությունները, որոնք, այս կամ այն գործընին,
երկրին կամ ժողովրդին նվիրված լինելով հան-
դերձ, իրենց ընդհանրացումներով այնքան խոր են,
որ ձեռք են բերել խոշոր հասարակական-քաղա-
քական նշանակություն և դարձել ժամանակի նշա-
նակալից ստեղծագործություններից: Իհարկե, ինչ-
պես ամեն մի թեմայով գրված, այնպես էլ ժողո-
վուրդների բարեկամությունը արտացոլող գործե-

1 «Առվեստական Հայաստան», 1956, № 220:

ըր միշտ չէ, որ հասնում են գծղարվեստական կատարելության, սակայն, այնուհանդերձ, դրանք ձեռք են բերում յուրօրինակ հասարակական-դաստիարակչական նշանակություն:

Մասնավորացնելով մեր խոսքը կուլտուրայի գործիչներին նվիրված ստեղծագործությունների վրա, պետք է նշել, որ այդ գործերը, բացի ժողովուրդներին բարեկամության ոգով դաստիարակելուց, միաժամանակ բանաստեղծական պատկերավոր խոսքի միջոցով նշում են արվեստի և գրականության ականավոր ներկայացուցիչների դերը ժողովրդի հոգնոր կուլտուրայի զարգացման գործում, ներկայացուցիչներ, որոնց ստեղծած ժառանգությամբ որոշվում է տվյալ ազգի կուլտուրայի զարգացման մակարդակը: Հովհ. Թումանյանի, Ավ. Խսահակյանի, Մ. Սարյանի ստեղծագործությունները հենց այդպիսին են: Պատահական չէ, որ վրաց անվանի ուժիսյորներ Պ. Կանդելակին և Ռ. Չիսեհձեն, խոսելով հայ մեծ նկարիչ Մ. Սարյանի արվեստի մասին, նշել են. «Ազգը այն ժամանակ է մեծ, երբ նա ունի այնպիսի զավակ, ինչպիսին Սարյանն է: Նրա ամեն մի կտավը մեծ մտքի, մեծ զգացումի մարմնացում է: Նա իսկական ազգային նկարիչ է: Հիասքանչ են Հայաստանի բնակարգները, փայլուն են դիմանկարները: Ամենուրեք զգացվում է մեծ նկարչի սուր աշքը և լուսի յուրօրինակ զգացումը»:

Այսօր նա 80 տարեկան մի մարդ է: Սակայն ոչ մի բանում, բացի սպիտակ մազերից և իմաստությունից, չի զգացվում տարիների բազմաթիվությունը: Ցանկանում ենք նրան առողջություն և դարձյալ առողջություն: Նա խոշորագույն նկարիչ է: Նա հայ ազգի պարձանքն է»¹:

Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ Մ. Սարյանին նվիրված բնութագրումը զառնում է նաև հայ ժողովրդի կուլտուրայի մեծությունը բնորոշող բնութագրում: Եվ դա տրամարանական է, որովհետեւ հայ մեծ գեղանկարիչն նման արվեստագետների ստեղծագործություններն իրենց մեջ մարմնավորում են այն ամենը, ինչ ստեղծել է ժողովրդը հարյուրամյակների ընթացքում: Մ. Սարյանի արվեստը, իր ձևով ազգային լինելով հանդերձ, դարձել է համամարդկային և այն գերում է ոչ միայն հային, այլև համայն մարդկությանը: Մ. Սարյանը դարձել է, եթե կարելի է այսպես ասել, մարդկային հոգու ճարտարապետ և այդ է պատճառը, որ նրա բարձր արվեստով սքանչանում են բոլորը: Մ. Սարյանի ստեղծագործությամբ սքանչանում են նաև վրաց արվեստագետները, գրողները և խորհուրդ տալիս իրենց նկարիչներին սովորել հայ մեծ նկարչից, որովհետեւ «Վրձինի այդ մեծ վարպետի աշխատանքների հետ ծանոթանալը,— ինչպես զըրել է ՍՍԾՄ Գեղարվեստի ակադեմիայի թղթակից»

1 Մ. Սարյանի անձնական արխիվ

անդամ Ու. Զափարիձեն, — Հարստացնում է մեր արվեստը, ոգևորում մեր արվեստագետներին: Մ. Սարյանը որպես ստեղծագործող, իր վառ և գունեղ տաղանդով նվաճել է ժողովրդի սերը: Նրա ստեղծագործություններում վառ ու անմար գույներով է պատկերված Հայաստանի բնությունը»^{1:}

Մ. Սարյանը և հայ ժողովուրդը անբաժանելի են, որովհետև նա իր «մեջ ամբողջացրել է հայ ժողովրդի լավագույն գծերը: Ենք վրձինով դուք բացել եք ձեր այնքան անկեղծ, մաքուր ու մեծ սիրտը: Թող մեր տաղանդավոր երիտասարդությունը ձեզանից սովորի տեսնել կրանքի մարդարիտները և արվեստում լինել այնպես անկեղծ, ինչպես դուք»^{2:} — ասել է պրոֆեսոր Վ. Կանդելակին:

Մ. Սարյանի հաղվաղեակ արվեստով Հիացել ու շարունակում են Հիանալ վրաց կուլտուրայի և գրականության բազմաթիվ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Գ. Լեռնիձեն, Մ. Չիքովանին, Տ. Տարիձեն, Ի. Նոնիշվիլին, Ռ. Մարգիանին և ուրիշներ: Հիշյալ գրողների արտահայտած կարծիքները, զրի առնը-ված տպավորություններն ավելի ամբողջական ու ավելի ընդհանրացած ձևով արտահայտել է գրականադես իրակի: Անդրոնիկովը: 1956 թվականին դիտելով Մ. Սարյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, նա գրել է, «Միակ բանը, որ

կարելի է ասել այս ցուցահանդեսը դիտելուց հետո—Հսկա՝ է: Մեծագույն բազմազանություն, որը հազվագետ է հանդիպում արվեստի մեջ՝ միասնական ոճի ընդհանուր զացման առկայության դիպում: Զնվագող, շաղքատացող, այլ անընդհատ աճող տաղանդի ուժ, արտասովոր արդիականություն կյանքի և մարդկանց զգացման հարցում, ցնցող և ուրախացնող գեղարվեստականություն, գույների սիմֆոնիկություն, հոգեբանական բնութագրումների խորություն և բազմազանություն, կենսականություն և միկրույն ժամանակ ամեն մի մանրամասի և ամեն մի առարկայի լակոնիզմ՝ ընդհանուր առմամբ, ցնցող բազմազանություն, բանաստեղծականություն, փիլիսոփայական խորություն—աճա, թե ինչն է հիացնում և գերում Սարյանի արվեստի մեջ, ինչն է այս ցուցահանդեսը դարձնում մեր կուլտուրական, մեր գեղարվեստական կյանքի աշքի ընկնող իրադարձությունը»^{1:}

Մարտիրոս Սարյանը վաղուց արդեն հայտնի է որպես գույների կախարդական՝ վարպետ: Նրա ստեղծագործությունների բազմերանգությունը, գույնային կոնտրաստների միջոցով բնության այս կամ այն տեսարանի և կամ մարդու հոգեբանության մեջ էականը բացահայտելու խոշոր կարողությունը հիացնում են մեծ նկարչի կտավները

1 «Գրական թերթ», 1955, 23 սեպտեմբերի:

2 Նույն տեղում:

1 Մ. Սարյանի անձնական արխիվ:

դիտողներին, իսկ ներշնչանքով վրձինված այդ գույները, որոնք այնքան ուրախ են ու կենսափինդ և ընդգծում են կյանքի հալթանակն ու նրա բազմազանությունը, ոգևորություն են առաջ բերում և ոգեշնչված դիտողը, որ այլևս հնարավորություն շունի պարփակելու իր հուվամունքը՝ անհրաժեշտություն է զգում ուրիշին էլ մասնակից դարձնել այդ ամենին և գրի է առնում իր տպավորությունները՝ նույնքան ոգեշունչ, որքան ներշնչանքով են ստեղծված Սարյանի կտավները։ Այդպիսի զգացմամբ ենք համակվում, երբ կարդում ենք ի. Անդրոնիկովի այս տողերը. «...մեկը մյուսի հետևից մեր մտահորիզոնի առաջ են կանգնում ձեր կտավները՝ վառ կարմիր զգեստներ՝ գարնան սպիտակվարդագույն ծաղկունքի միջև, մանուշակա-մոխրագույն լիռնալանջեր, թափանցիկ երկնագույն երկնակամարներ, թանձր կապտագույն ստվերներ, ավաղա-նարնջագույն, արեօվ լուսավորված պատեր, զմրուտագույն կամ կապույտին տփող, թեթև կամ հյութեղ մուտ կանալ բնություն, միշտ տոնական, միշտ բազմերանգ, ինչպես նախշված գորդը։ Իսկ ձեր դիմանկարները—գորգերով և ֆոներով այնքան հարուստ, որքան և ձեր ներկապանակը։ Իսկ այս հանգիստ կեցվածքները, ձեզ հանդիպած մի ամբողջ սերնդի մտածող աչքերը, ձեր կողմից նկատված և դրոշմված սովորական մարդիկ։ Եվ ձեր բոլոր մարմնացումներում առկա է

կյանքի ահեղադրուդ հաղթանակը, նրա մեծ բազմազանությունը և ձեր աշխարհը դիտելու զարմանալի շաբաթյունը, որ միշտ գեղեցիկ է ու հոյակապ և փիլիսոփայորեն իմաստավորված ձեր կողմից։ Ձեր բոլոր կտավներին բնորոշ են ձեր իմաստությունը և խորագույն հանգիստը, որի մեջ զըսպված է ձեր վիթխարի տեմպերամենտը։ Ձեր հիմարանց «անդանտեն», ձեր կայծասփյուռ «ալեգրոն», ձեր գույների հանդիսավոր հնչունները. ամեն ինչ գեղեցիկ է ձեր ստեղծագործություններում, ամենը մարմնավորում է մեր քաններորդ՝ սովորական դարաշրջանը, ամենը իրենց հայացքը հառել են դեպի ապագան և երգում են ներկայիս հոյակապությունը»¹.

Մ. Սարյանի վեհ ու հոյակապ արվեստը, նրա ստեղծագործությունների բովանդակության այժմիմականությունը, որ սեղմ, բայց ճիշտ ու ոգեշունչ բնութագրվել է ի. Անդրոնիկովի կողմից, հայ մեծ նկարչի ոհալիստական արվեստը, որի մասին դեռևս 1939 թվականին, Երևանի օպերային թատրոնի կողմից Թբիլիսիում արված «Ալմաստ» օպերայի ներկայացման առթիվ գրել է բանաստեղծ Կարլ Կալաձեն, նշելով, որ «Կարճ շրջանից հետո, երբ մեր բեմում տիրապետում էին ֆորմալիզմը և կոնստրուկտիվիզմը, հատկապես ուրախալի է այն երևոյթը, որ թատրոն են եկել բարձր վարպետու-

1 Մ. Սարյանի անձնական արխիվ

թյան տեր նկարիչներ և իրենց հետ բերել են իսկական արվեստ։ Սա ամրողությամբ վերաբերում է նկարիչ Սարյանի դեկորացիաներին՝ ամենալավագույնին, որ ես երբեքցե տեսել եմ բեմի վրա»¹, այս բոլորը վրաց կուլտուրայի գործիչների համար Հիմք են ժառայիլ Մ. Սարյանին իրավացիորեն համարելու հայ ժողովրդի պարձանք և խոսել վրաց ժողովրդի դեպի Մ. Սարյանը տածած անկեղծ սիրո մասին։ Հիշենք այս գրքի բնաբանում բերված բանաստեղծական խոսքի մեծ վարպետ Ավ. Իսահակյանի խոսքերը, որ նա ասել է «Աբու-Լալա Մահարի» պոեմի վրացերեն թարգմանության առթիվ գրված իր երկու խոսքում. «Բացի քաղաքական ու տնտեսական գործոններից, որոնք միացնում են ժողովրդներին, զոյտություն ունի նաև մի անխուսափելի գործոն—արվեստն է ընդհանրապես և զրականությունը մասնավորապես»։ Այս բնորոշման լավագույն ապացույցը տեսնում ենք նաև Մ. Սարյանի ստեղծագործությունների օրինակով։ Մեծ նկարչի գործերն իրենց կատարելության շնորհիվ դուրս գալով ազգային շրջանակներից և մյուս ժողովրդներին ներկայացնելով Հայաստանի գեղեցկությունները, ձևոք են բերում խոշոր ճանաչողական արժեք և գառնում այն գործոններից, որոնք մոտեցնում են ժողովրդներին, իսկ իրեն՝ Մ. Սարյանին դարձնում ժողովրդների բարեկամու-

¹ «Коммунист», 1939, № 219.

թյան համար գործող արվեստագետ։ Այս ամենի խոր գիտակցմամբ նկարիչ Կ. Ճանկվետաձեն 1955 թվականին դիտելով Մ. Սարյանի թրիլիսիում բացված ցուցահանդեսը, գրել է. «Ականավոր հայ նըկարիչ Մարտիրոս Սերգեյի Սարյանն իրավացիորեն համարվում է եղբայրական հայ ժողովրդի պարծանքը։ Նա արժանավայել կերպով գտավ վրաց հասարակայնության անկեղծ սերը և ճանաչումը, որին վաղուց ի վեր արդեն հայտնի և հարազատ է նկարչի բացառիկ ազգային ստեղծագործությունները՝ անդրկովկայան եղբայրական ժողովրդի միջև բարեկամության ամրապնդման համար անխոնջ մարտնչողի կենարար արվեստը»¹.

Կ. Ճանկվետաձենն Հայաստանը, նրա բնությունը և Մ. Սարյանին իրարից անջատ չի պատկերացնում. «Հենց որ ոտք եք զնում վերածնված Հայաստանի մայրաքաղաք Երևան, իսկույն հիշում եք, որ այդ գեղատեսիլ քաղաքում արդեն երկար ժամանակ ստեղծագործում և հասարակական դորձունեությամբ է զբաղվում Հայաստանի ժողովրդական նկարիչ, ՍՍՌ Միության Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ... Մարտիրոս Սարյանը»:

Եթե ձեր առջև առաջին անգամ բացվում է Հայաստանի լեռան հազվագեղ հիմքանը բնանկարը՝ այրող արևով լուսավորված Արարատի տեսա-

¹ «Կոմունիստ», 1955, № 229։

րանը, Սևանա լճի ծփացող մակերեսը, անհնարին է, որ ՀՀիշեք Սարյանի բնանկարները, որոնցով նկարիչը՝ երիտասարդական տարիներից սկսած, երգում է իր հայրենի բնությունը»¹:

Վրաց զրողները ևս ցանկանալով վերարտապրել, նկարագրել հայկական բնաշխարհի դեղից կությունները, հաճախ են հիշատակում Մ. Սարյանին: Բերենք միայն մեկ օրինակ. Տ. Տարիձեն իր «Սևանի վրա» ակնարկում, նկարագրելով Սևանա լիճը, գրել է. «Հսկայական մի փոսի մեջ է ընկած Սևանը: Թվում է, թե լաշվարթ է ընկել երկնքից: Երբեմն թվում է, որ զա միրած է, որ երկինքը շուռ է եկել, և դու նայում ես մի հսկայական հայելու մեջ...»

Սևանը չորս կողմից շրջապատված է մերկ լեռներով, կարծես թէ վիշապները եկել են ջուր խմելու, բայց ճանապարհին, բերանները բաց, սառել են ու քարացելք»²:

Պատկերագոր այս նկարագրությունը տալուց հետո Տ. Տարիձեն զգալով, որ անհնարին է զրչի միջոցով վերարտադրել բազմերանդ Սևանի նկարագիրը, ավելացնում է, թե «Սևանի ալիքների երանգների համար նույնիսկ Մարտիրոս Սարյանը չի կարողանում գտնել էկվիվալենտներ, իսկ Հայաստանում ամեն ինչ հիշեցնում է Սարյանի գույ-

ները: Նա Հայաստանի համար նույնն է, ինչպես Կովկասի համար Վրուբելը, ինչպես Վրաստանի համար Նիկո Պիրոսմանիշվիլին: Ամենուրեք տեսնում ես նրա նատյուր-մորտերը»³:

Սևանի լիճը հայկական բնաշխարհի այն հրաշալիքներից մեկն է, որի անկրկնելի գեղեցկությամբ հիացել են շատերը, այդ թվում նաև վրաց գրողները: Նրանցից ամեն մեկն իր ստացած տպագրությունը, մատորումները Սևանի մասին արտահայտել է յուրովի, զտել է համապատասխան արտահայտչական միջոցներ Սևանը իր տեսանկյունից գովերգելու համար: Այսպես, օրինակ, Ս. Շանշիավիլին Սևանին նվիրված իր «Էկեպնդ Սևանի մասին» բանաստեղծության համար որպես հենք գոտագործել է լճի շուրջը հյուսված բազմաթիվ ժողովրդական ավանդություններից մեկը:

Շանշիավիլին Սևանի գոյացման տիսուր լեգենդը օգտագործել է նոր՝ Սովետական Հայաստանը գովերգելու համար: «Էկեպնդի» սկզբում պատկերված է դեռևս ուազմական թատերաբեմ շղարձած, անհիշելի ժամանակների Հայաստանը, երբ «Արարատը կաթ ու մեղր է ծորել» և «արևն այն տեղից է լուսավորել»: Սակայն գալիս են ահեղ ժամանակներ, Հայաստանի վրա են արշավում բազմաթիվ «ցեղեր», և հայկական լեռնաստանը

1 «Կոմոմիսատի», 1955, № 229.

2 «Заря Востока», 1929, № 183.

դառնում է հրո ճարակ, հայ ժողովուրդը տառապում է վշտի ու սովի ճիրաններում, և՝

Լաց եղան երկրի մայթերը անմեղ,
Սոսկ արցունք հոսեց մեղը ու կաթի տեղ,
Սովացավ արդ գառն արցունքն աղեկեղ...
Սևանա լիճը գոյացավ արդպես:
Ժամանակն անցավ... Աշխարհի վրա
Լենինյան դրոշն իր շողքը փոնց...
Ժաղովուրդն ինքը իր բախտը կոնց,
Ու վերածնվեց Հայաստանն ահա:
Ահա շողջողուն նոր Երևանը՝
Ժաղթանակների ցնծությամբ իր պերճ,
Լուսի ցնծության մեջ է Սևանը,
Եվ ժողովուրդը երշանկության մեջ...
Եվ խաղաղության, սիրո քաղցրակոր
Երգն է հնչեցնում քնարն ամենուր ¹:

«Տողեր՝ գրված Սևանի ափին» բանաստեղծության մեջ հուտա Բերուլավան սքանչանում է երազակին հմուտ վրձինով նկարված Հայաստանի գեղածիծաղ լճով, որտեղ աստղերը «խատուտիկ իշխան դարձած՝ լողում են, նազում»: Սևանա լճի գեղեցկությամբ զմայլված բանաստեղծի մոտ բընկության այդ հրաշալիքը գովերգելու զգացումը տեղի է տալիս և նա խանդավառությամբ նշում է, թե՝

Ո՞վ իմանար, թե մի օր էլ
Այս մոնջ գեղուհին

1 Եվրաց գրականության ընտիր էջեր, Երևան, 1967,
էլ 400:

Փաթորկաթափ կելնի մեզ հետ
Մեծ կյանքի ուղին,

Թե սպիտակ ածուխ կտա
Հսկա կասկաղին,
Թե բյուրավոր աստղ կշողա
Նրա լայն կրծքին,

Թե փայլ կտա նոր օրերի
Հողին հայկական,
Ու կրերի ծաղկունք ու կյանք
Հանդերին խոսան,

Թե լուրիթ զույնն իր հեքիաթական
Կտա արտերին,
Ու կժպտա արևի պես
Հայ աղջիկներին ։

Ոգեշունչ տողերով, հարազատի խանդավառությամբ է գովերդել Սևանա լիճը վրաց պեղիայի տաղանդավոր ներկայացուցիչ Սիմոն Զիքովանին: Սևանա լիճը և ընդհանրապես Հայկական բնաշխարհը Զիքովանու Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքում ծառայում են որպես ֆոն վերածնված հայ ժողովրդի հաջողությունները, նրա ստեղծագործ աշխատանքը, վերափոխված Հայաստանը պատկերելու համար: Բնության գեղեցկությունները վերարտադրելու միջոցով նկա-

1 «Սովետական դրականություն և արվեստ», 1951, № 11,
էլ 68:

բագրվող երևույթի նկատմամբ տրամադրության ստեղծման բանաստեղծական այդ հնարանքը նկատելի է Զիբովանու վաղ շրջանի Հայաստանին նրավիրված բանաստեղծություններում։ Մեր խոսքը վերաբերում է 1929 թվականին գրված և 1934 թվականին «Բանաստեղծություններ» խորագիրը կրող ժողովածուում լույս տեսած «Սևանի կամ Գողցայի լիճը» և «Ճանապարհորդություն Հայաստանում» գործերին, որոնց և հետագայում գրված Հայաստանին նվիրված բանաստեղծություններին բաժանում է մոտ մեկ քառորդ դար։

Զիբովանու տարրեր ժամանակներում գրված այդ բանաստեղծությունների համադրումը ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի խոշոր առաջընթաց է ապրել Սովետական Հայաստանը. եթե 1929 թվականի վերոհիշյալ բանաստեղծություններում հեղինակը բնությունը նկարագրելու միջոցով վերարտադրել է երկրի տնտեսական զարգացման համար առկա պոտենցիալ հնարավորությունները, ապա 50-ական թվականների կեսերին գրված բանաստեղծություններում մենք տեսնում ենք այդ հնարավորությունները իրականություն դարձած, եթե, ասենք, «Սևանի կամ Գողցայի լիճը» բանաստեղծության մեջ Զիբովանին լնին կոչ է անում արթնանալ դարավոր բնից և ենի նոր կյանքի ուղու վրա ու շառաջուն ջրերով փարուներ վառի հայկական աշխարհի համար, ապա վերջին շրջանի

գործերում Սևանը այլևս «մունջ գեղուհի» չէ, այլ ամբողջ ձայնով խոսող մի կապտալյա գեղեցկուհի, որը մասնակից է դարձել երկրի սոցիալիստական շինարարությանը, սպիտակ ածուխ է տալիս հակա կասկաղին ու իր անուշահամ ջրով կյանք տալիս խոսպան հանդերին։

Ս. Զիբովանու Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքը վրաց ժողովրդի՝ զեպի Հայաստանը, նրա ստեղծագործ ու կառուցող ժողովուրդը տածած ջերմ սիրո ու եղբայրական զգացումների բանաստեղծական արտահայտությունների մեջ է; Զիբովանուն հիացմունք է պատճառում հայ ժողովրդի ծաղկուն ու հարուստ կյանքը, նա այլևս չի տեսնում այն ամայությունը և տիբրությունը, որի մասին իր ժամանակին գրել է անցյալ դարի բանաստեղծ Ա. Ճավճակավածեն, Բանաստեղծը նշում է, որ սուրալով «զեպի լիճը լուրթ»։

Յորենի դեղիքը տեսանք մենք ճամփին,
Դեգեր ոսկեզրույն ու լեռնակուտակ,
Բարեկամության խոհերով անբիծ
Անգնած ենք հիմա հայոց երկնի տակ 1:

Ս. Զիբովանին իր «Սևանի ճանապարհին», «Սևանի վրա» և «Հայաստանի լեռներում» բանաստեղծությունների մեջ հարազատի սիրով է երգում Հայաստանը, նրա սեպ լեռները, ոսկեզօծ արտերը,

1 Սիմոն Զիբովանի, Եղբայրության ճամփաներով, Երևան, 1955, էջ 8։

լեռների մեջ որպես «մատանու լույս ակ» Սևանա լիճը: Բանաստեղծին հիացմունք է պատճառում միքանի անդամ արդեն տեսած Սևանը, որը նրա մեջ պահանջ է արթնացնում երգելու բնության այդ հրաշալիքը, օժիլ մաղերը նրա վճիռ ջրերով.

Սևան եմ զայխ ես երրորդ անգամ,
Չի հոգնեցնում ճամփան բնավին,
Ողջունում է մեղ լիճը դյուժական,
Որ կարծես երկնի պատառն է ծալի:

Բանաստեղծը մտքով գրկելով փառահեղ լիճը և սիրտը սուզելով նրա ջրի մեջ, ցանկանում է անվերջ երգել իր հոգում մանկություն արթնացնող կապուտակ լիճը:

Իմ սիրտն եմ տախ ջրերին մաքուր,
Ու նայում անվերջ կապուտակ լճին,
Եվ մանկությունն է դարթնում իմ հոգում
Ու ծփում որպես ալիքը վճիռ:

Սա լիճ է արդյոք, թե լուսն հրաշք,
Տի՛ս, որքան ջինչ է, որքան մով ու բաց,
Կրուստ կանգնել եմ ես ժայռի վրա,
Այս լքնաղ լճի հմատքով հարրած 2:

Եվ «Հընաղ լճի հմայքով հարրած» բանաստեղծը պատկերավոր խոսքի միջոցով նկարագրելով

1 Ս. Զիլովանի, Եղբայրության ճամփաներով, Երևան, 1955, էջ 8:

2 Նույն տեղում:

Սևանը, ձգտում է պատասխան տակ իր հարցին: Նա լճում տեսնում է՝

Կարծես թե ուկի ականջօղեր են
Կայծկատում, շողում Սևանում վճիռ,
Հուզումները խոր ինձ ողողել են,
Ինչպես ջրերը՝ ափերը լճի 1:

Երբեմն էլ աշնանը արկի տակ մայիս թվացող լիճը բանաստեղծը համարում է հայոց աշխարհի աշը և ցանկանում է լողալ նրա զովացուցիլ ջրերում.

Ուզում եմ լողալ ջրերում թովիչ.
Ու գնալ դեպի հնուները բաց,
Այս լիճը աշքն է հայկական հողի՝
Վասեմ լեռները մեջն արտացոլված:

Մրտիս մեջ լճի ալիքը հստակ
Խայտում է ինչպես ծաղը թոշունի,
Մայիս է թվում լիճն արկի տակ,
Թեկուզ օդի մեջ շռմնն է աշունի 2:

Մայիսյան պայծառությամբ ներկայացվող Սևանա լիճը իրենով մարմնավորում է Սովետական Հայաստանը, որտեղ վերածնված հայ ժողովուրդը բնությունը վերափոխող ոգնչունչ աշխատանքով բերքառատ այդիներ է դարձնում իր Հայրենիքի խոպան հողերը, կանաչացնում հրաշեկ լայն տա-

1 Ս. Զիլովանի, Եղբայրության ճամփաներով, Երևան, 1955, էջ 9:

2 Նույն տեղում, էջ 10:

բաժությունները և անդուլ վերակառուցումով ժաղկունքի ծով՝ հավերժ մայիս կերտում հայկական լեռնաշխարհում։ Այս միտքն է արտահայտել Զիքովանին բանաստեղծության հետագա երկտողում՝ հետևյալ հարցադրմամբ։

Բայց մի՞թե իրենց սեղ լեռնաշխարհում
Հավերժ մայիս չեն հայերը կերտել 1...—

որով ավելի խոր իմաստ է հաղորդել բանաստեղծության նախորդ տողերին։

«Սեդ ու խաղաղված» հայոց աշխարհը դովերգով բանաստեղծի մեջ ցանկություն է առաջ զալիս երգել նաև հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը։

Ե՞կ, սոսիրան բացենք լճափին կանաչ,
Խմենք կենացը սուրբ եղբայրության,
Չքնաղ Սևանի հմայքը չերգած՝
Ինչպես կարող եմ դնալ Վրաստան 2:

Հայ և վրաց ժողովուրդների փոխադարձ սերն ու բարեկամությունը խոր հուշականությամբ է եռգել Ս. Զիքովանին «Ղվարելիում» բանաստեղծության մեջ։ Այստեղ հեղինակն իր ջերմ սերն է արտահայտում Հովհ. Թումանյանի նկատմամբ և միաժամանակ նշում այն փաստը, որ Ղվարելիում՝

1 Ս. Զիքովանի, Եղբայրության ճամփաներով. Երևան, 1955, էջ 10։

2 Նույն տեղում։

իլիա Ճավճակաձեի հայրենիքում, ժողովուրդը մեծ սիրով է հիշում հանճարեղ բանաստեղծին, որն իր հերթին Ճավճակաձեի հայրենիքն է սիրել կաթողին սիրով և վրաց ժողովուրդին հղել անխախտ եղբայրության ու բարեկամության իր ջերմ խոսքը։ Զիքովանին հպարտության զգացումով է լցվում, երբ մտարերում է այն փաստը, որ երկու մեծ գեմոկրատ բանաստեղծներ Հովհ. Թումանյանը և ի. Ճավճակաձեն զեռևս անցյալում իրենց ժողովուրդների միշտ է անխախտ եղբայրության կուր հիմքեր են դրել։

Ավաղ, ես չեմ լսել նրան, Հովհաննեսին խոհուն,
Երբ որ զրուց է նա արել եղբայրության մասին,
Երբ երգ է նա ձռնել սիրով Վրաստանի սպուն,
Երգել դաշինքը դարավոր Քորիք ու Արաքսի և

Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքում մտահղացման ինքնատիպությամբ աշքի է ընկնում Զիքովանու «Ես զավակը չեմ Սայաթ-Նովայի» գործը։ Այստեղ հեղինակը հայ և վրաց ժողովուրդների հոգեհարազատությունը արտահայտել է յուրովի. իր այդ նպատակին հեղինակը հասել է հայ հանճարեղ բանաստեղծի և իր պոեզիայի մոտիվների տարբերությունների բացահայտմամբ։ Եվ չնայած Զիքովանին «Հայ շէ», ու Սայաթ-Նովայի քնարը շէ, որ նա հնչեցնում է, այնուհանդերձ

1 Ս. Զիքովանի, Եղբայրության ճամփաներով, Երևան, 1955, էջ 6։

վրաց բանաստեղծին գերում է Սայաթ-Նովայի անմահ պոեզիան,

Ես զավակը չեմ Սայաթ-Նովայի,
Զեռքս չեմ առել նրա քամանշան,
Բայց սիրում եմ երգն իմաստոն Հայի,
Որ այս աշխարհում կապրի անվախճան 1:

Սակայն որքան էլ տարբեր են երկու բանաստեղծների ստեղծագործությունների մոտիվները, այնուամենայնիվ, Զիբովանին կրել է Սայաթ-Նովայի աղղեցությունը, մեծ երգչի ձայնը որպես «հորդառատ ալիքը Քոի» ներխուժել է վրաց բանաստեղծի երգերի մեջ.

Սայաթի ձայնը նման է սրի,
Թռփանցել է նա իմ երգերի մեջ 2...

Եվ ահա, «իմաստուն Հայի» պոեզիայով գերված, խելքը նրա քյամանշին տված վրաց բանաստեղծը Սայաթ-Նովային իրավացիորեն դասում է աշխարհի հանճարենի կողքին և պատրաստ է երգի արքայի սազով մրցել նրանց հետ.

Բայց նրա սազով վստահ կմրցեմ
Երգիների հետ հին ու մեծանուն 3:

Հայ և վրաց ժողովուրդների հովեհարազատու-

1 Ա. Զիբովանի, Եղբայրության ճամփաներով, Երևան, 1955, էջ 13:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

թյունը, նրանց բախտակցությունը, միմյանց նըկատմամբ սրտացավլ լինելու փաստը Զիբովանին արտահայտել է հետեւյալ երկտողում.

Այն սուրբ, որ մեծ Սայաթին խոցեց,
Ինձ էլ է դիպել իր բիրտ հարվածով 4:

Այստեղ Սայաթ-Նովան իրենով մարմնավորում է հայ ժողովրդի ողբերգական անցյալը, եղբայրություն, որին զո՞ւ են դնացել Հայրենիքի փրկության համար անձնալո՞ւ մարտնչող վրաց ժողովրդի քաջարի որդիները: Բայց եթե Սայաթ-Նովայի կյանքի ողբերգական վախճանի միջոցով Զիբովանին սիմվոլացնում է երկու ժողովուրդների գլխին եկած աղետը, ապա իրեն՝ հայ հանճարենի երգին վրաց բանաստեղծը համարում է անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության սիմվոլ և ոգենշնչված նրա օրինակով, գրում է:

Երեք լեզվով է Սայաթը երգել,
Երեք ձայնով է նա սիրտս հուզում,
Երեք ձայներն այս սրտիս մեջ պահել,
Տասնվեց ձայնով երգել եմ ուզում 2:

Եվ Զիբովանին անցնելով Հայոց աշխարհի վեհու մշուշոտ լեռներով, տեսնելով Հայ ժողովրդի սրտաբացությունը, նրա պայծառ կյանքը, իր տաս-

1 Սիմոն Զիբովանի, Եղբայրության ճամփաներով, Երևան, 1955, էջ 13:

2 Նույն տեղում, էջ 14:

նըգեց ձայներից մեկով, որ ուժ է առել Սայաթ-Նովայի երգերից, դուշերգում է վերածնված Հայաստանը.

Ինչ փարթամ են ծաղկել լանջերն ամայի,
Ո՞ւր են չկան այն տևակները կավե,
Բարձրացել են, ինչպես ուսերը հայի,
Կոթողներն ալս, որ մեալու են հավեն։¹

Վրաց, ինչպես նաև հայ զրոզները, երկու դրկից ժողովուրդների պատմական, դարավոր բարեկամությունը արտահայտել են Քոի և Արաքսի կամ Արարատի և Կաղեկի սիմվոլիկ եղբայրության միջոցով։ Ս. Զիբովանին շի ընտրել այդ վաղուց արդին ընդունված սիմվոլները. նա որպես հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը մարմնավորող սիմվոլներ ընտրել է Զանգու և Խորի գետերը։ Այդ ընտրությունը իմաստավորված է։ Առաջին հայացքից թվում է, թե Զանգու և Խորի գետերը, որ աշխարհագրական առումով ոչնչով շեն առնչվում իրար հետ, չէին կարող հանդիսանալ երկու աղքերի եղբայրությունը մարմնավորող սիմվոլներ։ Սակայն այդ միայն թվում է. եթե Զանգուն և Խորին սովորական կարգերի հաստատումից առաջ համարյա ոչ մի օգուտ չէին տալիս ժողովրդական տնտեսությանը, այժմ այդ գետերը, սովորական մարդու ստեղծագործ աշխատանքի շնորհիվ, լիո-

վին վերափոխվել են և ճամնակից դարձել կոմունիզմի լայնածավալ շինարարությանը։ Ինչ դեռ որ կատարում է Խորին Սովետական Վրաստանի ժողովրդական տնտեսության դարդացման համար, զովրդական անտեսության դարդացման համար, Զանցյնը կատարում է Զանգուն Սովետական Հայաստանում։ Այս հանգամանքն է նկատի ունեցել Զիբովանին, որ ցանկանալով երգել հայ և վրաց ժողովուրդների նոր որակ ստացած բարեկամությունը, որպես սիմվոլ ընտրել է Զանգու և Խորի թյունը, որպես սիմվոլ ընտրել է Զանգու ունեցել բարեկամությունը. այդ է նկատի ունեցել բանաստեղծը, երբ գրել է.

Ծոգ է այստեղ... Հովը լոել, չի շրջում,
Զանգուն անզուսպ զարկում է շեկ ժայռերին,
Այստեղ կանգնած երրա զետն եմ հիշում,
Նույնն է, նույն է նրանց երգը անլոին։

Հուզված կանգնել ու նայում եմ ես գետին
Ու ժայռերին, որ այգիներ են դարձել,
Նայում եմ ես Արարատի գմբթին,
Որ վշտի տակ սպիտակել է կարծես ։

Վշտից ճերմակած Արարատ լեռը իրենով խորհրդանշում է արտասահմանում ապրող հայությանը, որի կյանքի պատկերմանը թե՛ արտասահմանում և թե՛ Սովետական Հայաստանում Զիբովանին անդրադարձում է օթեցրութից եկած մեղ-

1 Ս. Զիբովանի, Եղբայրության համփաներով, Երևան, 1955, էջ 15։

1 Ս. Զիբովանի, Եղբայրության համփաներով, Երևան, 1955, էջ 15։

վարույժը» և «Վերադարձ» բանաստեղծություններում: Թերությի ծերուկը, որի մեջ հեղինակը մարմնավորել է Հայրենադարձ Հայությանը, «փախել է դառն վշտից ու սովից» և փրկություն դանել «Հայրենի կանաչ ափերում», որտեղ մեղուները «ծաղկունքի ծովից լոկ բաղրություն են նրա տուն բերում»: Գեղեցիկ ու խորիմաստ բանաստեղծական պատկերի մեջ մարմնավորելով Հայության Հայրենադարձության փաստը և վշտին ու ցավին հրաժեշտ տված Հայրենադարձ ծերունուն նմանեցնելով հայ ժողովրդի սիմվոլը Հանդիսացող Արարատ լեռանը, վրաց բանաստեղծը գրում է.

Իշնում էր մութը, ու թվում էր ինձ,
թէ ինչ-որ րան է փոխվում աշխարհում,
թէ Արաքս գետի այն մյուս ափից
Արարատ լեռն է տուն վերադառնում:

Թէ նրա առաջ լեռները բռնը¹
Ամպ-գլխարկներն են Հարգանքով հանում,
Թթենիները խշում մեղմօրոք
Ու նրա առաջ ճամփա են բանում:

Թէ նրա հանդեպ լույսեր են Հանում,
Ու բարդիներն են ցնծում երգերով,
Եվ Արարատը իր տունն է զառնում
Այս հայ ծերունու ոտնահետքերով¹:

Պատկերելով Սովետական Հայաստանում իր

երջանիկ կյանքը կերտող Հայրենադարձ հայի առօրյան, Ս. Զիբովանին ընդգծում է նաև այն փաստը, որ ծեր մեղվարույժի խաղաղ կյանքը հանգիստ չի տալիս Արաքսի այն ափին դավող ոնենգամիտ լարին։

Մինչդեռ Արաքսի այն մյուս ափին
Նենգամիտը շար սերմեր է ցանում,
Պղծում ծաղկունքը Մասիսի կրծքին
Եվ դոլարն իրոք դրոշ ծածանում:

Տապա՞ն է փնտրում—ոչ, ուզում է նա
Մեր մեղվարույժի տունը խուզարկել:
Եվ կարծում է թե մշուշը մոալլ
Ի վիճակի է ոճիրն իր ծածկել²:

Սակայն մեղվարույժը, որպես խաղաղության արի զինվոր, Հավատում է աշխարհի բարի կամքի տեր մարդկանց Հաղթանակին, վստահ է, որ դավադիր թշնամին այլևս անկարող է վերադարձնել տիսուր և տառապանքներով լի անցյալը, իր Հայրենանվեր աշխատանքով բազմապատկում է սպատական Հայրենիքի Հարստությունը.

Բայց մեղվարույժն իր փեթակների մեջ,
Շրջում է Հանգիստ, շրջում է վստահ,
Ուկի խորձեր է կապում նա անվերջ
Ու լուսում Զանգվի երգերը հստակ²:

1 Սիմոն Զիբովանի, Եղբայրության ճամփաներով, 1955,
էջ 17-18:

2 Նույն տեղում, էջ 18:

1 Սիմոն Զիբովանի, Եղբայրության ճամփաներով, 1955,
էջ 20:

«Նականին» և «Թերմայում» բանաստեղծություններում Ս. Զիքովանին խոր հուզականությամբ գովերգել է Հայաստանի շրնադ ընության գեղածիծաղ գրկում իր ազատությունը վայելող հրջանիկ ու ժրաշան հայուճուն, որն իր անձնվեր աշխատանքով բերքի առատություն է ստեղծում երկրում և սիրով է լցված եղբայրական վրաց ժողովրդի նկատմամբ:

Թեմատիկ առումով բազմազան է նաև Իոսիբ Նոնեցվիլու Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքը: Նոնեցվիլին, լինելով Հայաստանում և ուսումնասիրելով հայ ժողովրդի շարքաշ, բայց հերոսական անցյալը և միաժամանակ տեսնելով ներկայիս Հայաստանը, որի ժողովուրդը ողեշնչված կերտում է իր պայծառ ապագան, խանդավառությամբ է երգում դարեր շարունակ բախտակից հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը, հայ ժողովրդին և Հայաստանի գեղեցիկ ու արևագառ բնությունը:

Ժողովուրդների բարեկամության թեմայով գրրված բանաստեղծությունների շարքում իրենց ինքնատիպությամբ և գաղափարի բանաստեղծական մարմնավորմամբ աշքի են ընկնում Նոնեցվիլու «Օչախ, դրոշ, ճշմարտություն» և «Երևի ինքն էլ Հավատար» բանաստեղծությունները: Մրանցից առաջինում, օշախ, դրոշ, ճշմարտություն բառերի միջոցով, որոնք ինչպես հայերենում, այնպես էլ

վրաց լեզվի մեջ նույն նշանակությունն ունեն, հեղինակն արտահայտել է հայ և վրաց ժողովուրդների հոգեհարազատությունը, նրանց սերտ համագործակցությունը և անկաշառ եղբայրությունը, եղբայրություն, որ անխախտ է եղել և դարեր շարունակ դիմացել բազմաթիվ փորձությունների:

Երեք սրբազն բառերը այս հին Մեր միասնության զրահն են կոնկ, եվ միասնության այդ կուռ զրահին Ոսպներն իրենց թրերն են փշրել¹:

Ի, Նոնեցվիլին, հիմք ընդունելով Խ դարի վրաց պատմիչ Լեռնտի Մըրովելու միջոցով մեզ հասած ավանդությունը Հառոսի և Քարթլոսի մասին, ըստ որի հայ ժողովրդի նախահայր Հառոս և վրաց ժողովրդի նախահայր Քարթլոսը եղբայրներ են եղել, և որ այդ ժողովուրդները հնագույն ժամանակներում խոսել են Հայերեն, զոնք է «Երևի ինքն էլ Հավատար» բանաստեղծությունը: Հեղինակը հաջողությամբ օգտագործելով Հառոս և Քարթլոս եղբայրների ավանդությունը, այն միտքն է հայտնում, թե վրաց պատմիչը, ոժգոհ իր ասլրած տխուր ժամանակաշրջանից, ստեղծել է այդ հիանալի հերքիալը, որով ցանկացել է օգնել երկու դրկից ժողովուրդների բարեկամության ամբապնդմանը.

Նա վրացու չափ սիրել է հային,
Եղբայրությունն է՝ տեսնացել նրանց

1 Իոսիբ Նոնեցվիլի, Հայաստանում, Երևան, 1955, էջ 4:

Եվ ավանդնէ և այս հեքիաթը հին,
Որպես թանկագին մտերժության գանձ:

Աչքն ազատության վառ լուսաբացին,
Նա հորինել է այս հեքիաթն անմա՞ճ,
Որ բռնության դեմ հայն ու վրացին
Թարձրացնեն ինչպես արդարության ջահ¹:

Եվ բանաստեղծը տեսնելով, որ վրաց պատմիչի երազանքը հայ և վրաց ժողովուրդների եղբայրական փոխհարաբերությունների մասին իրականություն է դարձել, մի բան է տեսնում.

Ինձ գիրին է առել Երևանը պերճ,
Դեմս նստել է Մասիս ալեհեր,
Եվ հոգու խորքում վառլում է մի տեսնշ,
— Այս, պատմաբանն այն կենցանի լիներ,

Գեթ մի ակնթարթ իմ դիմաց կանգներ,
Իր շուրջը նայեր ու խորունկ ժպտար,
Մեր եղբայրական դաշինքը տեսներ
Եվ իր հեքիաթին ինքն էլ հավատար²:

Հայ ժողովրդի դառն անցյալը և ներկայիս ուրախ կյանքն է իր արտացոլումը զտել ուկեա Ալեքսանդր Շավալյանը հետ Գոգչա կամ Սևանա լճի ափին բանաստեղծության մեջ: Ընտրելով վեճի ձևը, նոնեշվիլին կարողացել է զտնել բանաստեղծական մի այնպիսի հնարանք, որը նպատակա-

1 Խոսեր Նոնեշվիլի, Հայաստանում, Երևան, 1955, էջ 14:

2 Նույն տեղում, էջ 16:

հարմար է երկու իրարամերժ հասարակարգերի օրոք հայ ժողովրդի գոյավիճակի հսկայական տարրերությունները ցուց տալու համար: Հայկական գեղատեսիլ լճի գեղեցկությունները, նրա ափերին տիրող ուրախ եռուղեռը պատկերելու միջոցով բանաստեղծին հաջողվել է վերարտադրել անցյալում օտարի լծի տակ կեղեքվող, իսկ այժմ իր երշանիկ կյանքը կերտող հայ ժողովրդին:

Ամպերի հետ անցան այն օրերը մթին,
Եվ այսօր քարն անգամ ժպիտ ունի շրթին¹:

Գեղեցիկ ու հուզիչ է «Կատարված երազ» բանաստեղծությունը, որտեղ Նոնեշվիլին, դիմելով հայրենի հողի կարոտը սրտին, դարեր շարունակ օտարության մեջ տառապող հայությանը, ասում է.

Երազել եք դուք ցրտին ու տապին՝
Սեփական գյուղում ճրադ ունենալ,
Օշախ ունենալ Արագի ափին
Եվ օշախի մեջ կրակ ունենալ:
Հայոց հողն էիք դուք տեսնում անվերժ,
Հայոց ծաղկումքի բուրն էիք տեսնում²:

Եվ ահա կատարվել է հայության դարավոր իշեր, պանդուխտ հայը հայրենիք է վերադարձել: Բանաստեղծը այլարանական պատկերի միջոցով

1 Խոսեր Նոնեշվիլի, Հայաստանում, Երևան, 1955 էջ 10:

2 Նույն տեղում, էջ 5:

տալիս է արդեն Հայոցնիք վերապարձած և նոր, ուրախ կյանքի տեր դարձած Հային.

Մասսի ղեմ-դիմաց, վճիտ երկնքում,
կոռոնկն էր թշում ազատ ու անհօգ,
Նա բույն է շինել Հինավուրց բարզում
Եղ ձագ է Հանել ընի մեջ նորոգ:
Նա չի անշատվում էլ իր երամից
Եղ էլ չի չլում նա Հայաստանից 2:

Հայ ժողովրդի ձգտումը գեափի լույսն ու դիտությունը, դարերի ընթացքում ստեղծված Հայ կուլտուրայի գոհարները արհավիրքներից ու բարբարոսության ճանկերից փրկելու նրա պայքարն իրենց բանաստեղծական արտահայտությունն են գրտել Նոնեշշիլու «Վարպետներն այսպես հաջնել են իրար» և «Մատենադարանում» բանաստեղծությունների մեջ, որոնցից վերջինում, բացի վերոհիշյալից, իր արտացոլումն է գտել նաև Հայ և ուստ ժողովրդների բարեկամությունը: Հեղինակը նըշում է, որ երբ ոստիք սպառնացել է բնաշնչի Հայ ժողովրդին ու նրա պատմությունը, մի ուսւ զինվոր օգնության ձեռք է մեկնել և փրկել Հայ պատմագրության գոհարներից մեկը.

...Ու երբ ոստիք արդեն սպառնում էր՝ իսպառ Բնաշնչել Հարուստ մեր պատմությունն ու մեղ,

1 Խոսեր՝ Նոնեշշիլի, Հայաստանում, Երևան, 1955, էջ 6:

Մի ուսւ զինվոր ձեռքն իր պարզեց եղբայրաբար՝ եղ Հավիայան փրկեց այս գիրքը մեծ 1:

Մուս զինվորի եղբայրական օգնության պատմական փաստի միջոցով՝ Հեղինակը սիմվոլացրել է ուսւ մեծ ժողովրդի անդնահատելի օգնությունը՝ Հայ ժողովրդին աղգային բնաշնչումից աղատագրելու գործում:

«Օրհնվի» բանաստեղծության մեջ Նոնեշշիլին զրսնորել է ուսւ ժողովրդի, նրա լեզվի և կուլտուրայի հսկայական գերը անցյալում իրավագուրկ, ներկայում իրավահավասար սոցիալիստական աղդերին համախմբնելու, նրանց դեպի լուսավոր գալիքը տանելու գործում: Շրջադաշելով Հայաստանում՝ Նոնեշշիլին իր բարեկամների հետ խոսում է ուսւերեն: Այդ համագումանը միաբ է հղացնում բանաստեղծի մեջ գովերդիլու ուսւաց լեզուն, մի լեզու, որը հաղորդակցության միջոց է դարձել ոչ միայն աշխարհագրական առումով իրարից հեռու գտնվող ազգերի համար, այլ նույնիսկ այնպիսի դարավոր հարեւանների, կողք-կողքի ապրող ժողովուրդների համար, ինչպիսիք են Հայերը և վրացիները: Բանաստեղծը ուսւերենը իրավացիորեն համարելով եղբայրության լեզու, ընդգծում է նաև այն փաստը, որ ուսւ մեծ աղգի Հարուստ լեզուն ինչպես մյուս ժողովուրդներին, այնպես էլ Հայ և վրաց ժողովուրդներին ծառայել և ծառայում է որ-

1 Խոսեր՝ Նոնեշշիլի, Հայաստանում, 1955, էջ 18:

պես համաշխարհային կուլտուրայի հետ ծանոթանալու և դրանով իսկ ավելի զարգանալու, ավելի շրջահայց դառնալու հզոր միջոց:

Թարմ, Հիշողության մեջ մնացող պատկերներով զրված «Բալլադ աղբյուրների մասին» և «Սահմանապահը» բանաստեղծությունների թիմաները թեև ժամանակակից պոեզիայի համար նորություն չեն, սակայն դրանք լուծված են յուրահատուկ ձեռվով: Լիրիկական չերմությամբ է զրված բալլագը. բանաստեղծին ոգեշնչել են Զանգվի ափին կառուցված աղբյուր-հուշարձանները՝ նվիրված Զոյա Կոսմոդեմյանսկայային, Նելսոն Ստեփանյանին, Օլեգ Կոչնովյանին, Սերգեյ Օհանյանին, Ալեքսանդր Չեկալինին և մյուս հերոսների պայծառ հիշատակին: Այստեղ Մոնեցվիլիին բանաստեղծական գեղեցիկ պատկերների միջոցով ընդգծել է հարիբնիքի համար զոհված հերոսների անմահության գաղափարը:

Զ՞աշողդից թշնամուն
Խել կրանքը ձեր անզին...
Աղբյուրներ եք զարձել զուք
Հիմա Զանգվի եղանքին։
Դուք ջինչ երգեք եք Հյուսում
Ժողովրդի սրբի մեջ,
Կարկաչում եք ու Հոսում
Ու խօսում եք զուք անվերջ ։

1 Խոսք Խոհեղպէլի, Հայաստանում, Արևան, 1955, ց2
Տ-Շ:

158

Ավելի ինքնատիպ է «Սահմանապահը» բանաս-
տեղծությունը: Գովերգելով «երկու տարրեր աշ-
խարհի, երկու դարի արանքից» հոսող Արագ գետի
ափին կանգնած սահմանապահի անգնահատելի
գերը սովետական հայրենիքի սահմանը, մասնա-
վորապես, Հայաստանի սահմանագծի հետ նաև
Վրաստանը պաշտպանելու գործում, հեղինակը
կտրուկ փոխում է բանաստեղծության զարգացման
ընթացքը և հուզաբաթավ նկարագրում է Հայաս-
տանը և Վրաստանը իրար միացնող, միմյանց
փարված սպիտակ լեռնապարերը.

Ալսպես գնում են, փարզում,
Գգլում սիրով մի խորին
Հայոց լեռները հեռանման՝
Վաստանի լեռներին:

Հեռալում լնոներն են ժպտում
Գագաթներով՝ ձյունաշող,
Նրանք իրար են կապում
Էսկու եռկիր, երկու հող 1...

Հենց այստեղ էլ դրսևորվում է թիմային յուրա-
տեսակ լուծում տալու հեղինակի կարողությունը։
Սահմանապահը առաջմ թողնվում է երկրորդ
պլանի վրա և հանգստ է գալիս, եթե կարելի է այս-
պես ասել, զլիսավոր գործող անձը, որը տվյալ
դեպքում Հայաստանի և Վրաստանի սահմանագիծ

¹ Ինսեր Խոնչշվիլի, Հայաստանում, Երևան, 1955, էջ 41:

157

բնաշխարհների միջոցով սիմվոլացվող հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն է, բարեկամություն, որը սակայն խիստ տարբերվում է երկու ազգերի միջև գոյություն ունեցող պատմական անցյալի եղբայրական փոխհարաբերություններից։ Դասակարգային և անդասակարգային հասարակությունների օրոք գոյություն ունեցող ժողովուրդների բարեկամության որակական այդ տարբերության նիշտ տեսակետը Նոնեցվիլին մարմնավորել է հետեւյալ տողերում։

Սակայն ճնում, ընկերնե՛ր,
Ճնում լիներն այդ անել
Հայաստանի հողերն են
Վրաստանից բաժանել 1:

Եվ եթե նախկինում իրար փարված ձյունածածկ լիները սահման են եղել երկու հողի առանքում, ապա՝

Հիմա, երբ այս օրերում
Մենք ծաղկել ենք անարդել,
Եվ մեր ծաղկած հողերում
Եղբայրությունն է ծաղկել,

Երբ չկա ու չի լինի
Ու մի սահման մեր կյանքում,
Մեր սրտերի, խոհերի,
Մեր հողերի արանքում 2:

1 Խոսեր Նոնեցվիլի, Հայաստանում, էջ 41:

2 Խույն տեղում, էջ 42:

սահմանապահը հանդիս է զալիս արդեն ոչ որպես երկու դրկից ժողովուրդների սահմանապատող անցանկալի օղակ, այլ արտաքին թշնամու տանձգություններից, որին հանգիստ չի տալիս հայ և վրաց ժողովուրդների եղբայրության ուժը, ստեղծված կուռ բարեկամության անհողողդդպան։

Գեղեցիկ, էմպցիոնալ գործ է «Հոկտեմբերի սկիզբն էր դեռ բանաստեղծությունը, որտեղ տըրված է մի հուղիլ պատկեր Հայաստանի Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսային առօրյայից։ Հեղինակը խաղողի այգում շրջելիս հանկարծ փարթամ վազերի միջից լսում է վրացական երգի հնչյուններ։ Երբ նա ամբողջովին հետաքրքրություն դարձած դիտում է շուրջը, տեսնում է.

Հայն ու վրացին այգու մեջ զով
Իրար սիրով զրկում էին,
Հրճվում էին իրար զործով
Եվ իրար հետ երդում էին...

Գրկում էին նրանք իրար,
Իրար նայում հպարտ ու վես,
Եվ հեղում էր երգը նրանց՝
Եղբայրական երդումի պիս 1:

Պարզվում է, որ նատաներցի կոլտնտեսական-ները հյուր են եկել իրենց մրցակից հայ կոլտնտե-

1 Խոսեր Նոնեցվիլի, Հայաստանում, Նրանք, 1955, էջ 28—29:

սականների մոտ: Թարեկամ ժողովուրդների փոխադարձ սերը և հոգեհարազատությունը հեղինակը մարմնավորել է բանաստեղծական հուզիչ ու գեղցիկ պատկերի մեջ.

Ալիքվում էր երգը վետ-վետ,
Փարզում նազող այգիներին,
Համբուրգում էր սիրով խորին
Հայաստանի վագերի հետ
Վրաստանի Ռածիթելին¹,

Նոնեշվիլու Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքը եզրափակվում է «Երգ եղբայրության» ոգեշունչ բանաստեղծությամբ, որը ասես Հանրագումարում է հեղինակի մինչ այդ արտահայտած խոհերն ու հուզերը, վերջակետ է դրում առանձին-առանձին գործերից կազմված, սակայն մի ընդհանուր, եղբայրության լեյտմոտիվով միացած ստեղծագործություններին:

Հայաստանին և Հայ ժողովրդին, երկու դրկից ազգությունների փոխհարաբերություններին են նվիրված Շ. Ավիտահեծի «Հայաստանին», Մ. Մրկվիշվիլու «Հյուրերն ու տանտերերը», Ա. Աղամիալի «Հայունու տեսրում», «Բաշինչաղյանի նկարի առաջ», Ն. Նադիրաձեի «Հայունուն», Կ. Բորոխիձեի «Մեր Թրիլիսին», Զանգուլաշվիլու Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքը:

1 Խոսիր Նոնեշվիլի, Հայաստանում, Երևան, 1955, էջ 29,

երկու հոգեհարազատ ազգերի բարեկամությունը երգելու համար թարմաշունչ, նախատիպը շունեցող պատկերներ է ընտրել բանաստեղծուհի Մ. Մրկվիշվիլին. վրացունու մոտ օտարերկրյա հյուրերի պատվին խնջույք է կազմակերպված, որին մասնակցում է երևանից հյուր եկած հայունուն և իր ոգեշունչ պարով զարդարում այդ ուրախությունը Օտարերկրացիները հայունուն ընդունում են տան-տիրոջ տեղ: Բանաստեղծուհին դիմելով հայունուն, ասում է.

Չէի՞ն սխալում, տանտեր էինք մենք հավասարապես կանգնած հնուազոր հյուրերի դիմաց՝ մենք զգում էինք՝ Որ մեր թիկունքում կա երկիր մի մեծ, մի ծովլ հայրենիք, Որ հզոր մի տան զավակներ ենք մենք՝ թե դու և թե ես¹:

Ն. Նադիրաձեն «Հայունուն» բանաստեղծության մեջ սրտահույզ տողեր է նվիրաբերում Թթիլիսիում ծնված ու մեծացած հայ աղջկան, որը շնայած չի տեսել նահրյան երկրի արևը կենարար, բայց այնուամենայնիվ աճել ու հասակ է առել ազատության մեջ, քանի որ Վրաստանի երկինքն էլ է զարդարված նույն արեւով ու աստղերով.

Հետո, ի՞նչ կա որ... մեր սուրբ երկինքն էլ
Պահպաժ է նույն արև, աստղերով,

1 «Ալվետական գրականություն և արվեստ», 1953, № 8,
էջ 130:

Եղ ժաղկանցներ, անթիվ ժաղիկներ՝
Դրախտի մուտքը բացել են ինչնորդ 1:

Ժողովուրդների իրավահավասարության և եղ-
բայրական համագործակցության գեղարվեստա-
կան վերարտադրումը այսօր ձեռք է բերել համաշ-
խարհային նշանակություն։ Խուսաստանի ժողո-
վուրդների բարեկամությունը կոփել ու ամրա-
պընդել է արտաքին ու ներքին թշնամիների դեմ
մղվող հերոսական ուսուլուցիոն պայքարի տարի-
ներին, բաղաքացիական պատերազմի մարտերում,
սոցիալիզմի կառուցման համատեղ աշխատանքում
և, վերջապես, Հայրենական Մեծ պատերազմի
պատմական մարտերում։ այն շարունակում է զար-
գանալ և ամրապնդել նաև ներկայումս։ Զարգաց-
ման բոլոր էտապներում իր բոլոր արտահայտու-
թյուններով ու ձևերով այն իր վառ գեղարվեստա-
կան արտացոլումն է գտել Սովետական Միության
ժողովուրդների, այդ թվում նաև վրաց ժողովրդի
արվեստի և գրականության մեջ։

Տալով Սովետական Միության ժողովուրդների
աշխատանքային մարտական ծրագիրը, Կոմունի-
տական պարտիայի XXI և XXII պատմական հա-
մագումարները մեկ անգամ ևս ընդգծեցին, որ Սո-
վետական Միությունը տարի է և առաջիկայում էլ

1 «Սովետական գրականություն և արվեստ», 1953, № 8,
էջ 148։

կտանի ժողովուրդների խաղաղ գոյակցության լե-
նինյան քաղաքականություն, պրոլետարական ին-
տերնացիոնալիզմի քաղաքականություն։

XXI և XXII համագումարների պատմական
որոշումները նոր խթան հանդիսացան ժողովրդա-
կան տնտեսության բոլոր բնագավառների, կուլ-
տուրայի, արվեստի, գիտության հետագա զարդար-
ման համար։ Պարտիայի ծրագրի կենսագործմանը
ծառայել և ծառայում է սովետական գրականու-
թյունը, որը կոչված է ուսուլուցիոն ավյունով դաս-
տիարակել և սովետական մարդկանց մեջ ամրա-
պընդել հայրենասիրության զգացմունքը, ամրա-
պընդել ժողովուրդների բարեկամությունը, օժան-
դակել խաղաղության գործին և խաղաղության լա-
գերի, սոցիալիզմի և դեմոկրատիայի հետագա ամ-
րապնդմանը, աշխատավորությանը դաստիարակել
ինտերնացիոնալիզմի և եղբայրական իրավահա-
վասարության ոգով։ Այդ գաղափարներին է ծառա-
յում նաև սովետական վրաց գրականությունը։
Վրաստանի գրուները և բանաստեղծները, շարու-
նակելով իրենց գեմոկրատ նախնիների լավագույն
տրադիցիաները, անկեղծ սեր ու համակրանք են
արտահայտում Սովետական Միության ժողովուրդ-
ների, այդ թվում վրացիների մեծ և հնագույն բա-
րեկամ հայ ժողովրդի սկատմամբ։

Տիգրան Արշամի Կարապետյան

Վեաց գրական միտքը Հայաստանի և
հայերի մասին

Խմբագիր՝ Մ. Ս. Զավարյան
Հրատ. խմբագիր՝ Հ. Հ. Այվազյան
Նկարիչ՝ Հ. Մուրադյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Օն. Փանիկյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ի. Բրուտյան

1961-968

Վ. 05521

Պատվեր 305

Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 20/1 1962 թ.
Ստորագրված է տպագրության 3/11 1962 թ.
Թուղթը՝ $70 \times 92^1/32$, տոլ. 5,12 մամ. = 6,0 պայմ. մամ.,
հրատ. 5,4 մամ.,
Գինը՝ 32 կողմ.

Հայեական ԱՍԲ Կուլտուրայի մինիստրության Հրատա-
րակությունների և Պոլիգրաֆ արդյունաբերության
գլխավոր վարչության № 6 տպարան, Երևան,
Թումանյան փողոց № 51: